



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8978

891.99

6-58

1903

ВЕРХНИЙ ПУРГАЧ
МА ИЮЛ
Е. 2. 1904-1905
КОНТОРА № 17



ՅԱՐՈՒԹՅԱՆ ԵՍՏՅԵԼՆ

891.99

Ե-58

№: 9110
պ

ԿԵԱՆՔԻ ԲՕՄԱՆԻՑ

1001
840
91

Վ Ե Պ Ի Կ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսես Վարդանյանի

1903

Дозволено Цензуою. 18 Октября 1902 г. Тифлисъ



I

Համողութիւն, որդի, կամակոր մի լինիր, ասաց տիկին Գայեանէն, նրստելով պատուհանի մօտ և նայելով որդու այքերին, — մի հետևիր այժմեան անհնազանդ և ապեբախտ զաւակներին:

— Մայրիկ, արդեօք հասկանում ես, թէ ի՞նչ է խնդիրը, արդեօք խնդրի էութիւնը և խրթնութիւնն ըմբռնել ես, դարձաւ նրան Գրիգոր Պարտիզանը վրդովուած ձայնով:

— Ախր, որդի, ինչո՞ւ չես ուզում այնպիսի մի աղջիկ, գեղեցիկ, ուսեալ, հազարներով օժիտ, կայք, կարողութիւն. էլ ի՞նչ ես ուզում, միթե՞ աւելի բան կարելի է: Շատ շատերը ձգտում են այդպիսի մի բախտի, բայց չեն հասնում, և նրանք քեզ կը նախանձին: Բախտն իր ստով քո դուռն է եկել և դու ուզում ես նրան հալածել, հեռացնել. ոչ, ոչ, Գրիգոր Ղան, մտածիր լուրջ կերպով:

Գրիգորը ապշած հայնացքով նայում էր մօրը և գլուխը տարուբերում:

— Միթէ դրանք քո խօսքերն են, մայրիկ, գոնէ ես այդ հարցի վերաբերմամբ քեզանից այդպիսի կարծիք և բուռն ցանկութիւն չէի սպասում: Ուրեմն դու յորդորում ես, որ ամուսնանամ նիւթականի համար, որպէսզի հարստութիւն բերեմ տունս և ոչ թէ «կին—ամուսին», հա՛, հա՛, հա՛, ժպտաց նա դառն ժպիտով:

— Բայց դու ինչո՞ւ ես կարծում, որ վատ աղջիկ է, լաւ կին չի կարող լինել:

— Ներողութիւն, ես չեմ ասում, որ աղջիկը վատ աղջիկ է և չեմ էլ թոյլ տալ ինձ ասելու, քանի որ նրան ես մօտիկից չեմ ճանաչում, դու իմ ասածս չը հասկացար:

— Եթէ լաւ է, էլ ինչո՞ւ ես հակառակում: Ես արդէն կատարելապէս ճանաչում եմ «նրան» և գիտեմ նրա ամբողջ էութիւնը: Միթէ ես քո վատն եմ ցանկանում, որդի, չէ՞ որ ես քո ծնողն եմ, քո մայրը, շեշտեց տիկին Գայեանէն:

— Մայրիկ, քեզ մի հարց տամ և դրանով գուցէ խնդիրը հեշտութեամբ լուծուի. ասա խընդրեմ, ի՞նչ է ամուսնութիւնը, հարցրեց Գրիգորը, ուղղւելով աթոռի վրայ:

— Կա թի՞նչ հարց է, ես երեխայ եմ, թի՞նչ է, չէ՞ որ ես ամուսնացել եմ, գիտեմ թէ ի՞նչ է. ուստի աշխատում եմ քո ամուսնութիւնը լինի բախտաւոր, կինդ լինի մեծ ընտանիքի զաւակ, անու-

նով, փողով, — մի խօսքով ամեն բանով լաւ, որ ուրիշները մեզ երանութիւն տան:

— Մայրիկ, ամուսնութեան հիմքը փողը, երանութիւնն և անունը չեն կազմում, այլ սէրը և բնաւորութեանց համապատասխան լինելը. ես չեմ սիրում քո ասած օրիորդին և չեմ էլ ամուսնանայ նրա հետ. ահա իմ վերջին և առաջին խօսքս, խնդրեմ այսուհետեւ այս խնդրում ինձ հանգիստ թողնես: Թող ո՛չ ոք չը խառնուի ամուսնութեանս հարցում, թող «մօտիկուհիները» իզուր կօշիկ չը մաշեն մեր տուն գալով, ասաց Գրիգորը վճռականապէս, ձեռքը սեղանին զարկելով:

— Ինչպէ՞ս, այդ ինչ ասացի՞ր, սէրն ի՞նչ բան է, աղջիկների հետ փսփսոցն ու լկտի հանաքները, ծածուկ տեղեր ման գալը, հա՛, կամ թէ առանց ծնողների գիտութեան, իրար խօսք տալն և նշանուէլը: Միթէ դու էլ այդպիսի մարդ ես, այդպիսի ձգտումներ կան քո մէջ: Սիրունեանն է քեզ խելքից հանել, կաշկանդել, ուրիշ ոչինչ: Ուրեմն այդ նպատակով էիք գիշեր ցերեկ տեսնում, փրսփրսում, ու ձեզ ու ձեզ էլ նշանուէլ էք. երանի՛ ինձ էլի՛. չէ, չէ, ես քեզ այժմեանից ասում եմ, մըտքիցդ հանիր այդ բանը, եթէ ոչ հետեանքը վատ կը լինի:

— Մայրիկ, և այդ կարծիքները դո՞ւ ես յայտնում, դո՞ւ, որ փոքր ի շատէ կրթութիւն ունիս, շատ տարօրինակ բան է:

— Այո, ես եմ ասում, ես երբէք չեմ թոյլ

տալ, որ իմ բարձրագոյն կրթութիւն ստացած որդուս տունը մտնէ և կին դառնայ մի աննշան, մի խեղճ մարդու աղջիկ, անփող, քաղցած և այն էլ առանց ուսման, ասաց մայրը ձայնը բարձրացնելով և վերջին բառերը սաստիկ շեշտելով:

— Մայրիկ, մայրիկ...

— Այս է իմ համոզմունքս և կամեցածս: Եթէ դու չես գնահատում քեզ, չը գիտես քո պատիւը, ես պէտք է քեզ հասկացնել և զգալ տամ, շարունակեց տիկին Գայեանէն, ձեռքը թափահարելով:

— Մայրիկ, ես գնահատում եմ Համասփիւռի վարքն ու բարքը, բարոյականութիւնը, պարկեշտութիւնը, որոնք աղջկայ ամենամեծ արժանիքներն են կաղմում: Նա կը լինի օրինակելի անտեսուհի, և աղնիւ մայր. աղնիւ ոգով կը մեծացընէ իր զաւակներին. ահա իմ ցանկացածս և ընտրեալս:

— Դու չափիր, ձեւիր և կտրիր, եղաւ էլի... Ուրեմն ես ոչինչ եմ, հայրդ ոչինչ է, քեզ համար ծնող չը կայ էլի, ուրեմն ես իզուր քեզ պահեցի, մեծացրի ու ուսման տուեցի:

— Մայր իմ, ես չեմ ուրանում քո մայրական անկեղծ խնամքդ դէպի քո որդիքդ, բայց այդ չէ նշանակում, որ դու մայր լինելով հանդերձ, պէտք է բռնանաս իմ ինքնօրոյն և անհատական համոզմունքներիս. դա սոսկալի է...

— Ափսոս իմ կաթիս, որ քեզ եմ տուել և

անուցել որդի, ափսոս: Դու ուզում ես բոլորովին սանձարձակ և ինքնագլուխ մարդ լինես: Դու մեզ ամբողջ աշխարհի ծալրի առարկայ կը շինես, երբ ամենախեղճ մարդու աղջիկ առնես: Չակատագիրս է երևի, ասաց տիկին Գայեանէն հոգոց հանելով:

— Ցաւում եմ, մայրիկ, որ այդ հասկացողութեան տէր ես, ասաց Գրիգորը և վեր ելնելով ասթոռից, սխեց շրջել սենեակի մէջ:

— Դու ստում ես, որ լաւ աղջիկ է օրիորդ Սերունեանը, հապա նա որ լաւ լինի, ինքն իրան առանց իր ծնողաց գիտութեան, ինչպէ՞ս կարող է նշանուել, խօսք տալ: Իզուր չզգուշացրեց ինձ քո ընկեր Սերեօժան:

— Ի՞նչ կայ, հարցրեց Գրիշան կանգնելով:

— Ոչինչ, հարցրու քո ընկերներին, — Սերեօժին, մի՞թէ նա քեզ ոչինչ չէ ասել Համասփիւռի մասին: Նա որ պարկեշտ աղջիկ լինի, գիշեր ցերեկ կընկնի՞ պարոնների հետ, կը գնան նրանց հետ ամեն տեղ զբօսնելու: Նրան առնող մարդը պէտք է նախօրք համոզուած լինի, որ իր կինը իրանից զատ ուրիշ ամուսիններ էլ կունենայ:

— Ո՛հ, ի՞նչպիսի ստոր զրպարտութիւններ այն անմեղ արարածի մասին, ասաց Գրիգորը գէմքը խոժոռելով և հայեացքը ձգելով մօր աչքերին, կարծես սպասելով, որ մայրը ներողութիւն խնդրէ այդ խօսքերի համար:

— Եւ ասողը Սերեօժան է, հարցրեց նա վըշ-

տացած. իմ ընկեր Սերեօօթան, այդ աղնիւ ճանա-
չածս տղան, գուցէ...

— Այո, երէկ նա եկել էր մեզ մօտ, լսելով
որ դու արդէն ինքնազլուխ նշանուել ես այդպիսի
մի անարժանի հետ:

— Ո՛հ, ստոր և քսու արարած, հառաչեց
նա բռունցքները սեղմելով և տեղից վեր կենալով:

— Ոչ, նա ստոր չէ, նա շատ բարի ու ազնիւ
տղայ է, որ քո լաւը ցանկանալով ինձ յայտնեց
այդ բանը. եթէ նոյն իսկ նա չստէր էլ ինձ Հա-
մասփիւռի ինչ լինելը, ես թող չէի տալ մի այդ-
պիսի հասարակ աղջիկ մեր տուն ոտք դնէր, չէ:
չէ, և երբէք, հասկանում ես:

— Բարեբախտաբար մտնելու է:

— Երբէք, ես իբրև ծնող հրամայում եմ քեզ
թողնել նրան և առնել առաջարկածս աղջիկը:
Եթէ խելօք և հնազանդ որդի ես, լսիր, իսկ եթէ
ոչ, թքած քո ուսման վրայ էլ և քեզ վրայ էլ,
յետոյ ես գիտեմ թէ ինչ կանեմ:

— Մայրիկ, աղաչում եմ, մի ստիպիր, մի
տաղտկացրու իմ կեանքս, հասկացիր, որ ամուս-
նութիւնն ոչ մայր է հարցնում, ոչ հայր, ոչ բա-
րեկամ, ոչ չարակամ: Կինը ինձ համար պէտք է
բերեմ և ոչ քեզ: Ես նրան ճանաչում եմ շատ
լաւ: Ինչո՞ւ ինձ չես հաւատում, այլ հաւատում
ես այդպիսի քսուներին և նախանձոտներին: Ձէ՞
որ ես իմ դժբաղաութիւնս չեմ ցանկալ: Գու
իմ մայրն ես, իմ մեծը, ես քեզ յարգում եմ և

սիրում եմ իբրև ծնողի և այն էլ բազմավաստակ
ծնողի. ես մինչև իմ վերջին շունչս հնազանդ կը
լինիմ քեզ, կը կատարեմ իմ որդիական պարտա-
կանութիւնները, միայն թէ մի բռնանար համոզ-
մունքներիս և ձգտումներիս:

— Իմ գլխաւոր ցանկութիւնս է, որ թողնես այդ
աննշան Համասփիւռին և առնես հարուստ աղջի-
կը, միայն այն ժամանակ քեզ կը կոչեմ հնազանդ
զաւակ, կրկնեց տիկին Գայեանէն, ամեն մի բառը
առանձին-առանձին շեշտելով և ձեռքը զարկելով
աթոռի գլխին:

— Ձեմ կարող մայրիկ, պատասխանեց Գրիգո-
րը դրականապէս:

— Շատ լաւ, ուրեմն ես գիտեմ, թէ ինչ կա-
նեմ. կօնսիստօրիալից ամուսնութեանդ իրաւունք
վերցնելու յոյս չ'ունենաս: Մայրն իրաւունք ունի
որդուն մինչև մահ սանձահարել և հրամայել, ա-
սաց տիկին Գայեանէն և արագութեամբ դուրս
ելաւ, դուռը ուժգին զարկելով:

Գրիգորը երկար լուռ մնաց և նայելով մօր
յետեից, գլուխը շարժեց:

— Ի՛նչ է նշանակում թերուս լինել, խօսեց նա
ինքն իրան լսելի ձայնով: Պարծենում է, որ ծնել է
մեզ և սնուցել, կարծես դա մի գերբնական բան
է. անբան անասունն էլ իր ձագերին ամենայն հո-
գատարութեամբ սնուցում է և մեծացնում: Իսկ
մենք բանական մարդիկ ենք: Ես ուսում եմ առել,
կրթուել և ուսումս ինձ ներշնչել է ծնողներիցս տար-

բեր աշխարհայեացքներ ձգտումներ, համոզմունքներ, իդէալներ, և ես պէտք է դորձեմ ըստ նոցա: Հին հասկացողութեան տէր մարդիկ, նոյնպէս և մայրս, իրանց նահապետական խակ և ժխոր հասկացողութիւններով հակառակում են մեր դորձերին և աշխատում են կաշկանդել մեզ ամեն կերպ: Օրինակ, հենց մայրս-ամուսնութեանս խնդրում: Նա չէ ընդունում սէր և բնաւորութեանց համակերպութիւն, և ուզում է փողով ու բաժինքով աղջիկ առնեմ, թէկուզ նա լինի տղէտ, արատաւոր, անպարկեշտ: Որովհետեւ «մայր» է, հրամայում է— իմ համոզմունքիս հակառակ քայլ անեմ, սպիտակին սև ասեմ, հը՛ր, հը՛, թնչ փթած հասկացողութիւն:

Նա ակամայից ժպտաց և միջանի ըստէ լռեց, խորասուզւելով մտածմունքների մէջ: «Ոչ, ոչ, չեմ կարող, ես ընդունում եմ սէր և ունեմ սիրոյ իդէալ. թող սրա նման մայրերն անուանեն ինձ անհնազանդ, ապերախտ որդի, թող անուանեն սանձարձակ, չեմ կարող սէրը չընդունել ամուսնութեան հիմնաքարը և ղեկավարող կեանքի քաօսում. չեմ կարող իմ սրտիս միակ ընկեր Համասփիւռի թողնեմ: Բայց դու, խարդախ ընկեր, ինչո՞ւ էիր կեղծում մինչև հիմա, ինձ ընկեր ձևտնալով. ինչո՞ւ էիր քո պիղծ երեսդ և դարձ ներքինդ քօղարկել ազնւութեան վեհ քօղով: Կու նախանձից դըրդուած վատաբանում ես իմ պաշտելի էակին. քո տրփանքից և հրապուրանքից դրդուած կենակոր-

ծան որոմներ ես ցանում իմ կեանքի ուղիւմ, ուզում ես սէրս դրամա դարձնել: Ո՛չ, չեն լաջողուիլ քո այդ դաժան միտումներդ: Ո՛չ, ո՛չ, քո որոգայթներդ չեն խախտիլ իմ և Համասփիւռի սիրոյ քարը: Ես երջանիկ պիտի լինեմ և ապրեմ միմեայն նրանով... ասաց Գրիգորը և արդէն հօգեպէս սաստիկ վշտացած, կնճռոտուած, գլխարկը վերցրեց և դուրս գնաց ասնից:



II

Գրեգոր Պարտիզեանը մի նորաւարտ փաստաբան էր. նա արտաքինով վերին աստիճանի համակրելի էր և ազդեցիկ, նրա հասակը բարձր էր, թիկունքները լայն և կուրծքը դէպի դուրս, կազմուածքը առողջ էր և սոկուն:

Նրա կրակոտ աչքերը, կամար ունքերը, կարմիր թշերը և սև մազերը շատ օրիորդներին սրտերը գաղտագողի կրակ էին ձգել և հանգստութիւնը խլել: Շատերն արդէն իրանք իրանց փեսայ էին ընտրել նրան:

Ընտանեկան դրութեան կողմից նա այնքան էլ բախտաւոր չէր: Նրա հայրը ծեր էր և անգործ, նիւթական միջոցներից զուրկ: Չը նայելով դրան, Գրեգորը շնորհիւ իր ջանասիրութեան և սոկունութեան աւարտում է գիմնագիան: Նա ուսումնարան յաճախելով հանդերձ, պարապում էր միքանի աշակերտների հետ և այդ դասերից վերցրած փողով թէ ընտանիքին էր օգնում և թէ իր ուսման վարձը տալիս: Բայց նա կանգ չէ աւնում այդ կէտի վրայ. նա ունենում է ուսման սաստիկ ծարաւ, կրթութեան տենչանք և ընդունակութիւն: Շատ այս ու այն կողմ ընկնելուց յետոյ, վերջապէս գտնում է մի բարերար, որի միջոցով և շարունակում է ուսումը: Մայրը շատ է աշխատում որդուն համոզել աստուածաբանութեան

ճիւղն ընտրելու և հոգևորականութեան պատրաստելու, բայց Գրեգորի մէջ այդ ձգտումը չը կար: Նա մտածում էր ընտրել մի այլ ասպարէզ, որտեղ նա կարողանայ ծառայել ընդհանրութեանը, և որոշում է իւրիստ դառնալ: Ոսկէ մեղալով աւարտելով քսան և երեք տարեկան հասակում, նա սկսեց գործել: Նա այնուհետև ջերմ պաշտպան հանդիսացաւ հալածեալներին, նեղեալներին, դատաւարտուած արդարներին, երբէք փող չը վերցնելով խեղճից, այրիից և կամ մշակներից — նրանց իրաւացի պահանջը և դատը տանելու համար: Նրա ապրուստը ունևորներից ստացած վարձատրութիւնն էր և այլ գրական աշխատանքների արդիւնքները, որոնցով չափաւոր կերպով պահում էր ծնողներին:

Մի խօսքով նրա սիրտը բաբախում էր միմեայն ժողովրդի համար, իր եղբայրների համար և հենց այդ պատճառով հազարաւոր մարդիկ գոհ էին նրանից, օրհնում և զովում էին նրա անունը և գործերը: Առաւօտից մինչև երեկոյ նրա առանձնասենեակը լի էր դիմողներով: Եւ նա առանց յոգնելու, առանց տրտնջալու և ձանձրանալու, ընդունում էր բոլորին, լսում նրանց խնդրը, բողոքը և օգնում թէ խորհրդով և թէ գործով:

Մի տարի էր, որ նա գործում էր և այդ մի տարում նա մեծ ժողովրդականութիւն էր ձեռք բերել: Նա չունէր շահասիրական և այլ

միտումներ, կամ, որ իր անունը դրուատեն, փառաբանեն, կամ իրան մատով ցոյց տան, ոչ և ոչ, այլ նա ներքին դրդմամբ, խղճի արգարութեամբ ծառայում էր ժողովրդին և հագեպէս բաւականութիւն զգում: Թէ ինչ կասեն իր ծանօթները և հակառակորդները որոնք միմիայն փողի համար էին գործում, դա նշանակութիւն չունի:

Պատահում էր մի անարդարութիւն և դիմում էին նրան. նա անմիջապէս քննում էր, թէ արդեօք, ո՞վ է մեղաւոր և բացէիբաց ասում. «Ոչ, սա ընդդէմ է մարդկային խղճին և բարոյական օրէնքներին»:

Երբեմն պատահում էր, որ չքաւոր արգար կողմը դիմում էր նրան, իսկ մեղաւոր, և միևնույն ժամանակ հարուստ, կողմը դիմում էր մի ուրիշ փաստաբանի, խոստանալով վերջինիս, որ եթէ սա իրեն՝ մեղաւորին արգարացնէ, կըստանայ միջանի հարիւր, նոյն իսկ հազար ըուբլի: Այսպիսի դէպքերում շատ պարզ է միւս փաստաբանի և կողմնակիցների տրամադրութիւնն ու որոգայթները դէպի Պարտիզեանը, որ անյողողդ կերպով կուրծքը և գլուխը դէմ էր անում արգարութեան համար: «Թող ինձ չը սիրեն, չ'նդունեն հազարաւոր չար մարդիկ և թունալից նետեր արձակեն վրաս, ես դարձեալ կը բողոքեմ անարդարութեան դէմ, բաւական է, որ ես գործում եմ իմ խոր համոզմունքով», ասում էր նա յաճախ ինքն իրան: Միևնույն ժամանակ նա

ընդարձակ պարտէզներով, ոչ քաղաքացիական և զինուորական բարձր աստիճանները պսպղուն հագուստով: Ինչո՞ւ, միթէ նա վճռել է կոյս դառնալ. միթէ՞ բնութեան հրաշալի տուրքը — գեղեցկութիւնը պէտք է թառամեցնէ աննպատակ կերպով: Ոչ, նա կոյս չէ ուզում դառնալ, և նրա մտքովն անգամ չէ անցնում այդպիսի բան: Նա իր սիրտը և իր ամբողջ էութիւնը դեռ միջանի տարի առաջ նուիրել է մէկին, որին միայն արժան է գտել. և այդ ընտրեալը Գրիգոր Պարտիզեանն էր: Նրանք արդէն երկուսն էլ միմեանց հասկացել էին, կարգացել էին իրար սրտերը, և մնում էր նրանց սիրոյ բռնկումն ու ձևական բացատրութիւնը: Նրանք գիշեր ցերեկ մտածում էին միմեանց մասին, և անհամբեր սպասում երջանիկ սպագային...

1001
048



III

Հայա Սերեօժա Խաւարեանը: Միայն գօգօլեան բազմաթիւ տիպերի մէջ կարելի է գտնել նրա տիպը: Նրա փալլուն և բացառիկ խորհրդաւորութիւն պարունակող աչքերը, կարծես, նրա ներքին աշխարհի հայելիներն էին: Շատ դժուար է նրա իսկական խարակտերիստիկան տալը: Եթէ նա լինէր գրական ոմն, կարելի էր նկարագրել, եթէ լինէր բացասական տիպար, նոյնպէս կարելի էր, բայց նա ոչ գրական տիպ էր և ոչ բացասական: Նրա բարձր անճոռնի հասակի վրայ ամբացած էր գանգրահեր մեծ, բայց դատարկ գլուխը, որպէս Նոյեան տապանը Մասսի գլխին: Երեսի անդուր և նորածիլ շէկ բեղերն ու միրուքը «պարիկմախէրների» պատուհաններում դրած մօմից ձուլած և կեղծ մազերով կպցրած արձանն էին յիշեցնում: Հազնւում էր շքեղ և մաքուր, գլխին կօլօր շապօ, աչքերին պէսննէ, ձեռքին բարակ ձեռնափայտ և ոտներին դեղին արագազնացներ: Հայա նրա քայլերը փողոցում, — կուրծքը դուրս ձգած, գլուխը բարձր, հպարտ նայուածք, այնպէս որ պատահող անծանօթը կարծում էր, թէ նա արտասահմանից եկած մի ջէնտլիմէն պարոն է, որ հետաքրքրուելով Կովկասով, եկել է ճանապարհորդելու: Նա աւարտել էր քաղաքային երկդասեան դպրոցը և ապա մտել կեան-

քի համալսարանը, որտեղ, դժբախտաբար, ամենալեաին ուսանողն էր: Բայց երևակայեցէք, որ նա իր վրայ շատ մեծ համարումն ունէր, և աշխատում էր ամեն տեղ իրան մեծ ոմն ցոյց տալ: Եւ չը կարծէք, թէ չէր յաջողւում նրան այդ, ոչ, ընդհակառակը, նա ընդունակ էր դիմակներ ծածկելու:

Հաշուապահական կոչումով նա ծառայում էր մի շահասէր և խարդախ վաճառականի մօտ: Եթէ հարցնէիք, թէ որքան էք ստանում «ամսական», նա ձեզ կասէր 98 ռուբլի, մինչևդեռ ստանում էր 20 ռ.: Լինում էր մի բարենպաստակ ձեռնարկութիւն, պ. Սերեօժան անդամ է, լինում էր ժողովրդական ներկայացումներ, Սերեօժան կարգապահ է: Անդամ էր նոյնպէս և ճարպիկ գործիչ գայլթաղեկցնելում կամ միքանի կոպէկի համար արդարներին դատապարտելում: Մի խօսքով քիթը ամեն բանի մէջ կոխում էր: Նա անգիր էր արել մեծ գրողների միքանի Փրագներ, այն էլ լսելով սրանից նրանից. միշտ վիճաբանութեանց ժամանակ, լինէր դա թէ քննադատութիւն որևէ գրքի կամ երևոյթի, լինէր դա կարծիք մօթալի փթի արժէքի մասին, թէ ստամոքս մտնող կերակրների բազմանշանութեան մասին, կամ կրքերի զգացականութեանց բաւականութիւն տալու մասին, կրկնում էր այդ ֆրագները, առանց խորութեան: Նա վերին աստիճանի ընկերական էակ էր ձևացնում իրան: Ծանօթանում էր մի պարոնի հետ, մտեր-

մանում, նրա գաղտնիքներն իմանում և ապա կամաց կամաց իր երեսի դիմակները ցոյց տալով «խարդախ և կեղծ ընկեր» անունը լիշատակ թողնելով, բաժանուում, բայց և եթէ իմանաք, թէ նա որպիսի մեծ և ջերմեռանդ երկրպագու էր դէյրաններին. իր ամբողջ էութիւնն իսկ պատրաստ էր զոհելու մի ղեղեցկուհու հետ զէթ միքանի ըսպէ գուարճանալու համար. իսկ բարոյականութեան և պարկեշտութեան մասին խօսելիս ոտները գետնին զարկելով գոռում էր. «Մատաղ սերունդը չ'պէտք է փշանայ, ապականուի բարոյապէս: Նա զիտէր վերին աստիճանի պօլիտիկօրէն վարուել իգական սեռի հետ, որսալ նրա քաղցր խօսքերը, ժպիտները, գովասանքները: Մի բան միայն, ըստ իր, պակասում էր նրան, դա էր — ղեղեցկութիւնը: «Եթէ ես գեղեցիկ լինէի, ամենաերջանիկ մարդը կը լինէի աշխարհում» ասում էր նա յաճախ:

Նախանձը, քսութիւնը և երկերեսութիւնը իրանց արմատները խորը տարածել էին Սերեօժայի կրճքի տակ: Եթէ տեսնում էր մի որևէ շրջանում, որ ընկերներից մէկն աւելի համակրանքի արժանացաւ ընդհանրութեան կողմից, կամ գեղեցիկ օրիորդներից, որոնք միմիայն նրանով են հետաքրքրւում, անմիջապէս գրգռւում էր նրա չար նախանձը և պատրաստ էր վայրկենապէս ստորացնել, մըջիւն դարձնել ընկերոջը բոլորի առաջ, որպէսզի ինքը բռնէ նրա տեղը, բայց ամօթը և իր սկզբից բռնած դիրքը չէին ներում և թոյլ տալիս: Մի

խօսքով Սերեօժա Խաւարեանը մի ամբողջ դրական տիպ կը լինէր, եթէ ամբողջովին բացասական չը լինէր: Եւ նա ինչպէս կարող էր տանել, որ օրիորդ Համասփիւռ Սիրունեանն արհամարէ իրան, և սիրէ Պարտիզեանին: Ոչ, անկարելի է, մի՞թէ ինքն այդքան անարժան է, որ չը նայած իր բազում ջանքերին Համասփիւռի ուշադրութիւնն իր վրայ դարձնելու, շի կարողանում, և քանի աւելի ձգտում է գէպի նա, այնքան աւելի Համասփիւռն արհամարում է նրան և ձգտում դէպի Պարտիզեանը: Առաջին օրինակն է, որ մի օրիորդ չէ ընկնում Սերեօժայի գալթակղութեան ցանցը և խուսափում է:

Սերեօժա Խաւարեանը և Գրիգոր Պարտիզեանը մի տարուայ ընկերներ էին. նրանք ծանօթանալով միմիանց հետ, հետզհետէ մտերմացան: Պարտիզեանն սկզբում չը կարողացաւ ըմբռնել նրան: Սերեօժան մի տարուայ ընթացքում ծանօթացաւ նրա լաւ և թոյլ կողմերի հետ, կարողացաւ իմանալ նրա նուիրական գաղտնիքներն և այնուհետև յարմարւում էր նրան ամեն ժամանակ, չ'աշխատելով վնասել նրան, որովհետև ինքն աւելի օգտւում էր նրանից:

Բայց երբ Համասփիւռի և Գրիգորի սրտերը շաղկապւեցան, նա այլ ևս չը կարողացաւ համբերել, մանաւանդ որ արդէն Գրիգորը պարզ յայտնեց այդ բանը Սերեօժին՝ իբրև անվնաս ընկերօջ: Միամիտ սիրահար: Գարշ նախանձը և կիրքը

բորբոքեցիր: «Միթէ այդ քնքոյշ, գեղեցիկ արարածի տէրը Գրիշան պիտի դառնայ», մտածեց Սերեօթան, «միթէ այդ վարդագոյն այտերից Գրիշան պիտի քաղցր համբոյրներ քաղէ, հասկանայ: Ափսոս, որ Համասփիւռը շուտ խաբուողներէն չէ, թնչ անել, թնչ միջոց մտածել.— «Գտայ, գտայ, բացականչեց նա գէշ ուրախութեամբ», կարծես մի մեծ հանելուկ էր տուած նրան, որ երկար մտածելուց, երկար կնճռատուելուց յետոյ կարողացաւ վճռել.— «Կամուսնանամ նրա հետ, բայց ես իմ համոզմունքներէս չեմ դաւաճանի: Նա միայն տանը ինչ բաւականութիւն տուող կին կը լինի, իսկ դուքսը ես գիտեմ... այն էլ հանգամանքը կորոշէ»: Վճռուեց հարցը: Ընկեր, բարեկամ չէ լինելու այս բանում. ամեն միջոց առանց խտրութեան պէտք է գործադրէ այդ նպատակի համար: «Քանի անգամ պէտք է ծնուիմ, չէ որ մահկանացու եմ. կը մեռնիմ, էլ յետոյ ինչ ուզում է լինի, թող ես կեանքից կշտանամ, բաւականութիւն զգամ»: Խեղճ Գրիշա, դու հաւատացած ես, որ Համասփիւռը քոնն է, բայց ոչ, նա իմս է, իզուր մի ախորժակդ բաց անի»:

Այսպիսի մտածմունքներով և ծրագրներով էր զբաղուած Սերեօթան, նստած իր գրասենեակում, որ մէկը զանգահարեց: Նա վեր թռաւ և ընդունեց եկողին, գա Գրիգոր Պարտիզեանն էր...:

IV

Բարև Սերեօթա, ասաց Գրիշան ձեռք աւելով և ապա նստելով մօտիկ մի աթոռի վրայ:

— Ա՛հ, բարև սիրելիս, բարև, ինչպէս ես, լա՛ւ ես, բացականչեց Սերեօթան կեղծ ծիծաղով և իր սովորական գործածական «սիրելիս» բառով:

— Շո՛ւտ կը վերջացնես գործդ, հարցրեց Գրիգորը, հանելով ծոցից ժամացոյցը և նայելով:

— Սյո՛, այո՛, մի քառորդ ժամից կը վերջացնեմ, պատասխանեց Սերեօթան, նայելով իր ծոցի ժամացոյցին, — արդէն ժամի 7-ն է, բայց խօսիլ տեսնեմ, թնչ կայ, թնչ չկայ, մի տեսակ տխուր ես երևում կամ բարկացած, թնչ է պատահել, հարցրեց նա գրիչը դնելով սեղանին և աթոռը մօտ քաշելով, որպէսզի խօսակցութիւնը լսելի չը լինի դիմաց նստած միւս հաշուապահին, որ գլուխը կորացրած գրում էր:

— Կիմանաս շուտով, ասաց Գրիշան սառն և խորհրդաւոր տօնով:

Սերեօթան լաւ բան չը գուշակեց: Նա շփոթուեց, մի րոպէ նախազգաց. Գրիշայի բարկութեան պատճառը և տշխատեց չը ցոյց տալ շփոթութիւնն ու ասաց:

— Սիրելիս, կարգա այդ լրագրները, մինչև վերջացնեմ այս փոքրիկ հաշիւը: Գրիշան վերցրեց

սեղանի վրայ դրած մի ռուսերէն լրագիր և սկսեց աչքի անցկացնել: Սերեոժայի մտքերը խառնուեցան և նա միքանի սխալներ արեց, որոնց ուղղեց կարմիր թանաքով, շարունակ արտասանելով «Фы, чортъ поберя»:

Միքանի ըոպէից յետոյ նա վալը դրեց գրիչը, հաւաքեց հաշուապահական մատեանները, փակեց պահարանում և վերցնելով ձեռնափայտն ու գրութարկը, հրաժեշտ տուեց ծառայակցին և դուրս ելաւ Գրիշայի հետ: Մի երկու ըոպէ նրանք լուռ էին, երբ մտան մի հանդարտ փողոց:

— Իէ, ասա, տեսնեմ, սիրելիս, դարձաւ Սերեոժան Գրիշային, աւետի՞ք է, թէ վատ լուր:

— Արպիսի ալլակերոյ և անըմբռնելի է աշխարհս իր միլիոնաւոր բազմաթիւ արարածներով: Շատ շօշափելի երևոյթներ իսկ մեր աչքից թաղնըում են և կամ ալ կերպ պատկերանում: Երբեմն մարդ կոչուած արարածն անբան արարածից էլ ստոր է իր հակամարդկային միտումներով, ասաց Գրիշան միապաղաղ տակտիկայով:

Սերեոժան արդէն գլխի ընկաւ, թէ ինչո՞ւ համար էր այս անտկնկալ և խորհրդաւոր լառաջաբանը: «Մայրը յայտնել է սրան իմ ասածները, մտածեց նա, բայց հիմա ես ի՞նչ ատեմ, ինչպէ՞ս պաշտպանուեմ:

— Ձեմ հասկանում, Գրիշա, թէ ինչո՞ւ համար է այդ լառաջաբանդ, ինչ է նշանակում, ասաց նա միամիտ ձեռնալով և նայելով ընկերոջը:

— Ձես հասկանում, յարեց Գրիշան զլուխը շարժելով. եթէ չես հասկանում, շուտով կը հասկանաս: Բայց այդ նիւթի մասին փողոցում չի կարելի խօսել, եկ գնանք այգի կամ մեր տուն և այնտեղ խօսենք:

Սերեոժայի համար շատ ծանր էր լսել այդ մասին խօսելը, քանի որ զգում էր, թէ ինքը պէտք է պարտութիւն կրէ և Գրիշայի սուր նկատողութիւնը և յանդիմանութիւնը ստանալ:

— Այինչ, մինչև տուն գնալը կը խօսենք, ասիր, Գրիշա, շատ հետաքրքիր է, ասաց նա ձեռնափայտը գետին զարկելով:

— Այո, շատ հետաքրքիր է և կարևոր ասելիքս, բայց լաւ է գնանք այգի, այնտեղ խօսենք աւելի ազատ կերպով:

Նրանք ձիաքարշով գնացին Մուշտայիդ այգին, որտեղ երաժշտութիւնը նուազում էր և ժողովուրդը զբօսնում:

Միքանի պտոյտ գործելով ժողովրդի հոսանքի հետ, նրանք անցան ծառերի տակ և մի առանձին նստարանի վրայ նստեցան:

— Գու ինձ ընկեր ես, հարցրեց Պարտիզեանը Սերեոժային, շատ սառն կերպով և ուղիղ նայելով նրա աչքերին, կարծես, ուղեւալով կարդալ նրա սրտից բլիթած պատտօխանը:

— Ինչպէ՞ս թէ ես քո ընկերն եմ, դա ի՞նչ տարօրինակ հարց է, ես չեմ հասկանում, երևի,

մի թիւրիմացութիւն է պատահել, Գրիշա, որ վրդովուած 'ես:

— Այո՛, մեծ թիւրիմացութիւն է պատահել և ես ուզում եմ այդ թիւրիմացութիւնը ճշտիմացութիւն դարձնել, պատասխանեց նա, — դու միայն ասա, թէ դու իմ ընկերն ես արդեօք:

— Ե՛ս... ը՛ր. ե՛ս ի՛հարկէ քո ընկերն եմ, պատասխանեց նա կմկմալով և կասկածալի կերպով:

— Ո՛չ, դժբախտաբար, դու իմ ընկերը չես, այլ իմ նախանձոտ և բանսարկու թշնամին, ասաց Գրիշան ձայնը բարձրացնելով և երեսը թեքելով:

— Գրիշա, թիւն է պատահել, կատակ ես անում, ինչո՞ւ եմ քո թշնամիդ, խօսեց Սերեօժան կեղծ ինքնապաշտպանութեամբ:

— Այսքան ժամանակ ես քեզ չը ճանաչեցի, որովհետեւ դիմակ ունէիր, միայն վերջերս պարզ ցոյց տուիր քո իսկական էութիւնը. ցաւում եմ, որ ուշ է, ասաց նա յուզուելով:

— Եղբայր, թիւն ես ասում, ես ոչինչ չեմ հասկանում, պարզիր խնդրեմ, լետոյ նախատիր ինձ:

— Արդէն պարզ է քեզ ամեն ինչ, ինչ կարիք կայ պարզելու:

— Անկեղծ եմ ասում, որ ոչինչ չը գիտեմ:

— Դիմակը ընդմիշտ չի մնայ կայուն, վերջ ի վերջոյ կը պատուուի և կերևայ իսկական պատկերը, շարունակեց Գրիշան:

— Ի՛հարկէ, այդպէս է, ես համաձայն եմ:

բայց ո՞վ ունի դիմակ ծածկած, դու ո՞ւմ ես ակնարկում:

— Հենց դո՛ւ ինքդ, դո՛ւ, որ իբրև պարզ և հասկացող ոմն ձևացար, միայն քո դիմակի զօրութեամբ. քո մէջ չը կան մարդասիրական անկեղծ սիրոյ և յարգանաց զգացմունք. դու ընկեր ես բոլորին առանց խորութեան. բայց իսկապէս ոչ ոքի ընկեր չես, քոնը միայն կեղծ խօսքեր են, զանազան միտումներով, իսկ գործ—մի գրօշի արժէքի չափ անգամ ո՛չ:

— Գրիշա, քեզ խնդրում եմ ինձ մի վիրաւորիր, տեսնում եմ, որ հարողը լրջանում է, ասաց Սերեօժան, իբր թէ վիրաւորուելով:

— Բայց փաստը փաստ է, Սերեօժա, մի նեղանար, որ քեզ տալիս եմ քո պատկերը, դու ինքըդ իհարկէ գիտես քեզ, գիտես քո գործերդ, գիտես, թէ դու թիւն ես, ո՞վ ես: Ես դեռ առաջ էլ նկատում էի քո խօսքերիդ հակառակ գործեր, լսում էի, բայց չէի դատապարտում քեզ, որովհետեւ ամեն մէկս, առաւելապէս երիտասարդներս, հակումն ունինք դէպի վտոր, դէպի ըրպեական բաւականութիւնը, մի խօսքով դէպի յանցանքը. բայց երբ դա չափից ու սահմանից անցնում է, այն ժամանակ մարդ կոչւում է բացասական մարդ: Քո մէջ մինչև այժմ ես աւելի նկատել էի կրքին գերի լինելու գարշելի դրութիւնը, որի համար և շատ անգամ նկատողութիւններ եմ արել: Եւ ահա հենց քո կիրքը պէտք է դառնայ քո կործանման

պատճառը: Յիշիր այս խօսքերս քո կեանքի ընթացքում:

— Գրիշա, սխալում ես, ես ոչ նախանձոտ եմ և ոչ էլ կրքոտ: Եթէ ես այդպիսի վատ մարդ եմ, ինչո՞ւ առաջուց ինձանից երես չը դարձրիր:

— Արովհետեւ ես չէի ուզում հաւատալ, որ մարդիկ այդչափ ստոր կը լինին:

— Ես քեզ խնդրում եմ, ինձ մի վիրաւորիր, այսուհետեւ կտրիր քո յարաբերութիւններն ինձ հետ, ուրիշ ոչինչ: Ես ունեմ իմ պրինցիպներն, իմ համոզմունքները, ասաց նա արհամարական եղանակով:

— Թողնենք ամեն ինչ և դառնանք բուն հարցին: Ասա խնդրեմ օրիորդ Համասփիւռ Սիրունեանը ինչպիսի աղջիկ է:

Սերեօժան աւելի շփոթուեց և կարմրատակեց: Նա այլ ևս ոչնչով չէր կարող արգարանալ և հակաճառել, քանի որ ամեն ինչ պարզուել է: Նա պարտատ էր այդ բոլորին մի կերպ թողնել և հեռանալ նրա մօտից, բայց անհնարին էր բանակը ուրից խուսափելը, պէտք էր հակաճառել և պաշտպանուիլ:

— Օրիորդ Համասփիւռը, ըն՛ը, ասաց Սերեօժան ծանր արտասանութեամբ և միևնոյն ժամանակ հանելով ծխախոտ և վառելով.— օրիորդ Համասփիւռ Սիրունեանը լաւ օրիորդ է:

— Եւ դու անկեղծ կերպով ես յայտնում այդ կարծիքը:

— Այո՛, պատասխանեց Սերեօժան, ծուխը բերանից դէպի վեր թողնելով և ոտը դնելով ստի վրայ:

— Ուրիշ ոչինչ:

— Կարծեմ, որ դու և նա սիրահարուած էք միմեանց հետ:

— Կարծում ես միայն:

— Ըն՛ը, այսպէս ասած, հաստատ զիտեմ:

— Հապա ինչո՞ւ ես դու մօրս ասել, որ օրիորդ Համասփիւռը փչացած աղջիկ է, յորդորել ես, որ նա խոչնդոտ հանդիսանայ մեր սիրուն:

— Ո՛վ, ո՛վ, ես, կրկին կարմրատակելով ասաց Սերեօժան, սուտ է, սուտ է:

— Մի ուրանար, Սերեօժա, հենց մայրս ինքն ասաց. ամօթ քեզ, ամօթ և հազար ամօթ:

— Ի՛նչ, դա, որ ասացի թէ թիւրիմացութիւն է տեղի ունեցել, ասաց Սերեօժան անհամ ժպտով, ուղենալով ցոյց տալ, որ ինքը բոլորովին չի շփոթւում, մեղաւոր չէ զգում իրան, այլ իսկապէս թիւրիմացութիւնն է պատճառ Գրիշայի վըրդովման:— Անցեալ օրը, երբ եկայ ձեր տուն, և տանը չէիր, սարսեցի քո գալուն: Մայրիկդ խօսում էր քո մասին և ես ուղեցի մի փոքր խօսեցնել նրան,— կատակ անել. բայց նա լուրջ է ընդունել ասածներս. հը՛, հը՛, հը՛, ծիծաղեց նա:

— Ո՛չ, ո՛չ, կատակ չէ, այլ քո սրտից բղխած: Գիտեմ, թէ ինչն է ստիպել քեզ այդ քայլն անելու. պարզը կասեմ, առանց երկիւղի և ամաչելու:

Համասփիւռի գեղեցկութիւնն է քեզ հրապուրել. քո կիրքը բռնկել է և դու անսպառնառ ցանկանում ես ձեռք ձգել նրան, բայց իզուր, շատ իզուր: Խնդրում եմ քեզ, որ թողնես նրան հանգիստ:

Ճշմարտութիւնը պարզուեց. Սերեօթան զգաց իրան լաղթուած: Նրա աչքերի արտայայտութիւնը փոխուեց, գոյնը սկսեց դեղնել, շրթունքները դողդողացին: Բայց և այնպէս վերջին փորձն էլ փորձեց ինքնապաշտպանութեան համար:

— Ա՛յ, Գրիշա, ինչո՞ւ ես ասում, որ ես կիրք եմ տածել դէպի նա և ոչ թէ յարգանք, դու այդ կէտում շատ սխալ ես, ասաց նա:

— Յարգանք, հեգնեց Պարտիզեանը, ամօթ է, ամօթ. մի սուտ խօսիր: Չէ՞ որ քանի օր առաջ փորձ ես փորձել օրիորդ Համասփիւռին կեղծ սէր առաջարկելու և արժանանալու նրա ուշադրութեանը. բայց նրա կողմից միմիայն նախատինք է եղել, որև քեզ աւելի զրգուել է: Եթէ ես հաւատացած լինե՞մ, որ դու նրան սիրում ես անկեղծ կերպով, սուրբ սիրով և ոչ թէ մի համբոյրի համար, պատրաստ եմ խեղդել իմ մէջ սէրս, դէպի նա. բայց ցաւօք սրտի, այդպէս չէ:

— Շատ լաւ, հիմա ինչ ես ուզում ասել դրանով, ենթադրենք որ այդպէս էլ է. օրիորդ Սիրունեանը թող քո կինը լինի, նրա նմանները շատ կան, ասաց նա խորհրդաւոր կերպով. և ոտքի կանգնեց, կարծես, պատրաստուելով զարկել նրան:

Գրիշան լուռ էր և միայն կատաղած աչքերով նայում էր նրան:

— Զատ լաւ, դու ինձ յանդիմանիր և հասիր նպատակիդ, յարեց նա սպառնալից ոճով և չը վերջացնելով խօսքը, շտապով թեքւեց ծառուղին և խառնուեց ժողովրդի մէջ:

Իսկ Գրիշան անթարթ աչքերով միքանի ըուպէ հետևեց նրան և մի խոր հոգւոց հանելով, գլուխը տարուբերեց:

Սրգէն մութ գիշեր էր: Նա վեր ելաւ տեղից և մտազբաղ՝ քայլերն ուղղեց դէպի տուն:



Վ

Միքանի օր այս դէպքից յետոյ Սերեօժա Աւելեանը մի ընթրիք սարքեց, որին հրաւիրել էր բացառապէս իր գաղափարակից մտերիմ ընկերներին: Օրը կիրակի էր: Երեկոյեան դէմ Սերեօժան առանց որեւէ ծախս խնայելու ուտելիքէն և խմելիքէն առատ պատրաստեց: Աւելի շատ էր առել կարմիր գինի, որ իր և ընկերների ամենասիրելի խմիչքն էր: Ճրագները վառելու ժամանակ սկսեցին հաւարուել «պատուական» հիւրերը: Ահա Ծ հոգի այլասեռ հագնուած երիտասարդներ, դեռ փողոցում բարձրաձայն հուհուարով և կատակներ անելով իրար բօթբօթելով դանդաղ քայլերով եկան, բարձրացան պատշգամբ և նստեցին այնտեղ: Փոքր ինչ յետոյ եկան չորս լաւ հագնուած երիտասարդներ հինգ օրիորդների հետ միասին: Պատշգամբը լցուեց հիւրերով. խօսում էին բարձրաձայն, ծիծաղում, երբեմն ընդհանուր առակներ ասում, երբեմն էլ միքանիսն առանձին, միւսներն առանձին: Սերեօժայի հայրն էլ, որ 50 ասրեկան՝ ձուկ վաճառող էր, եկաւ տուն արդէն լաւ տրամադրութեան տակ, ինչպէս ինքն ասում էր «ալիխանի չարեքանոցը կոնծած» և սկսեց իր միմոտութիւններով ու լիտի մասալէքով, որ իհարկէ հիւրերի սրտին մօտիկ էր, ուրախացնել նրանց: Սերեօժայի մայրը, որ թէյ էր պատրաստում ներսի սենեա-

կում, ինքն իրան ուրախանում էր: Միքանի ընկերացի յետոյ թէյ տրուեց բոլորին: Թէյը վերջացնելուց յետոյ նրանք մտան դահլիճ, որ երեք ճրագներով լուսաւորուած էր: Այստեղ երիտասարդներից մէկը, որ գիտէր նուագել գարմոնի վրայ, վերջրեց պատուհանում դրած գարմոնը և սկսեց նուագել: Օրիորդներից մէկն էլ վերջրեց դայրան: Սկսուեցին պարեր: Հենց որ լեզգինկա զարկեցին, Սերեօժայի հայրը թևերը բարձրացրեց և սկսեց պարել «լեկուրին»: Նա ալիօհօլի ազդեցութեան տակ պարում էր բաւականին աշխոյժ, աշխատելով իր ծամածուլութիւններով ծիծաղեցնել երիտասարդներին: Սերեօժան տեսնելով, որ հայրը կանգ չէ աւնում միւսներին հերթ տալու համար, մօտեցաւ և ինչ որ ասելով նրան, ձեռքից բռնեց ու քաշեց մի կողմ: Այնուհետև երիտասարդները հերթով մէջ ընկան և սկսեցին ամեն մէկն իր ոտների ճարպիկութիւնը ցոյց տալ: Նրանք պարում էին և պար ածում օրիորդներին: Միւսները մեծ եռանդով ու վայրենական աղմուկներով ծափահարում էին. առանց ամաչելու: Օրիորդներն էլ պակաս չէին մնում տղաներից: Նրանք պարում էին ամենայն սիրով և յոգնելով՝ նստում էին իրանց ամենասիրելի պարոնի մօտ ու յենուելով նրան, թաշկինակով հովհարելով, հաճոյախօսում էին: Սենեակը լցուեց փոշիով և ծխախոտի ծխով, որ չափազանց ծխում էին: Բայց ոչ ոք չէր զգում այդ և չէր խուսափում, որովհետև

նրանք սովոր էին այդպիսի փոշու, ծխի և նեխուած օդի: Միայն օրիորդներից երկուսը դէմքը սուտումուտ ծռմռելով իբրև վատ օդի պատճառով, դուրս ելան պատշգամբ, որոնց լեռեից հաւատարիմ թուլաների նման դուրս ելան չորս հոգի:

Սերեօժան, հայրը և մայրը սկսեցին սեղան բաց անել: Մինչ այդ, մեծ մասամբ խմբուած օրիորդների շուրջը զրցում էին և քրքրում: Երիտասարդներից մէկը, որ ձախ ոտով կաղ էր, ամենից աւելի էր ծիծաղեցնում և զբաղեցնում միւսներին: Սեղանը պատրաստուեց: Բոլորը շարուեցին շուրջը և սկսեցին մեծ ախորժակով վեր քաղել: Սերեօժայի հայրը նստեց, իսկ մայրը միւս սենեակում պատրաստում էր ուտելեղէնները, այնպէս որ նա բոլորովին չը մասնակցեց սեղանին: Վճռեցին օրիորդներին բաժանել իրար մէջ, այսինքն օրիորդները ոչ թէ իրար մօտ նրստեն, այլ խառն՝ երիտասարդների մէջ, որպէսզի նրանք հաւասարապէս զբաղեցնեն և զուարճանեն բոլորին:

— Պարոնայք, ոտքի կանգնեց մի երիտասարդ, որ հագած ունէր կարճ բաճկոնակ, կոճակներով զարգարուն: — Կաննէչնօ, կամպանիան պիտի ունենայ թամապա, ուրեմն նախ և առաջ ընտրենք թամաղայ, լետոյ քէֆ անենք: Նու, ես իմ կողմից ընտրում եմ Իէօրզուս, Իէօրզի ջան, за твое ЗДОРОВЬЕ, ուռն:

— Սերեօժան, Սերեօժան:
— Հայրիկը, հայրիկը, լաւ թամաղիայ կը լինի:

— Самъ, самъ, Сама, самъ, господа, լսուեցին այս ու այն կողմից բարձրաձայն, այնպէս որ Սերեօժի մայրը մի ձեռքին դանակ, միւս ձեռքին բողկ, ներս վազեց, կարծելով, թէ կռիւ ընկաւ հիւրերի մէջ:

— Սպասեցէք, տղերք, ոտքի կանգնեց կաղ երիտասարդը, լաւ կը լինի, հարցնենք օրիորդներին, նրանք ում որ ուզեն, մենք ընտրենք:

— Հն, հա, լաւ կը լինի:
Օրիորդները առամները բաց արած, երկուսը ցանկացան Սերեօժային, երեք հոգին Սաշային:

— Սաշա, Սաշա, տամաղիա, ուռն, ուռն:
Թամաղան արդէն ընտրուած էր: Նա փոքր ինչ լետոյ հրամայեց լցնել բաժակները և ոտքի կանգնելով, առաց:

— Господа, конечно, մենք այժմ հաւաքուած ենք Աւելեանների տանը և նրանց հացն ենք ուտում ու զինին խմում, այդ պատճառով այս բաժակը խմենք հայրիկի և մայրիկի կենացը, ողջ լինէք, մայրիկ, ցանկամ քեզ առողջութիւն և երկար կեանք, հայրիկ, ցանկամ քեզ յաջողութիւն, որ շուտ շուտ քէֆ անենք այսպէս ուրախ, ուռն:

— Ձեր կենացը, հայրիկ, մայրիկ:
— Ձեր կենացը, լսուեցին չորս կողմից:

Յանկարծ հայրիկը փքուելով կենացից, սկսեց
երգել խուպոտ ձայնով «պրովօժամիէ»։ Միւսները
էրանց դիսսօնանս գոռօցներով ձայն պահեցին։

Ուրախ էր անցնում ընթրիքը, առանց մի-
մեանցից ամաչելու, ուտում էին, խմում բաքոսի
երկրպագուները կարմիր գինին և հետզհետէ կա-
տարները տաքացնում։

— Սաշա ջան, գուռաց դիմացից կաղ Սիսակը։

— Հաջան, պրիկափի, ասաց թամադան։

— Սլավերդին քեզ մօտ է։

— Սլավերդին ինձ մօտ չէ, Նատաշկէն է ինձ
մօտ, պատասխանեց թամադան ծիծաղելով և
ցոյց տալով մօտ նստած օրիորդին։

Բոլորը ծիծաղեցին։

— Ն՛ու, ГОСПОДА, ГОТОВИТЬСЯ, НАПОЛНИТЬ
СТАКАНЫ, հրամայեց թամադան։

— Լաւ, հայերէն խօսիր, գիտենք, որ գիմ-
նազիի հինգ կլասեմէն ես դուրս եկած, ասաց ե-
րիտասարդներից մէկը կատակով։

— Գուս էկած կի չէ, դուս արած, խօսեց
մէկ ուրիշը, չէ, Սաշա։

— Հա՛, հա՛, վաւերացրեց Սաշան, չը լսելով
նրանց խօսածը։ Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ։

— Այս բաժակն էլ խմենք մեր ամենասիրելի
ընկեր Սերեօփի կենացը. ես ցանկանում եմ
նրան այն բանը, ինչ որ ես ու ինքը գիտենք, ա-
սաց նա և մի ակնթարթում լափեց բաժակի գի-
նին մինչև վերջին կաթիլը։

— Գիտենք, մենք էլ, գիտենք, ամեն, ամեն,
Սերեօփա ջան, խօ մենք էլ գիտենք, չէ, Աստուած
տայ, ասացին միւսները և կլանեցին գինին։

Սերեօփան, ոտքի կանգնած, մի ձեռքով բռնել
էր իր մօտ նստած օրիորդի ձեռքը, միւս ձեռքով
գինու բաժակն էր բարձրացրել և ժպտալով գլու-
խը թափահարում էր ի նշան շնորհակալութեան։

— Ի՛հհ, օրիորդներ, Սերեօփի կենացին, կա-
նչնօ, մի երգ դուք կը երգէք, ասաց թամադան
մէկ մէկ նայելով օրիորդներին, — Դէ՛հ, Հրանոյշ,
դարձաւ նա աչքովն նշան անելով։

Հրանոյշը Սերեօփի մօտ նստած օրիորդն էր։
Նա միջահասակ մօտ 16 տարեկան աղջիկ
էր։ Դէմքի գծադրութիւնները կանոնաւոր, աչ-
քերը փոս ընկած և կրակոտ, գոյնը սպիտակ, մա-
ղերը կարճ և խոպոպ, շարժուածքները կօկէտ-
կային։ Նա սիրալիբ հայեացքով նայեց Սերեօփային
և սկսեց «Գու չես հաւատում» երգը։

— Օրիորդները ձայնակցեն, օրիորդները մի-
միայն, հրամայեց թամադան, զարկելով դատարկ
շշին։

— Հաջան, հաջան, աղջկերք, յանկարծ գո-
ռաց Սերեօփի հայրը, ըստ երևութին օրիորդների
ձայնից դիւթուելով։

Երիտասարդների գլուխներն արդէն լիապէս
տաքացած էին։ Նրանք կրքոտ հայեացքներով
նայում էին երգող օրիորդներին, որոնց կողմից

արժանանում էին խորհրդաւոր քաղցր ժպիտներէ
և աչքերի շարժողութեան:

Երգն աւարտելուց յետոյ Սերեոթան, որ նոյն-
չափ հարբել էր, որչափ միւսները, ոտքի կանգ-
նեց, տրփանքով լի համբուրեց Հրանոյշի ձեռքը,
որ յօժարութեամբ թոյլ տուեց, և շնորհակալու-
թիւն յայտնելով, նստեց:

— Թուշը պաչի, Սերգօ, թուշը, ասաց հայրը
հրամայողական ձևով, սպաչի, ես դրա հոգուն մա-
տաղ:

— Սյո՛, այո՛, թուշը պաչի, աղաղակեցին մի-
քանիսը, ի միջի ալլոց և թամադան:

Սերեոթան անմիջապէս վրայ ընկաւ Հրանոյ-
շին, որ իբր թէ ամաչում էր, և լրբաբար համ-
բուրեց նրան:

— Անո՛ւշ, անո՛ւշ, օխա՛յ, օխա՛յ, կոչեցին բո-
լորը ծափահարելով:

Մայրը, որ այդ միջոցին ներս մտաւ բերելով
խորոված, տեսաւ այդ բանը և մօտենալով որդուն,
ինչ որ փնփնթաց:

— Գնա, գլխիցս ռադ եղիր, գոռաց նրա վրայ
Սերեոթան, — ամօթ մամօթ չը կայ:

— Ի՛նչ, քնչ, քնչ ա ասում, ամօթ ա՛, տօ
գնա քու... մեղայ քիզ Աստօձ, ես քեզ քիչ եմ
պաչել ջէհիլ վախոդ, ասաց հայրը լսելով Սերեո-
թի խօսքերը, — գնա, ռադ ըլի, քու բանը չէ:

Մայրը կարմրելով գնաց միւս սենեակ:

Ուտել-խմելն հեազհետէ աշխոյժ կերպա-
րանք էր ստանում: Գինին աւելի էր տիրապետում
նրանց ուղեղներին: Եւ նրանք առանց պատկառե-
լու լկտի կատակներ էին անում օրիորդների հետ,
որոնք իհարկէ ոչնչով պակաս չէին նրանցից, և նոյն
իսկ կմշտում:

— Սերեոթ ա, էդ ինչի՛ Գրիշալին չես կանչել,
հարցրեց Գէօրգին, դառնալով նրան հեղնական
ժպիտով:

— Գրիշան իդէալիստ է, գաղափարական մարդ
է, նա լայեղ չի անի մեզ հետ ղուարճանալ, պա-
տասխանեց Գրիշան ատելութեան ոգով լցուած:

— Մաշ արա՛, ծիծաղեց Գէօրգին, — նրա հօրն
օղորմի, պակաս մարդիկ ենք հա՛: Աւելի լաւ, որ
էստեղ չէ:

— Տօ, դրուստ, տես մի ովքեր ենք հաւաք-
ուած, է, ես ձեր հոգուն մատաղ լինեմ, ասաց կաղ
Միսակը, ոտքի կանգնելով և մատների վրայ հաշ-
ուելով ու մատնացոյց անելով, — ազգի պարծանքն
ենք, ազգի երիտասարդներն ենք, — թամադան —
գիմնազիից, Սերեոթան — սեմինարի չորս կլասեմէն,
Դառչօն — գարադսկօյ ուչիլիշչեմէն պրծած, Դա-
նիէլը — գլավնի բուղալտեր, Յովսէփը — Սուղումը
ծառայող, Մելքօն — ուչաստի պիսեր, մէկէլները
բոլորն էլ լաւ լաւ խելօք հաշուապահներ ու
պրիկաշչիկներ, բարիշնէքը խօ՛, սիրուն, լաւ լաւ
գիմնազիստիէք ու կրօյկիստիէք, դիփունանց փիսը
ես եմ — բազազխանի պրիկաշչիկ, բայց ոնչինչ, դէ՛,

ասէք, տեսնեմ, սրանից լաւ կամ պանիա. շատ հարկաւոր է Գրիշան, տօ գնն է նրա էն... բերնիցս ինչ է գուրս գալիս:

— Նրա նման իգէալիստներ շատ ենք տեսել, ասաց օրիորդներից մէկը:

— Հապա Համասփիւռը, նրա սիրուհին, եղբայր, որտեղից էլ դտաւ նա էդ հրեշտակին, ափսոս աղջիկ, ես նրա էն էն... հոգուն մատաղ, ասաց Հրանոյշի միւս կողմում նստած տղան:

— Նրա ծծերն ուտեմ, հը՛, ասաց Սիսակը:

— Ես էլ թշերն ուտեմ, ասաց Դառչօն:

— Պա, պա՛, ապրանք է, հա՛, ամբողջ Թիֆլիսում չի գտնուի նրա նմանը, շրթունքները սեղմելով աւելացրեց մի ուրիշը:

— Պարոնալք, լսեցէք, նո՛ւ, հրամայեց թամադան:

— Ատելով ատում եմ ես այդ աղջկան, ասաց Հրանոյշը նայելով Սաշային:

— Եօ էլ նոյնպէս, վրայ վերեց միւս օրիորդը:

Իսկ Սերեօփան մտքով սլացած Համասփիւռի մօտ, շրթունքներն էր կռծոտում: Նրա կրքերի ծովը փոթորկուեց և նա պատրաստ էր ամեն ինչ զոհելու, միայն թէ այժմ Համասփիւռն իր մօտ լինէր և այն էլ գրկած:

— Գրիշան ու Համասփիւռը օիրահարուած են, կարծեմ, ասաց թամադան, սառած խորովածի պատառը բերանը տանելով:

— Այո՛, այո՛, հաստատ սիրահարուած են, ասաց Հրանոյշը նայելով Սերեօփին:

— Սիրահարուած, բայց շատ իզո՛ւր, խօսեց Սերեօփան գլուխը տարուբերելով: — Մինչև ուզածօքը կատարեմ, չեմ թողնիլ:

— Արա՛, որդի, ինչ ուզում ես, իմ տղէն չես. թէ իմանաք ջէհէլ վախտս ինչեր եմ արել, կնկան մարդի ծոցիցը հանել եմ, իմանում է՞ք, պարծեցաւ նա աջ ձեռքը շարժելով:

— Բրավօ, հայրիկ, բրավօ, աղաղակեցին բոլորեքանք և ծիծաղեցին:

— Նո՛ւ, ГОСПОДА, լցրէք բաժակներդ. այս էլ խմենք օրիորդ Հրանոյշի կենացը, ցանկանք, որ նպատակին հասնի, ասաց թամադան, վերցնելով բաժակը:

— Ամէն, ամէն, Հրանոյշ ջան, բո կենացը, մի պնօշտի, ասաց Սերեօփան բաժակը նրա բաժակին զարկելով և շրթունքներից համբուրելով:

— Ա՛յ, հենց էդ է՛ ամենալաւ բանը, տեղից վեր վեր թռչելով ասաց կաղ Սիսակը, բնա Եօ...

Մինչ այդ՝ Սերեօփայի հայրը վեր ելաւ տեղից, առանց ոչինչ ասելու միւսներին, գնաց միւս սենեակ և պառկեց: Միւսներն էլ չափազանց տաքացել էին: Նրանք արդէն վայելչութեան ամենայն չափ ու սահման կորցրել էին: Օրիորդներն արդէն իրանց շնորքը անպարկեշտութեան մէջ երևան էին հանել:

Խօսակցութիւնը մերթ մասնաւոր էր դառնում, մերթ ընդհանուր:

Թամադան արդէն մէջընդմէջ բոլորի կենացըն էլ առաջարկեց:

Արդէն ժամի Յ¹¹,-ն էր, շուտով կը լուսանար: Սաշան շտապեց գոցելու խնճոյքը:

—Պարոնայք, լցրէք բաժակներդ լիքը, որովհետեւ վերջին կենացն է: Այս էլ խմենք բոլոր երիտասարդների և օրիորդների կենացը, ուռն.

—Ուռա՛, ուռա՛:

—Բացի իդէալիստներից և ծակ ազգասէրներից, աւելացրեց Սիսակը իրօնիա տալով:

— Ինչպէս Գրիշան, Ոսկանն ու նրանց նմանները, աւելացրեց մի ուրիշը:

—Տօ, թողէք էդ սարսաղներին: Նրանք համալսարան են աւարտում, սարսաղութիւն են սովորում ու եդ գալիս: Նրանք թնչ գիտեն, թնչ է աշխարհը, թնչ է կեանքը, կամ ինչպէս պէտք է ապրել: Նրանք մեզ անամօթ մարդիկ են համարում, խօսեց Գէօրգին:

— Հա՛, ինչպէս չէ, նրանց հօրն օղորմի, ծոցը մի օրիորդ պառկեցրու, վեր թռաւ տեղից Սիսակը բարձրաձայն կոչելով, շան պէս կը գզգզեն նրան... Հենց Գրիշան որ սիրահարուել է Համասփիւռի հետ, ինչք խաթեր, ուզում է էն սիրաւն թշերիցը պաշի ու....

—Օխիսի, երանի նրան գրկողին, լսուեց միւս կողմից:

...պէս չէ՞, օրիորդներ, դուք ասէք, դարձաւ ու յնց Սիսակը:

Սրանք միայն ժպտում էին ու երեսները հովհարում: Ոչ մէկը չէր բողոքում այդ անվայել խօսքերի դէմ, երևում էր, որ իրենց քմքի համաձայն էին այդ դատողութիւնները:

Սերեօժան թեւ ձգեց Հրանոյշի մէջքովը և երեսը կպցնելով նրա այտերին, ինչ որ շննջաց. ապա լուռ համբուրեց: Հրանոյշը բաւականութեամբ լցուած սկսեց քաղցր ժպտալ:

—Սերեօժա ջա՛ն, ասաց նա ցածր ձայնով:

—Հա ջան, հոգիս, պատասխանեց նա կրքոտ հայեացքը ձգելով ուղիղ նրա աչքերին:

—Քը մատա՛ղ:

—Ես էլ քը մատաղ, ասաց Սերեօժան և կըրկին համբուրեց:

—Ե՛հ, հերիք չէ՞, այդ ի՛նչքան պաչես, բաս մենք, ասաց Սիսակը վեր կենալով տեղից և աթոռը յետ հրելով, այս ու այն կողմ կաղելով մօտեցաւ Հրանոյշին, յանկարծ յետևից այտը համբուրեց և յետ դարձաւ: Հրանոյշը միայն ծիծաղեց նրա քաջագործութեան վրայ:

—Անուշ, անուշ, կեցցէ «չօլախ» Սիսակը. կատակաբար կոչեցին միւսները:

Ապա կամաց կամաց բոլորն էլ վերելան տեղերից: Ոչ մէկը միւսից պակաս չէր տատանւում ոտների վրայ: Կաղ Սիսակն իր լիրբ կատակների տօպրակի բերանը բաց էր արել: Նրանք հրաժեշտ

տալով Սերեօժի մօրը, որ չը մասնակց
քին, և շնորհակալութիւն յայտնելով դուրս ե-
լան փողոց: Այստեղ էլ թեանցուկ օրիորդների
հետ՝ վայրենական աղաղակներ էին բարձրաց-
նում և երգում: Նրանցից մէկը բաւականին
յաջող՝ իշի նման զուռ էր և ծիծաղեցնում
միւսներին, այնպէս որ եթէ մի էշ կանգնած լի-
նէր այդտեղ, կը կարծէր թէ իր եղբայրներից մէկն
է և զուռով կը դիմաւորէր...:

Սերեօժան շուտով յետ դարձաւ տուն, իսկ
միւսները ճանապարհին մի քանի անգամ ոստիկանի
նկատողութեան ենթարկուելով, հետզհետէ ցրուե-
ցան և ամեն ոք կատարեալ հարբած՝ կէս դիշերին
բաղխեց իր դուռը...



Մութ գիշեր է. խաւարը պատել է երկին և
գետին. երկինքը ծածկուած է թանձր ամպերով,
թագցնելով իրանց յետևում լուսատու աստղերը:
Բարակ անձրևը վերից մաղում և զովացնում է
մայիսեան օդը: Քամին երբեմն-երբեմն փչում է և
կանաչ ծառերի տերևները թափահարում, որոնց
սօսափիւնը տարածուելով գիշերային լուսթեան մէջ,
խուլ արձագանք էր տալիս: Փողոցների ցերեկուայ
հոգն ու փոշին դարձել էին ցեխ և տեղ-տեղ անձ-
րևի ջուրը կանգնելով՝ փոքրիկ գուբեր էր կազմա-
կերպել: Միամիտ անցուորականը շտապելով տուն,
աննկատելի կերպով ընկնում էր ցեխի մէջ և ցե-
խաթաթախ լինում: Մերթ ընդ մերթ արևելեան
կողմից փայլատակում էր կայծակը և վայրկենապէս
լուսաւորում խաւարի մէջ կորած քաղաքն ու
շրջակայքը. այդ րոպէին տեսանելի էին լինում
այս ու այն փողոցում անցուորականներ, որ սար-
սուռելով փայլակից՝ աչքերը ծածկում էին: Լսելի
էր լինում հեռուից ամպի խուլ և չարագուշակ գո-
ռոց: Կառքերը ցեխը ճեղքելով շտապով տուն էին
հասցնում վաստակած վաճառականներին և ալլոց:

Այս պահուն մի ոմն հովանոցը բացարձ
շտապում էր, ինքն իրան փնթփնթալով: Նա ան-
ցաւ լայն փողոցը, թեքուեց աջ կողմի աւելի նեղ
փողոցը, ապա մի քանի պտոյտներ գործելով, կան-

գնեց մի յարկանի ցածր շինուլթեան մօտ և դրսի դուռը բաղխեց: Մի ըսպէից դուռը բացուեց և մի ցածր սև կանացի կերպարանք ներս հրաւիրեց, ըստ երևոյթին, սպասելի ծանօթ հիւրին:

— Բարի երեկոյ, Կէկէլ, ասաց ներս մտնող հիւրը, — տեսնո՞ւմ ես, ինչպէս եղանակը վատացաւ չորտ պաքերի:

— Աստծու բարին, Սարգիս, լաւ է, որ եկար. ես կարծում էի էլ չես գայ. թռչուե՞լ ես, թէ՞ չէ:

Նրանք մտան բակի ձախ կողմի սենեակը: Մտնողը երիտասարդ էր, նա հագել էր սև բաճկոնակ, սև անդրավարտիկ սպիտակ գալուստիկ կապած, օսլայած կրծքով ու մանժէտներ հագած: Նա շտապով հովանոցը դրեց սենեակի մի անկիւնում, գլխարկը սեղանի վրայ, և հանելով թաշկինակը, սկսեց սրբել ճակատի թեթև քրտինքը, մազերը հարթեց և նստեց փայտեայ աթոռի վրայ:

Դա Սերեօժա Աւելեանն էր:

Սենեակը փոքր էր, երկու ցածր պատուհաններով և մի դռնով: Պատերի պաստառները գոյնը բոլորովին կորցրած և պատառոտած, տեղ տեղ նոյն իսկ կտոր-կտոր պոկուել էին և քարշ ընկած մնացել: Առաստաղը սևացած էր ծխից և փոշուց. երևում էր, որ անհոգ տանտէրը երկար ժամանակ չէր մտածել մի փոքրիկ վերանորոգութեան մասին: Սարգերի ոստայնները պատերի անկիւններում քարշ էին ընկած և սարգերը դրանց վրայ լարախաղուլթիւն էին անում: Սրիւնարբու փայտոջիւնները խօ՞,

սկսել էին իրանց գիշերային արշաւանքները: Տան կահ կարասին կազմում էին մի հին մեծ տախտ, որ դրած էր դիմացի պատի տակ, չորս հատ հին ձևի սպիտակ շորով ծածկուած աթոռներ, մի հացի կոտրած սեղան, որի վրայ դրած էր հնամաշ և ճեղքած հայելի և թիթեղեայ ժանգոտ մի դամպար, որ աղօտ կերպով լուսաւորում էր այս խեղճ բնակարանը:

Բնակուողները կազմում էին այդ նոյն կինը, որը ցածրահասակ միջին տարիներով կին էր. նա հագնուած էր պատառոտած սև շորերով: Տախտի վրայ կեղտոտ և ցնցոտի անկողինների մէջ պառկած էին մի տղայ և մի աղջիկ, որոնք այդ կնոջ զաւակներն էին: Տան տղամարդը վաղուց վախճանուած էր:

— Ինչ շո՞ւտ են քնել երեխէքը, Կէկէլ, ես նրանց համար քաղցրեղէն եմ բերել, ասաց երիտասարդը և զրպանից հանելով միքանի կօնֆէտներ, դրեց սեղանի վրայ, — ոչինչ, վաղը տո՛ւր նրանց:

— Ծնորհակալ եմ, Սարգիս, ի՞նչ նեղութիւն ես քաշել: Ասա տեսնեմ, ի՞նչ ես չանում, գործդ ինչպէս է: Մայրիկդ ի՞նչպէս է, ի՞նչ է անում:

— Լաւ է, շատ լաւ է, բայց ժամանակ չէ մանր մուկը հարցերով ու մասլահաթով զբաղուելու. խօսենք գլխաւոր բանի մասին. դու այն ասա, թէ այսօր գնացի՞ր նրանց տուն. ի՞նչ պա-

տասխան: Խէր թէ շառ, հարցրեց շտապով Սերեօ-
ժան, ուղիղ նայելով տիկնոջ աչքերին:

— Մայրիկդ չասէց քեզ, թէ ինչ ասացին
նրանք:

— Ի՞նչ, չը գիտեմ, դ՛ու ասա տեսնեմ:

— Չեն տալիս Համասփիւռին:

— Ի՞նչպէս թէ չեն տալիս, ի՞նչ պատճառով,
անմիջապէս հարցրեց Սերեօժան շարժում գոր-
ծելով:

— Չեն ուզում տալ էլի՛, պատասխանեց Կէ-
կէլը, վերցնելով տախտի վրայ դրած կիսագործ
գուլպան:

— Ա՛խր, ինչի՞ է, սրտատրոփ և բարձր ձայ-
նով ասաց Սերեօժան, — ասում են վատ տղայ եմ,
հա՛, չեն հաւանում ինձ:

— Վատ չէ՛, հա՛մա՛, դէ, ասում են, թէ
աղջիկների հետ շատ է ընկած, առանց նրանց եօ-
լա չէ դնում, ստում են թէ, պսակուի էլ, կնկանը
թողած, ուրիշների հետ կընկնի:

— Լաւ, բա դու ի՞նչ ասացիր, չէի՞ր կարող
շնորքդ բանեցնել, էլ ի՞նչ լաւ «մօցիկուլ» ես
ճանաչուած:

— Ի՛է՛հ, գիտես, էլի՛, թէ ինչ ասած կը լի-
նեմ: Համ էլ աղջիկը քեզ չի ուզում, ոչ էլ ու-
րիշին, նա սէր է քցել քու ընկեր Գրիշայի վրայ,
ու հօրն ու մօրն էլ ասել է, որ եթէ ապրելու
է աշխարհքի վրայ ու պսակուելու, նրա հետ պսա-

կուի ու ապրի, թէ չէ մեռնելը լաւ է հաշուում
ապրելուց:

— Ա՛խ Գրիշա, անիծեալ լինիս, բացականչեց
Սերեօժան, ձեռքը զարկելով ծնկանը և գլուխը
շարժելով:

— Յետոյ ծնողները համաձայն են, հարցրեց
նա:

— Ինչո՞ւ չէ, ինչ պակաս տղայ է Գրիշան,
մենձ ուսումով, ատվակատ, խելօք, իրանք կի չեն
աղաչի՛:

— Կէկէլ, մեծ ուսումս որն է. հիմի ես Գրի-
շայից վատ տղայ եմ, նա իմ չափ ամսական է
ստանո՞ւմ, կամ նա շաա ունի ընկերներ, թէ կո:

— Դէ, լաւ, լաւ հերիք գլուխդ գովես, ժրպ-
տաց Կէկէլը. գուլպայի ճաղը հանելով: Վերջ ա-
ռաջ Գրիշային պէտք է տան: Մի քիչ Գրիշայի
մէրը չեմ ու չում է անում էդ բանին, չի ուզում
Համասփիւռին, համա ոչինչ:

— Այդ է լաւ, է՛, Կէկէլ, դրանից կարելի է
օգտուել. ես մօրն աւելի զրգուցի որդու դէմ, ա-
սել եմ, որ Համասփիւռը վատ աղջիկ է, շատերի
հետ գաղտնի լարաբերութիւն ունի, նա էլ հա-
ւատաց ու ասաց, որ երբէք չի թոյլ տալ որդուն
ամուսնանալ Համասփիւռի հետ:

— Հանաք արի, Սերգօ, համա որ գնամ, բանը
գլուխ բերեմ, իմ ջափահաս ի՞նչ ես տալու, գիտե՞ս
ինչ մեծ ստեր պիտի խօսեմ, հոգիս սևցնեմ:

— Նոր պէտք է ստեր խօսես, ծիծաղեց Սերեօթան, չէ որ այդ քո արհեստն է, վերջապէս, հապա ի՞նչպէս պէտք է փող աշխատես, հաց ուտես, ապրես. քո ջափահաբը 50 ըուրլի խոստանում եմ նաղդի տալ:

— Հինգ թուման, ասաց Կէկէլն ուրախանալով և գուլպան ծալելով ու մի կողմ դնելով:

— Հա, հինգ թուման կը տամ, եթէ որ ինչ նշանես օրինորդ Համասփիւռի հետ:

— Լաւ, լաւ, աչքիս վրայ, ասաց Կէկէլը ծիծաղելով:

— Գիտես, Կէկէլ, առաջ աշխատիր ծանօթանալ Գրիշայի մօր հետ և սկսիր վատարանել, փտնել աղջկան ու ասա՛, որ Գրիշան մեղք է, լաւ աղայ է: Յետոյ Համասփիւռի հօրն ու մօր մօտ փտնիր Գրիշային, ասա՛, որ նա համալսարանից վաճառած է, սուտ փաստաբան է, հարբող է, քաղցած է ու ինչ համեմատիր նրա հետ, բարձրացրո՛ւ, գովիր, էլ ի՛նչ ասեմ, դու գիտես քո բանը:

— Գիտեմ, գիտեմ Սերգօ, արխային կաց, մէկ օր ասացի լաւ, լաւ, միայն թէ դու քու խօսքիդ տէրը եղիր, մնացածը իմ բանն է:

— Ես ասում եմ, որ գործը սարքածդ օրը տամ քո փողերը, էլ ի՛նչ ես ուզում:

— Դէ լաւ, բոլորովին հանգիստ կաց, համասփիւռը քոնն է, ասաց Կէկէլը դրական եղանակով:

Այդ վայրկեանին պատի վրայ քարշ արած հին փոքրիկ ժամացոյցը զարկեց 12-ը: Սերեօթան չք

հաւատալով նրան, հանեց ծոցից իր ժամացոյցը և համեմատելով տեսաւ, որ 12-ից քառորդ ժամ էլ անց է. նա շտապով վեր ելաւ տեղից, վերցրեց հովանոցը:

— Ուշ է, գնալու ժամանակ է: Դէ, ուրեմն ապահով լինե՛մ, որ գործը կը յաջողեցնես:

— Հա՛, հա՛, որդի, ապահով եղիր, ես հենց էգուց կ'սկսեմ անելիքս, լսել եմ, որ դաչա են ղրկելու Համասփիւռին, չլա նշանդրէք ուտենք, յետոյ թող գնայ:

— Խնդրում եմ, Կէկէլ, աշխատիր ինչպէս քո որդու համար:

— Լաւ, լաւ, որդի, արխէին կաց:

— Բարի գիշեր, ասաց Սերեօթան ձեռք տալով և ուղղուելով դէպի դուրս, բերկրանքով լցուած:

— Քէ լուս բարի, որդի:

Դուրսը անձրևը կտրուել էր. բայց հեղեղը դեռ հոսում էր փողոցներում: Գորշագոյն ամպերը, կարծես, հետզհետէ քշուում էին դէպի հիւսիս-արևմտեան կողմը, որտեղից որ մերթընդմերթ փայլատակում էր: Արևելեան կողմից երկնակամարի վրայ մի աստղ գաղտնագողի կերպով գլուխը դուրս էր հանել ամպերի տակից և ուզում էր ինքը միայն լուսաւորէր խաւար երկիրը: Բայց նա միայնակ անջօր էր: Քամին աւելի սաստկացել էր և, փչելով՝ ծառերի տերևները շարժում էր, որոնց

խընդր տարածուելով հանգիստ օդի մէջ, չարագուշակ երգի էր նմանում:

Սերեօժան դիւական ուրախութեամբ լի և իր տրփանքի առարկային իրան զոհ դարձնելու սատանայական ծրագրներով, գիշերային ոգու նման, գլուխը կռացրած, շտապեց տուն...



VII

Դ... ամառանոցի ամառային հրաշալի գիշերներից մէկն էր: Կէս գիշերին մօտ էր. լուռ էր բնութիւնը. ամեն ինչ ընկղմուած էր խոր քնի մէջ: Երկինքը անամպ և մաքուր, որի վրայից լրացած պայծառ լուսինը լուռ ու մնջիկ սահում էր, սփռելով իր արծաթափայլ ճառագայթները խաղաղ երկրի վրայ: Նրա զօրեղ լոյսի առաջ նսեմացել և խոնարհել էին բիւրաւոր աստղերը. միայն միքանիսը, չուզենալով՝ ծածկուել լուսնի ճաճանչներով, կամակորուժեամբ մրցելով, ցրիւ եկած փայլփլում էին աղօտ լուսով, մերթ դողդողում և մերթ անյայտանում: Օդը զով էր և հանդարտ: Չորս կողմում խորհրդաւոր լուռութեամբ, որպէս բիւրաւոր ուրուականներ, վեհանձն կերպով կանգնած էին անտառները. ծառերը, թփերը և խոտերն անշարժ նիրհում էին: Միայն երբեմն-երբեմն, երբ մեղմիկ զեփիււրը փչում էր, սաղարթախիտ տերևների սօսափիւնը սարսեցուցիչ տպաւորութեամբ տարածւում էր օդի մէջ և գնում հեռու, շատ հեռու... ներքև՝ ձորակում հոսում էր արագավազ գետակը, որն ուրախ և անհոգ սահում էր ոլորուելով, գալարուելով, և յորձանքներով իր արգաւանդ ափերը ծեծում: Նրա քչքչոցն ու կարկաչոցն էլ խանդարում էին բնութեան լուռութիւնը: Լուսնի ճառագայթներն ընկնելով ջրի մակե-

բևոյթի վրայ, արտացոլում էին և հեռուից պըս-
պղում գետակի ուղղութեամբ: Կաղնինների, ծա-
ղիկների ու վայրի վարդենիների շմեցուցիչ քաղ-
ցըր հոտը լցրել էր օդը: Երբեմն-երբեմն լսելի էր
լինում գիշերային երգիչ՝ կկուռի ձայնը, որի միա-
պաղաղ և պարբերական «կո՛ւ-կո՛ւ»-ով նա-
նիկ էր ասում ներհող անտռին: Մի խօսքով
գեղիցիկ էր և հրաշալի բնութեան այդ ընտիր
վայրն իր հրաշալիքներով և կաթնանման լուս-
նով: Նա նմանում էր մի կախարդական աշխարհի,
որտեղ միայն հուրիններն ու փերիններն էին բացա-
կայում. դատարկ էր անտառը, ոչ ոք մարդկանցից
չէր մտածել օգտուել այդ գեղարուեստական տեղե-
րից, հրճուել ու յուզուել: Ասպարէզը մնացել էր
միմիայն գիշերաշրջիկ վայրի գազաններին: Մարդ-
կանցից միայն մէկը չէր քնել. նրա քունը այս
գիշեր փախել, կորել էր հեռու, շատ հեռու...
Նա բարձրանում էր կամաց-կամաց դէպի անտառը:
Լուսնի լուսի տակ դժուար չէր նկատել, որ նա
մի առոյգ երիտասարդ էր, հագած սև անդրավար-
տիկ և կապոյտ ամառային վերնաշապիկ առանց
գօտիի և սպիտակ ծղնօտեայ գլխարկը ձեռքին:
Նա բարձրանում էր վեր լամբ քայլերով, առանց
շտապելու, նայելով երբեմն վեր՝ երկնքին, երբե-
մըն էլ իր շուրջը, կարծես, վախենալով միայնա-
կութիւնից: Նա կանգ առաւ մի քանի վայրկեան
դառիվայրի վրայ, նայեց լուսնին և ապա քայլերը
փոխեց դէպի ձախ լուռ ու մուռնջ: Այսպէս նա

առաջ էր գնում և մտնում խոր անտառ:
Ահա կրկին կանգ առաւ անտառի մէջ փոքրիկ
օռզիսում, հանեց ժամացոյցը, լուսնի շողերի տակ
նայեց և կրկին ծոցը դնելով, պառկեց մի ծառի
տակ կանաչ խոտի վրայ, գլուխը լինելով թիկուն-
քին: Նա դիտում էր լուսինը, որի ճառագայթնե-
րի մաքուր լուսի տակ նկատուում էր նրա դէմքի
արտայայտութեան փոփոխուելը, որ նշան էր նրա
ներքին աշխարհի յուզուած դրութեան: Մտա շուտ
նա ծառերի միջանցքներով նայում էր գիւղին—
մի սպիտակ տան վրայ, կարծես, անհամբեր մէկին
սպասելով: Մի քանի րոպէ լուսնին լուռ նայելուց
լետոյ, լանկարծ նա մի խոր հոգւոց հանեց, գլուխը
թեթեւ կերպով շարժեց և բաւական լսելի ձայնով
մըմնջաց: «Ո՛վ, լուսին, լուսին, սրբան որ գեղա-
տեսիլ ես և կախարդիչ, նայնքան և անհոգ ես և
միամիտ: Լուռ, հանդարտ և գերբնական ժպիտով
սահում ես երկնքի անհուն տարածութեան մէջ,
նսեմացնելով քո առաջ անթիւ աստղերին: Բնու-
թիւնն իսկ քո հմայիչ տեսքիդ ազդեցութեան տակ
թմրել ու լուել է: Այ՛ն, գու ինձ էլ լցնում ես քո
կախարդական փայլիդ հրճուանքով, պղտորում ես
զգացմունքներս, ալեկոծում սիրտս և ես մոռա-
նալով ամեն ինչ ուժգին ցանկութեամբ ձգտում
եմ մի բանի, բայց չը գիտեմ, թնչ է այն: Մտտ ես
անտարբեր և սառնասիրտ, ո՛վ լուսին. մթթէ այս-
քան հազար տարիների ընթացքում քո ականջին
չեն հասնում մարդոց հայհոյանքներն ու բանասար-

կուլթիւնները, աղաչանքներն ու մաղթանքները, կամ միթէ չես տեսնում նրանց քսուլթիւնները, անբարոյական գործերը և դու շարունակում ես աւելի հմայիչ գոյնով երևալ նրանց և քո անբիծ, յուզիչ ճառագալթները անխախը կերպով սփռել համայն մարդկութեան վրայ...»:

Նա լուեց և մի թեթեւ հոգւոց հանեց: Ձեփիււը մեղմօրէն փչեց, շարժելով անտառը: Երկտասարդը վայրկենապէս սարսափեց ջրի աւելի զօրեղ ձայնի և անտառի սօսափիւնի ազդեցութեան տակ. նա գլուխը բարձրացրեց և թրպրտացող սըրտով նայեց չորս կողմը, տեսաւ, որ ոչ ոք չկայ, ապա աչքը ձգեց այն տան վրայ և սկսեց անթարթ աչքերով նայել, միւսնոյն ժամանակ խորհելով:

— Բայց ինչն է ինձ այս կէս գիշերին ստիպում անքուն մնալ և թափառել անտառում, որպէս վայրի կենդանի, հարցրեց նա ինքն իրան և ինքն էլ պատասխանեց: — Ո՛հ, այդ սէրն է, սէրը. սէ՛ր, մի անըմբռնելի էութիւն: Ա՛խ, ո՛վ ես, ի՛նչ ես, ի՛նչ, ո՛վ սէր, որ անսպասելի և աննկատելի կերպով մտնում ես մարդու սիրտը, խոր արմատներ ձգում և այնուհետեւ խլում նրանից հանգիստը. յուզում նրան, փոթորկում, տանջում, այրում...: Արդեօք մի երկնատուր զօրութիւն ես դու, թէ մի առանձին ինքնագոյ զօրեղ էութիւն: Այո՛, համակրում եմ քեզ, ցանկանում, ձգտում, բայց այն պայմանով, որ վախճանը դառն չը լինի:

Ա՛խ, երանի թէ զիտենայի, ո՛վ է սիրոյ թագաւորը և գնայի նրան գանգատուէի, որ սէրը սաստիկ տանջում է մարդուն, ցնորում նրան, և յաճախ վախճանը եղերեքական դարձնում: Այո՛, կը գնամ և կը գանգատուեմ, կը խնդրեմ, որ այլ կերպ լինի»: Նա լուեց. թեւը մեկնեց և քաղեց միքանի կանաչ ցողուն, սկսեց խաղացնել ձեռքին: Ապա գլուխը թեքեց և ծառերի միջանցքով դարձեալ սկսեց նայել դէպի այն դուռը, որ խլել էր իր ուշադրութիւնը: Միքանի րոպէ նոյն կէտին նայելուց լետոյ դարձեալ հոգւոց հանեց, ոտքի կանգնեց և սկսեց կամացուկ քայլերով պտտել նոյն տեղում:

— Ո՛ր մնաց, ինչո՞ւ ուշացաւ, ասաց նա ինքն իրան՝ կանգ առնելով և ձեռքով զլխի մազերը հարթելով, — չը լինի՞ չը յաջողուեց դուրս գալ: Նա խորին ուշադրութեամբ նայեց չորս կողմը, համոզուելու թէ ինքը մենակ է, թէ ոչ: Վայրկենական երկիւղը պատեց նրան, զգալով իրան մենմենակ ամենհի անտառում. բայց նայելով «այն» տան վրայ, մոռացաւ երկիւղը և կրկին նստեց նոյն ծառի տակը գետնի վրայ:


«Արդեօք նա էլ նոյնչափ ինձ սիրում է, տանջում է, մտածեց նա, գուցէ խաբում է ինձ, կեղծում է, գուցէ Արեօթայի հետ գաղտնի խարաբերութիւն ունի: Բայց ո՛չ, ոչ, ի՛նչ եմ մտածում, լանկարծ նա կնճառուեց և ձեռքերով աչքերը փակեց. միթէ այն անարատ և անկեղծ կրծքի տակ բարախոյ մա-

քուր սիրոյ ծովի մէջ խառն կը լինի կեղծութեան զգացմունք. ո՛չ, անկարելի է. յանցանք է կասկածելն իսկ: Նա իմ երջանկութեան աստուածուհին է. նրանով միայն պէտք է ապրեմ այս աշխարհում, վայելեմ կեանքի քաղցրութիւնները, գործեմ և մեռնեմ»: Բայց յանկարծ մի բան լիշեցով նա ձեռքը դրեց ճակատին ու սկսեց մտածել. «Մայրս, մայրս, այդ տարօրինակ գաղափարի տէր կինը, ինչո՞ւ է հակառակում իմ բախտաւորութեանը. ինչո՞ւ է աշխատում տանջանքներս կրկնապատկել, ո՛հ Տէր իմ, ամեն կողմից դժբախտ է սիրահարը—սէրն ինքը մի կողմից հանգստութիւնը խլում, թափառաշրջիկ ու ցնորուած ոմն է դարձնում, ծնողները միւս կողմից են հակառակում, որովհետեւ իրանց քմքի համեմատ և փողի տենջանքին յագուրդ չը տուող, բայց բարոյական և օրինակելի աղջիկ է. ընկերական գծուծ խարդաւանքներն ու նախանձը միւս կողմից են մաշում սիրահարին և այլ այսպիսի անբարեպատեհ հանգամանքներ ու խոչնդոտներ են ծնւում: Մի խօսքով, սէրը հուր է և տանջանք, սիրո՞ւ խաչը ծանր է և պատասխանատու, և ով որ կրում է մինչև վերջ խաչի ծանրութիւնը, նա երջանկանում է: Ա՛խ երանի հնար լինէր հեռու մարդկանցից, միայն իմ աննման Համասփիւռի հետ յաւիտեանս ապրել այս անտառի անմատչելի խորքերում և այս պայծառ և յուզող

լուսինը հովանաւորէր մեզ ու վկայ լինէր մեր գոյութեան...»:

Նա լռեց. նոյն պօզալում անշարժ մնաց միջանի վայրկեան, կարծես թէ վերջին խօսքերն աւանդաբար թռան թռան բերանից: Զոհել գաղափարը, կըթուփուէր. գործը և ամեն ինչ միմիայն սիրոյ համար և այն էլ գէթ անհատական սիրուն, դա, կարծես, խորթ թուաց նրան:

Բնական օրէնքի դէմ մաքառելը, թեթեամտութիւն կը լինի, այդ միւսնոյն է, թէ մաքառել երկրաշարժի դէմ, որ նա չը լինի: Քանի կ'ապրի մարդ, քանի որ նրա սիրտը կը բաբախի, զգացմունքները, վառ պահելով—սէրը, իբրև բնածին և միւսնոյն ժամանակ հաղուագիւտ երևոյթ, կ'ընկնի զգացմունքի ծովը, կ'ալեկոծէ և կը տիրէ ներքին աշխարհը: Եւ որքան մարդու սիրտը ազնիւ լինի, այնքան սէրը իդէալական և հաստատ կը լինի: Ո՛հ, սէր, սէր...:



VIII

Մինչ Գրիգոր Պարտիզեանն անտառի մէջ տանջուում էր, մէկին սպասելով, ամառանոցի տներին մէկում՝ մի ուրիշ էակի քունը նոյնպէս փախել էր և նա սաստիկ անհանգիստ էր: Գետակի գլխին, անտառի եզերքին կանգնած էր մի բաւականին մեծ մի յարկանի տուն: Նա որոշուում էր միւս տներին իր աւելի ճաշակաւոր շէնքով և գեղեցիկ դիրքով: Տան առաջ կանգնած էր փոքրիկ և ծաղկունքով լի սիրուն պարտէզը, որի միջով անցնում էր գլգլան սառը առուակը:

Լուսինն արեւմտահիւսիսային կողմից նայելով, իր կաթնաման շողերը սփռել էր պարտիզի վրայ և տան առաջի երեսին: Պատուհանները բաց էին և մաքուր-գոյլ օդը ազատ կերպով ներս էր թափանցում բնակարանը: Լուսնի լուսոյ տակ պարզ նշմարուում էր ներսում գտնուող ամեն ինչ: Դա փոքրիկ սենեակ էր, պատերը սպիտակ ներկած, դիմացի պատի տակ գրուած էր մի մահճակալ, որի վրայ մի հրաշալի կուրծք երևէջ էր անում: Պառկած էր կոյսը և բաց պատուհանից նայում ուղիղ լուսնի վրայ: Նա հանուած էր և շապիկն էլ կրծքի վրայից բաց արած, այնպէս որ անբիծ, սպիտակ կուրծքը լուսնի ճաճանչների տակ փայլում էր: Նա լուռ՝ կուսական անուրջներով շըրջապատուած, նայում էր լուսնին և երբեմն էլ

ձեռքերով աչքերը ծածկում, կարծես, արտաքին աշխարհի տեսանելիքից դուրս, մտքով սլանում էր մի գերբնական աշխարհ: Մահճակալի մօտ գրուած էր մի փոքրիկ սեղան, վրան ծոցի ժամացոյց, որի միապաղաղ և խուլ չխշխկոցը խանգարում էր կուսի ննջարանի խորհրդաւոր լուսթիւնը: Երբեմն երբեմն նրա վարդագոյն շրթունքներից դուրս էր թռչում թեթեւ հոգոց, որ այրուած սրտի յորձանք էր: Յաճախ նա վերցնում էր ժամացոյցը և մօտեցնելով աչքերին, նայում էր փոքր սլակի ուղղութեանը, և կնճռոտելով նուրբ ճակատը, կրկին դնում սեղանին: Նա չէր կարողանում հանգիստ պառկած մնալ անկողնում, շարունակ ոտները շարժում, ձեռները տարածոււմ, շուռու մուռ էր դալիս: Ահա նա նստեց անկողնում և այդ դրութեան մէջ սկսեց մտածել: «Ե՞րբ պէտք է լրանայ ժամը», շնջացին նրա քնքոյշ շուրթերը: Փոքր ինչ յետոյ սկսեց հագնուիլ և ժամացոյցը առնելով ձեռքին, պատուհանի մօտ կանգնեց: Չանցաւ հինգ րոպէ, օրիորդը գգուշութեամբ բացեց իր ննջարանի դուռը, ոտների ծայրերով քայլելով գաղտնագողի անցաւ միւս սենեակը, որտեղ քնած էին տանեցիք, դուրս ելաւ բակը և կանգնեց: Աղախինը, որ պառկած էր բակում, այդ միջոցին արթնացաւ և տեսնելով օրիորդին, նստեց անկողնում և հարցրեց, թէ ինչո՞ւ է վեր կացել այդ ժամանակ և ո՞ւր է գնում:

— Լուռ եղիր, Սալօմէ, միայն հագնուիլ և

դուրս եկ պարտիզից, լիշեր երէկուայ ասածս, շնջաց
ըրորդը հազիւ լսելի ձայնով աղախնի ականջին:

Սալօմէն անմիջապէս հազնուեց և կամացուկ
բակի դուռը բանալով դուրս եկաւ օրիորդի հետ
պարտէզ:

—Սիրելի Սալօմէ, խնդրում եմ քեզ, եկ գը-
նանք դէպի անտառը, քունս չի տանում, ուզում
եմ զբօսնել և զով՝ օդ շնչել. եկ, մի վախիր, տես
ինչ լնյս է:

—Անտառ չը գնանք, լաւ չէ, կէս գիշեր է,
գայլեր կը լինին, ասաց աղախինը կանգ առնելով:

—Ի՞նչ վախկոտն ես, Սալօմէ, մեր բողարն
քնչ է անում, տեսնում ես, ինչպէս հսկում է մեզ:

Իրօք այդ ըռպէին պատի տակ նստած մեծ
սպիտակագոյն շունը վեր ցատկեց տեղից և, պոչը
շարժելով, մօտեցաւ նրանց:

—Արի, պարտիզում նստենք, այստեղ լաւ է,
ասաց աղախինը, նայելով նստարանի վրայ:

—Գիտե՞ս, Սալօմէ ջան, եթէ տանցիք արթ-
նանան ու հարցնեն, թէ ինչո՞ւ դուրս գնացիք
գիշերը, կամ թէ ի՞նչ էք անում դրսում, ասա, որ
իմ գլուխս ցաւում էր և ես քեզ արթնացրի ու
դուրս եկանք պարտէզ: Ուզում ես դու այստեղ
նստի, իսկ ես ու բողարը մի փոքր դուրս գնանք
պարտէզից, դէպի անտառը, ահա՛ այս ծառերի
մօտ, ցոյց տուեց մատով օրիորդը:

—Չէ, չէ բարիշնա, ես էլ կը գամ, ասաց ա-

ղախինը սարսելով այդ առաջարկութիւնից, — չե՞ս
վախենում մենակ:

—Մի գալ, մի գալ, տեսնենք կը վախենամ,
կատակի ձև տուեց օրիորդը:

—Լաւ, գնա, ժպտաց Սալօմէն հասկանալով
նրա միտքը:

Օրիորդը երկիւղով դուրս եկաւ պարտէզի լետեի
դռնակով և դիմեց անտառի այն կողմը, որ-
տեղ ծառի տակ պառկած էր վերոյիշեալ երիտա-
սարդը: Բողարն կողքից չէր հեռանում և, հոտհո-
տելով խոտերը, ցատկում էր առաջ:

—Տէր Աստուած, արդեօք եկած կը լինի նա,
մտածեց կոյսը նայելով չորս կողմը և ամբողջ
մարմնով ցնցուելով երկիւղից:

—Համասփիւռ, լսելի եղաւ յանկած ծառերի
տակից, Համասփիւռ, այստեղ եմ:

—Ա՛հ, Գրիշա, այստեղ ես, ասաց օրիորդը,
լսելով ձայնը: Բողարն այդ ձայնի վրայ սկսեց հա-
չել և ուզում էր առաջ վազել, գտնել այդ մար-
դուն և պատառոտել. բայց օրիորդը սաստեց նրան
և ականջից բռնեց:

Երիտասարդը մօտ վազեց: Նրանք անչափ
բերկրանքով լցուած սեղմեցին միմիանց ձեռքերը:

—Եկ, սիրելիս, այն ծառի ստուերի տակ նըս-
տենք, այնտեղ լաւ է. մենակ ես:

Նրանք նստեցան կանաչ խիտ խոտերի վրայ,
իսկ բողարն օրիորդի ոտների տակ պառկեց ու
սկսեց պահպանողաբար դիտել չորս կողմը և մի-

Լենոյն ժամանակ ականջ դնել նրանց խօսակցութեան և հասկանալ, թէ ինչո՞ւ այս կէս գիշերին միայնակ անտառումն են գտնուում: Միքանի վայկեան նրանք լուռ էին և նայում էին անտառին: Յանկարծ շներն սկսեցին հաչել և աղաղակ բարձրացրին գիւղում: Համասփիւռն ու Գրիշան սարսեցան: Նրանք շունչը ներս քաշած սկսեցին ականջ դնել և նայել դէպի այն կողմը, որտեղից գալիս էր հաչոցը: Բայց ոչինչ չը տեսան:

— Հիմա ձերոնք կ'արթնանան, ասաց Գրիշան, հապա որ տեսնեն, թէ այնտեղ չես, այն ժամանակ:

— Ոչինչ, դուռը ծածկած է և բացի այդ եթէ իմանան, դարձեալ ոչինչ, ես աղախնի հետ խորհուրդ եմ արել, հանգստացրեց Համասփիւռը:

Փոքր ինչ յետոյ շները լսեցին. դարձեալ հանգիստ է բնուածիւնը և լուսնի լուսով շաղախուած:

— Որքան գեղարուեստական է և կախարդիչ այս գիշերային բնութիւնը, ասաց Գրիշան, ցոյց տալով երկնակամարը:

— Այո, սիրելիս, հրաշալի է, շատ եմ սիրում այսպիսի գիշերներ, յարեց քնքոյշ առողջանութեամբ Համասփիւռը:

— Աւելի ևս յուզում է մարդուն այս բնութիւնը. մտքերը սլացնում է, ալեկոծում և նոյն իսկ ակամայից արտասունք գլորում: Չը գիտեմ, թէ մի գերբնական զօրութիւն կայ նրա մէջ:

— Ես էլ նոյնպէս յուզում եմ, զգացում, և գիտեմ, թէ ինչո՞ւ, և դ՛ու էլ գիտես:

— Սէրն է դրա պատճառը, ասաց Գրիշան ժպտալով և բռնելով օրիորդի մարմարեայ քնքոյշ ձեռքը: Համասփիւռ, ուղիղ նայիլ աչքերիս, տեսնեմ, ասաց նա:

Օրիորդն իր գեղատեսիլ հայեացքը ձգեց երիտասարդի կրակոտ հայեացքին և այդ ժամանակ սիրոյ բոցը, շանթը, խանդը և նետը փոխադարձաբար խալթեցին միմիանց սրտերը:

— Արդեօք մենք լիակատար երջանիկ ենք, Համասփիւռ, թէ սա ժամանակաւոր կեղծ երջանկութիւն է, խօսեց Գրիշան նայելով շուրջը:

— Ուրեմն դու կասկածում ես, հարցրեց օրիորդն այլալուելով, ես կարծում եմ, որ դա ակսեօմա պիտի լինի: Ուրեմն ը'...

— Ոչ, ես չեմ կասկածում, պնդեց երիտասարդը: — Բայց չէ որ ամեն բան ունի իր բնական ճանապարհը, ժամանակը և դասաւորութիւնը:

— Ի՞նչպէս:
— Իսկոյն կը պարզուի: Ես քեզ սիրելիս, հարցնում եմ, արդեօք դու ինձ հասկացել ես:

— Դարձեալ տարօրինակ հարց. մի՞թէ պարզ չէ, որ այն և այն: — Ոչինչ չի կարող խախտել իմ տրամադրութիւնն դէպի քեզ: Ոչոք չի կարող մազաչափ անգամ թուլացնել իմ սէրը դէպի քեզ, մինչև մահ գերեզման:

— Ուղիղ, սիրելիս, ծիծաղերես նայելով Համասփիւռի աչքերին, հարցրեց Պարտիզեանը:

— Երբեքում եմ այս պայծառ ու անբիծ լուսնով, աստղերով ու այս սքանչելի բնութեամբ, իմ և քո սիրով, ազնուութեամբ, որ իմ սէրս և ես ամբողջովին քեզ ենք պատկանում:

— Ո՛հ, կեանքս, ասաց երիտասարդը և նրա ձեռքը համբուրեց, դրեց կրծքին ու սեղմեց:

Մի րոպէ լռեցին, մնալով նոյն պոզայի մէջ: Պարտիզեանի մտքերը դարձեալ պղտորուեցան զգուցէ սա ինձ խաբուում է, գուցէ կեղծում է: Գուցէ սրա նպատակն է հաճոյախօսութեան արժանանալ սիրոյ պատրուակի տակ: Ո՛հ, սոսկալի բան կը լինի, եթէ իրօք խաբում է, այն ժամանակ ինձ համար խաւարիւր լուսին, թօթափեցէք աստղեր, պատառուիւր երկիր և ինձ կլանիր»: Այսպիսի ժխոր մտքեր պաշարեցին նրան: Նա մի վայրկեան յիշեց, որ շատ շատերը խաբում են միմիանց, կեղծ սէր յայտնում, փաշփայում, փաղաքշում, նուիրում միմիանց, բայց յետոյ է իմացում կեղծիքը և վախճանը եղբերգական է լինում: Նա նայեց սիրուհուն. յանկարծ նրա աչքերին երևեցաւ համասփիւռի սպիտակ կուրծքը, որ բաց կոճակների տակից երևալով՝ սպիտակին էր տալիս. նա հմայուեց: «Ո՛չ, ո՛չ, այս կուրծքը փայլում է սրբութեամբ և անմեղութեամբ. սա անկեղծ է և անարատ, ինչպէս գեղեցիկ հրեշտակ»:

Նա նայեց անթարթ աչքերով միջանի վայրկեան և ցնցուելով, երեսը ծածկեց ձեռքերով:

— Ուրեմն Համասփիւռ, հոգիս, մենք երջա-

նիկ ենք այս աշխարհում և թող մենք մեր հաստատակամութեամբ, սուրբ իդէալական սիրով օրինակ դառնանք շատերի, չը վախենանք բամբասանքից, չը յաղթունք կեղծ ընկերական և բարեմական դարչելի որոգայթներից, չընկճուենք կեանքի փոթորիկներից, այլ ապրենք սիրով կապուած նախ միմիանց համար և ապա հասարակութեան համար մինչև մահ:

— Սյո՛, հոգիս, այդպէս պէտք է լինի: Բայց մի միտք տանջում է ինձ, արդեօք քնչ պէտք է անել այն բանի դէմ, որ մայրդ սաստիկ հակառակ է մեր ամուսնութեան: Ա՛խ, այդ կինը ինչո՞ւ է քար գլորում մեր երջանկութեան դէմ. երանի թէ փող էլ ունենայի, որ բերէի հետս և նա էլ սիրէր ինձ:

— Դու մի մտածիր, հոգիս, այդ մասին, երբէք մի անհանգստանար: Վերջ ի վերջոյ նա էլ կը համաձայնի, հակառակ դէպքում կը հեռանամ նրանից, նշանակելով նրան ապրուստ. այնուհետև իմ մայրը կը լինի հասարակութիւնը:

— Աշխատիր, ամեն ինչ սիրով կատարուի, նա էլ համաձայնի, միտին սիրով ապրենք, շատ անախորժ կը լինի բաժանուել մօրից:

— Ոչինչ, յանցանք չի լինիլ բաժանուել այն ծնողներից, որոնք ցանկանում են իրանց որդոց սուրբ սիրոյ դէմ կռուել և այդպիսով երջանկութեան փոխարէն ցաւալի վախճան պատճառել: Ուրեմն եթէ նրանք պահել, պահպանել և մեծացրել

են մեզ, պէտք է վերջը բռնանան մեր ամենախնք-
նորոյն և ամենաքնքոյշ զգացմունքների վրայ: Ո՛հ,
ամենաթիւր կարծիք. չէ որ գազանն էլ կերակ-
րում, մեծացնում է գաւակներին: Եթէ քո ծնող-
ներն էլ հակառակեն, նրանք էլ կը զրկուեն քո
և իմ կողմից ծնող անունը կրելու, այդպէս է
թէ ո՛չ:

— Իհարկէ,

— Հոգիս, Համասփիւռ, անկեղծ ասա Սերեօ-
ժան քեզ խոստովանել է իր սէրը, կամ դու ի՞նչ
զգացմունք ես տածում դէպի նա:

— Այո, շատ որոշակի ակնարկներ է արել,
բայց իմ կողմից սուր և կծու պատասխաններ է
ստացել: Ես նրան ոչ թէ չեմ լարգում իբրև մար-
դու, այլ չափազանց հակակրում եմ:

— Հը՛ր, դառն և խորհրդաւոր կերպով ժպտ-
տաց Գրիշան:

Իարձեալ լուեցին միքանի վայրկեան: Լուսի-
նը առաջ էր սահում դէպի իր հանգստեան տե-
ղին: Նրա ճառագայթներն արդէն ծառերի տերե-
ների միջանցքներից ընկնում էին սիրահարների
վրայ և լուսաւորում նրանց: Համասփիւռի սիրուն
կուրծքը, գեղեցիկ և հրացայտ աչքերը, բոսորային
շուրթերը, վարդագոյն այտերը, կանոնաւոր կազ-
մուածքը, բարակ մէջքը, քնքոյշ ձեռքերը, խար-
տեաշ մազերը, կատարելապէս յաւերժահարս էին
զարձնում նրան:

Գրիշան, կրկին անգամ հայեացքը ձգելով նրա

կրծքին, ցնցուեց ամբողջ մարմնով, բռնկուեց նրա
սիրոյ և տարփանքի զգացմունքը. իսկոյն աջ ձեռ-
քը ձգեց օրիորդի մէջքովը, ձախով բռնեց նրա
աջ ձեռքը: Նոյն զգացմունքն առաջացաւ օրիորդի
մէջ. նա իր հեղահամբոյր գլուխը դրեց նրա
կրծքին և նրանք տարփածու շրթունքներով սկը-
սեցին համբոյրներ քաղել միմիանց այտերից:

Ո՛հ, որքան քաղցր են խանդավառ սիրոյ ա-
ռաջին համբոյրները, նրանք աւելի քաղցր են,
անուշ, քան ամենաքաղցր և ամենաանուշ բանը
աշխարհիս վրայ: Այսպէս մեր հերոսները միքանի
րոպէ շարունակ լուռ համբուրում էին, գգոււմ,
փափալում և նետուում իրար կրծքի: Ի՞նչ գրիչ
կը գրէ այս դրուժիւնն, թէ ի՞նչ լեզու կը պատմէ
այս տեսարանը. թէ հոգեբան այս րոպէն կ'ըմբռնէ
և ի՞նչ հմուտ վիպասան իր կարող տաղանդով բո-
մանական սիրոյ շարքը կ'անցկացնէ այս սէրը:
Այն րոպէին, երբ նրանք փաթաթուեցան իրար
վզով, սոխակն ու վարդն արթնացան և տեսնելով
նրանց նախանձեցին:

Երկնային, շատ երկնային, նրանք գրկախառնուած
համբուրում էին: Նրանք չը նկատեցին, որ լու-
սինն արդէն մօտ է հանգչելուն և սպիտակ ամ-
պերով ծածկուել է, աղօտացնելով իր պայծառ
լոյսը: Աքաղաղներն սկսեցին կանչել, շների հա-
չոցի ձայներ լսուեցին և քամին փչելով՝ ծառերի
սօսափուռը բարձրացրեց: Այժմ միայն նրանք

սթափուեցան և անմիջապէս կանգնեցին ոտքի ու սկսեցին դիմել դէպի տուն:

— Շատ ուշացայ, սիրելիս, շուտով գնամ տուն, դուցէ նկատեն իմ բացակայութիւնը:

— Բարի գիշեր, Անահիտս, Հոգիս, կեանքս, ասաց երիտասարդը, սեղմելով օրիորդի ձեռքը և վերջին անգամ համբուրելով նրա ճակատից:

— Գնա, սիրելիս, Տէր ընդ քեզ, ապահով և հանգիստ ելիր:

Պարտիզեանը ծառերի տակից դուրս եկաւ, շտապեց տուն: Իսկ Համասփիւռը սրտատրոփ մտաւ պարտէզ և տեսաւ, որ Սալօմէն քնած է նստարանի վրայ: Նա ձայնեց նրան, արթնացրեց, ասելով, — էլի ես շուտ արթնացայ, Սալօմէ, եթէ ոչ երկուսս էլ մինչև առաւօտ կը մնայինք պարտիզում քնած: Ես այն նստարանի վրայ նստած էի և քունս տարել էր: Ղտապիր մտնենք:

Նրանք ներս մտան տուն. բոլորը քնած էին, ոչ ոք ոչինչ չէր իմացել: Սալօմէն պառկեց բակում: Իսկ ինքը, առանց արմուկ հանելու, իր նընջարանի դուռը բացեց, ներս մտաւ և կրկին ծածկեց: Սպա շտապով շորերը հանեց և մտաւ անկողին. բայց բոլորովին քունը չը տարաւ, այլ այդ գիշերը և այդ քաղցր ըրուէն շարունակ պատկերանում էին աչքերի առաջ ...

Երեկոյ էր: Արևն իր վերջին ոսկեգոյն ճառագայթներն առատօրէն սփռել էր Դ... ամառանոցի և շրջակայ բարձրաբերձ անտառների վրայ: Երկինքը պարզ էր և անամպ. միայն արևմտեան կողմում, արևի սկաւառակի շուրջը հաւաքուած էին միջանի կտոր սպիտակ ամպեր, որոնք կարծես, չէին ցանկանում, որ արևն իր երեսը ցոյց տայ երկրին և իրանք ազահարար կլանելով արեգակի ճաճանչները, դեղնում-շառագունում էին և բոցավառում:

Օդը վերին աստիճանի զով էր և սթափեցուցիչ: Անտառի միջից լսելի էին անհոգ թռչունների երգն ու կկուռի միանուագ «կու, կու, կու, կու, կու» ձայնը: Ներքևում ձորակում՝ Դ...ի գիծ գետակի ափին հաւաքուած էին գիւղացի երեսալք, ոմանք ձուկ էն որսում, ոմանք էլ, լող գիտեցողները, ջրի հանդարտ տեղերում լողանում: Անտառի խորքից լսելի էր սալանքի շաւիղներում առաջ գնացող խոտով կամ ցորենով բարձած սայլերի ճռճոցը և սալապանի անուշ հոռովէլը: Լսելի էր նախիրը դէպի գիւղը քշող «չօբանների» և «չօբանուհիների» հովական սրտածմլիկ լէլէններն ու նրանց սրնգի յուղիչ ելեկշները...:

Կովերը բառաչում են, հորթուկները առճիկ ձգելով վազվզում իրանց մօր շուրջը և երբե-

մըն էլ մօտ վազում ծծերին, կսթ ուտելու, բայց անխիղճ փոքրիկ «չոբանը» զարկում է նրան անտառից կտրած կահուղ ճիպոտով և չի թող տալիս ուտելու. ոչխարը բառանչում է, այժը մկկում, էշը գռում, ձին խրխնջում: Գիւղի մէջ ամառանոց եկողները շատ լաւ տրամադրութեան տակ են. շատերը դուրս են եկել զբօսնելու այդ դիւթական բնութեան մէջ, շատերն էլ թէյը դրած առաջնեւրին, պատշգամբում նստած նայում են անցնող ճանապարհորդներին և քաղցր սագ ու բազ անում, շնչելով անտառից բուրոյ սօսիների և կաղնիների հոտով լի օդը: Հասուն օրիորդը նստած դաշնամուրի մօտ՝ իր քնքոյշ մատներով զարկում է դաշնամուրի վալիկներին, նուագում է սիրոյ երգ և իր անուշ կանացի ձայնով մասնակցում նուագին: Մի խօսքով բնութեան անկիրթ գաւակների ու քաղաքակիրթ մարդոց նուազն ու երգերը, ճանապարհորդների իրարանցումն ու կռօքի զանգակների զնգզնգոցը, ջրի քչքչոցն ու թռչունների ծլվլոցն, վերջալուսի հրաշալի տեսարանն ու բոցավառուած ամպերն միախառնուելով իրար, դիտող մարդուն վերացնում էին վեր, դէպի մի նոր երանելի երկիր, ուր չը կայ մարդկային հոգս ու վիշտ, ուր մարդիկ չար չեն, այլ բոլորն էլ բարի: Իջևանոցի համարներից մէկում նստած էր Սերեօթա Աւելեանը: Նա հագած ունէր սպիտակ բաճկոնակ և սև անդրավարտիկ: Համարը, որտեղ նա նստած էր, ներկայացնում էր փոքրիկ սենեակ, դարմանա-

խառն գաջով ծեփած, որ շատ տեղերում թափուել էր, լատակը փայտեայ, առանց ներկելու և տախտակներն այնքան էին բաժանուել իրարից, որ արանքներից ազատ և ապահով կերպով դուրս էին աճապարում հսկայ օթիզներ ու սև ճիճուներ, հիւրանոցի մշտական բնակիչները և խեղճ ճանապարհորդի վաստակեալ մարմնի վրայ հիւրանոցի կնիքը միքանի տեղ զարկում, միւս տեղերում էլ յիշելու համար այդ ախբանոցը: Անկիւնում դրուած էր մի մահճակալ, որի ոտներից մէկը կաղ էր, իսկ մահճակալի մօտ դրուած էր մի հին սեղան և երկու կոտրուած աթոռներ էլ լրացնում էին սենեակի զարդն ու կարասիքը:

Սերեօթան քնից արթնացաւ, լուացուեցաւ և թէյ պատուիրելով, պատուհանը բաց արեց ու նստեց: Միքանի ըոպէից յետոյ սպասաւորը ներս բերեց թէյ, մեծ շերեփի չափ թէյի գդալ էլ պնակի վրայ դրած:

Բայց ինչ էր անում Սերեօթան այստեղ, այս օտար երկրում: Նա երբէք իր կեանքում չէր եկել Գ... ամառանոց, իսկ այս տարի ինչն է պատճառը այսպէս յանկարծակի նրա այստեղ երևալուն:

Նրա երեսին երեցած միքանի մօայլ կնճիռները ցոյց էին տալիս, որ այդ կարճ ժամանակամիջոցում նրա մէջ մի մեծ փոփոխութիւն է պատահել, որ այն աներկիւղ, համարձակ և ամեն ինչ արհամարող Աւելեանի վրայ մեծ ճնշում է գործ դրուել: Նա ըոպէ առ ըոպէ կենդրոնանում էր իր

մէջ, աչքերը թէյի բաժակին կամ դուրս անտառին
յառելով և սկսում էր մտածել. մի ինչ որ պատ-
կեր գալիս կանգնում էր նրա առաջ, որից նա
անմիջապէս սոսկում էր, զարհուրում և այդ վայր-
կեանին աւելի ևս կնճռոտուելով ու ինքն իրան
զգուելով, ծամածռութիւններ էր անում՝ այդ պատ-
կերից, այդ մտքերից ազատուելու: Յաճախ նրա
կրծքի մուտք խորքերից մաշող հոգոցներ էին դուրս
գալիս: Նա տանջուում էր բարոյապէս, բայց թէ
ինչո՞ւ, դեռ յայտնի չէ: Նրա մէջ բարոյականու-
թիւնն ու զղջումն մի կողմից, իսկ անբարոյակա-
նութիւնն ու սուբեկտիւ աշխարհայեացքն միւս
կողմից կռիւ էին մղում իրար դէմ, շարունակ
խայթելով Սերեօթի սիրտը:

— Ոչինչ, փնթփնթաց նա լսելի ձայնով և ար-
համարհողական եղանակով, եղածն եղաւ և գուցէ
միքանի անգամ էլ կրկնուի: Պէտք է աւելի օգ-
տուել այս անցողական զգայնական աշխարհից:

Նա լռեց և սառած թէյով լի բաժակը ինս-
տինկտաբար վերցրեց ու մօտեցրեց շրթունքներին:
Մի կու՞մ անելուց յետոյ վայր դրեց ու ձեռքը շա-
րունակ բաժակի վրայ դրած, շարունակեց մտա-
ծել:

— Չէ՛ որ այսուհետև ես կաշկանդուած եմ
ամեն կերպ, ինչ կը կալանաւորեն, կը նստեցնեն
բանտ, ոչ ոք երեսիս չի նայիլ, խօսեց նա բարձ-
րաձայն և աչքերը արտասուքով լցուեցան:

«Բայց ոչինչ, դեռ կարելի է խուսափել հար-

ուածից, դեռ կարելի է օգտուել ազատութիւնից:
Իմ համոզմունքներս պինդ են, որպէս այս բարձ-
րաբերձ կաղնիները, թող արհամարեն տխմար մար-
դիկ, թող ինչ անուանեն ստոր մարդ, ոչինչ նը-
շանակութիւն չունի ինչ համար. իսկ իրանք թող
ամենաստոր գործերն անեն զազանի կերպով և
երևան գան իբրև մարդիկ»:

Նա դատարկեց բաժակը և հրեց մի կողմ:
«Հա. լաւ միտս ընկաւ, այժմ կարող եմ վերջա-
պէս միւս նպատակիս էլ հասնել, որի համար այն-
քան աշխատել եմ: Համասփիւռն այստեղ է, ինչպէս
ինչ ասաց Կէկէլը, նրան թող ճանկս ձգեմ, ապա
թող ինչ մինչև մահս աքսորեն, ուր կամենան,
թէկուզ հենց ես ինքս վերջ կը դնեմ կեանքիս,
քանի որ կշտացած կը լինեմ» աստց նա և ընկաւ
մտածմունքների մէջ, կարծես, դեռ սպասելով
վերջնական վճռին:

Նա հանեց ծոցի գրպանից ծխախոտը, մի
հատ վառեց և սկսեց ծխել: Ծուխը տանելով
մինչև թոքերի ամենահեռու մասերը, պահում էր
միքանի վայրկեան և ապա պռօշները միմիանց
սեղմելով և գլուխը վեր տնդելով դուրս էր թող-
նում, այնպէս որ ծուխը քուլա-քուլա բարձրանում
էր դէպի վեր և ցրւում օդի մէջ, երբեմն էլ թա-
ծակերից էր ծուխը դուրս թողնում, և ապա ինքը
աննպատակ կերպով հետաքրքրութեամբ նայում
ծխին, մինչև անյայտանալը:

— Խեղճ, Գրիշա, յուսով ես, որ շուտով կա-

մուսնանաս Համասփիւռի հետ, հը՛, գլուխը տարուբերեց նա նենգ ժպիտով—հապա ես որտեղ եմ, հանգիստ կերպով հեռուից դիտեմ, թէ ինչպէս դու կը գրկես այն սքանչելի հրեշտակին և կը համբուրես նրա քաղցր թշերը, ո՛չ, ո՛չ, այդ միայն ինձ է արժան, ինչպէս օրիորդ N N: Վերջին մտքերի վրայ նա լանկարծ ցնցուեց և նոյն կնճիռներն երևան եկան նրա դեղնած լայն ճակատին: Նա մնաց քարացած դրութեան մէջ:

—Եթէ աշխարհը տակն ու վրայ լինի, ամեն ինչ ինձ հակառակէ, ես պիտի Համասփիւռին էլ իմ ձեռքս ձգեմ: Դեռ նա, որպէս թիթեռ, կը թրպրտայ, կը խուսափէ ինձնից. բայց վերջ ի վերջոյ կ'ընկնի ձեռքս:

Նա ձեռքը տարաւ թէյի բաժակին, տեսաւ, որ դատարկ է: Մտապով կանչեց ծառային, հրամայեց երկրորդը բերել: Ինքն սկսեց ման գալ սենեակի մէջ ձեռները մէջքին դարսած: Դրսից եկող սթափեցուցիչ ձայները և դաշնամուրի նուազը չէին խանգարում նրա մտածմունքներին և կազմելիք ծրագրներին:

—Ա՛խր թնջ է այս աշխարհը, ինչի՞ համար ենք ապրում: Զէ՛ որ ամեն ինչ ստեղծուած է մեզ համար, որպէսզի վայելենք, և Աստուած էլ, որ ստեղծեց աշխարհը, ասաց «վայելեցէք աշխարհս իր բարիքներով»: Ամենայնմարը և ամենաողորմելին այն մարդն է, որ չի կարողանում օգտուել աշխարհից: Հապա սիրուն քնքոյշ արարածները՛,

ո՛հ, եօնրանց հոգուն մատաղ: Նրանք ստեղծուած են մեզ համար:

«Այժմ կանանց հարցն է բարձրացել ամբողջ Եւրոպայում, հա՛, հա՛, հա՛, տգէտ մարդիկ, ուզում են կանանց տղամարդկանց հետ հաւասարացնեն, որ նրանք էլ մեզ իշխեն. հապա չէ որ այն ժամանակ նրանք կը կորցնեն իրանց ամենամեծ և առանձնախտուկ նշանակութիւնն ու դերը, այսինքն «կին» լատկութիւնը: Շատ ծակ գազափարականներ էլ հրաժարվելով ամեն ինչից, իբր թէ ծառայում են ժողովրդին, գործում նրա համար, անխելքնե՛ր»:

Չարագուշակ ժպիտն անցաւ նրա արդէն մըռայլած երեսով: Նա մօտեցաւ պատուհանին, կանգնեց միքանի րոպէ, գլուխը դուրս հանեց և հայեց ամառանոցին: Այդ րոպէին ներս մտաւ ծառան թէյ բերելով:

—Տղայ, դարձաւ նրան Աւելեանը վեհանձն կերպով, անուեդ թնջ է:

—Կարապետ, աղա, պատասխանեց ծառան:

—Հա՛, Կարապետները միշտ լաւ տղերք են լինում, դու էլ լաւը կը լինիս: Ասա՛, տեսնեմ, դու վաղո՞ւց է այստեղ ես:

—Վա՛, աղա՛, ես էս գեղիցն եմ:

—Ուրեմն, աւելի լաւ: Բաս, որ այդպէս է, ասա՛ տեսնեմ, դու ճանաչում ես այստեղ մէջի մօտ ապրող ...ենց:

—Վոնց չէ՞, աղա, մենք էլ ընդունց մօտիկ ենք ապրում. էն որ Թիֆլիս քաղքումն էլ պարեկամ ունեն, հրէէ, հա, աղա, ըստեանց էլ ըրեումա, ասաց ծառան մօտենալով պատուհանին և մատով զիմաց ցոյց տալով:

—Ապրես, լաւ տղայ ես, Կարապետ: Բայց, ասա, դու գիտես, որ զբանց տանը ամառը մի զոնաղ է եկել Թիֆլիսից, հարցրեց Սերեօժան նստելով աթոռի վրայ:

—Հա՛, աղա, մի ամիս կըլի, մի սիրուն աղջիկ ա էկած, որ էն իմ ասած պարեկամի աղջիկնա:

—Անունն ի՞նչ է, չը գիտես:

—Չէ, աղա ջան, դրուստն ասեմ, գիտում չեմ, պատասխանեց ծոծրակը քորելով:

—Իէ լաւ, գնա Կարապետ, առ էս էլ քեզ խարջելու փող, ասաց Աւելեանը, գրպանից հանելով 20 կոպէկանոց և տալով ծառային:

—Սաղ ըլիս, աղա ջան, Աստօժ ջիբիդ բարաքեաթ տայ, ասաց ծառան և ուրախանալով դուրս ելաւ:

«Այս լաւ եղաւ, հաստատն իմացայ, որ Համասփիւռն այստեղ է և տեղն էլ տեսայ: Իէ՛, հիմի ես գիտեմ: Այժմ, խեղճ Գրիշա, ձեռներդ լուա Համասփիւռից և քո փաստաբանութիւնդ շարունակիր: Եւ եթէ դու քո արհեստով յաղթես ինձ, այն ժամանակ, օճօ, չես վայելի, Համասփիւռի քաղցրութիւնը. քանի որ դու ինձ ճանաչեցիր,

այժմ աւելի լաւ կը ցոյց տամ պատկերս: «Լինել թէ չը լինելուի հարցը դրուած է:

Արևն արդէն մայր մտաւ և մթնշողն իջաւ երկրի վրայ: Ժողովուրդն անտառից սկսեց իջնել գիւղը: Սերեօժան թէյը վերջացնելով, շորերը մաքրեց, անուշ օճանելիքով օճուեց, ակնոցները քթին պպղեցրեց և դուրս ելաւ...



VII

Մօցիկուլ Կէկէլը լսելով իսուռն ըուբլու անունը, հանգիստը կորցրեց: Նա մտածում էր, թէ ինչ կերպ սկսէ գործը, ինչ կերպ խօսէ համասփիւռ Սիրուներանի մօր հետ, որից կախուած էր ամեն ինչ, որ գործը գլուխ գայ: Ճիշտ է, նա հմուտ «մօցիկուլ» է, մեծամեծ սխրագործութիւններ է արել այդ ասպարէզում և դրանով բաւականին գումար յետ ձգել ապագայ աւելի սե օրերի համար, նա նոյնիսկ քոռերին սաղի տեղ է անցկացրել, չօլախներին, հիւանդներին՝ առողջի տեղ, քառասուն տարեկան թթուած աղջիկներին հարուստ ջէհէլ սիրուն տղի ետխէն կապել. ինչպէս ինքը միշտ կրկնում էր: Միթէ այժմս էլ չի կարող յաղթանակը տանել և 50 ըուբլի մրցանակը ստանալ: Մի հանգամանք էր այստեղ ծանրացնում և դժուարացնում գործը, այն որ աղջիկը սիրահարուած է ուրիշի հետ և ծնողներն էր նրա կողմն են: «Բայց ոչինչ, դրանց նմաններքն եմ շշկլացրել» ինքն իրան յուսադրում էր Կէկէլը:

Մի օր նա իր դեղնած հին շալը ծածկեց գլխին, բռնութամանը լիքը լցրեց և «Տէր-Ստուուած» կանչելով դուրս եկաւ տանից: Նա առաջուց սովորել էր Սիրուներանների տունը, ուստի ուղղակի եկաւ և դուռը բաղխեց: Փոքրիկ ծառան բաց արեց դուռը: Նա ներս ուղարկեց ծառային

յայտարարելու տանտիկնոջը, որ մի կին շատ կարևոր գործի պատճառով ուզում է նրա հետ առանձնապէս խօսել:

Փոքր ինչ յետոյ դուրս եկաւ մի ցածրահասակ, միջին տարիներով, գեղեցիկ կին, տնական հասարակ շորերով:

— Ո՞ւմ էք կամենում, հարցրեց նա անծանօթ կնոջը:

— Սիրուներանները էստեղ են կենում:

— Հրամանքէս, էստեղ, հենց ես եմ, պատասխանեց նա, հետաքրքրութեամբ նայելով դիմացինի արտաքինին:

— Ես ուզում եմ քեզ հետ ջոկ խօսել մի բանի վրայ, կարելի է ներս մտնել, ներողութիւն կ'անես:

— Համեցէք, ինչո՞ւ չէ:

Նրանք ներս մտան կահաւորուած փոքրիկ մաքուր դահլիճը և նստեցան:

— Քեզ էլ բանից աւարա արի, համա հաջաթ չէ, խէր է, ասաց նորեկը ժպտալով:

— Ոչինչ, տեսնենք ինչ բան կայ:

— Ձէր ասա, մի մաղարիչ կը լինի, թէ չէ:

— Ախր մի ասո՞ւ, տեսնեմ, ինչ բան է, յետոյ մաղարիչի համար խօսենք:

— Աղջիկդ ո՞րն է, քո, հարցրեց նա լուրջ դէմքով, նայելով չորս կողմը:

— Տանը չէ:

— Բաս ո՞ւր է:

— Իաջա եմ զրկել:

— Շուտ կը գայ:

— Մի ամիս յետոյ գալու է. թնչու ես հարցնում, հարցրեց տիկին Սիրունեանն, արդէն գլխի ընկնելով, թէ եկուորն թնչ նպատակով է եկել:

— Իրուստն ասեմ էլի, աղջկադ համար եմ եկել, համա առաջուց ասա, հն, թէ չէ:

— Անց ասեմ առաջուց, քանի որ չեմ ճանաչում տղին, դեռ ասա, ո՞վ է տղէն, յետոյ...

— Ի՞նչ ես ուզում, քն, Աստօժ գիփունանցմէն լաւը ձեզ է կամեցել, բախտը զրկել է ձեր տուն. որ դուք ձեզ էրնէկ տաք:

— Ա՛խր, ո՞վ է, դէ ասա, որ էդքան գովում ես:

— Հլա մի ասա, անունդ թնչ է:

— Կատինկա:

— Ա՛խ, Կատինկա ջան, որ տեսնես նրան, իմանաս նրա ինչ ըլիլը, մի տղայ, մի տղայ, որ էլ ի՞նչ ասեմ, որ սաղ Թիփլիզում ճրագով ման գաս, չես գտնի նրա հատը, ասաց Կէկէլը՝ ձեռքը շարժելով ու գլուխը տարուբերելով:

— Լաւ, լաւ, վաւերացնում էր տիկին Սիրունեանը Կէկէլի ասածները:

— Տղէն քսանուհինգ տարեկան, բոյով, բուսաթով, լաւ հագնուած, ճռճուան ու լակիրովնի պօլսապօփկէք, մազերը խուճուճ, ոնց որ հրեշտակ, չէշմակներն էլ աչքերին դրած, էլ չեմ կարող գովել, ասաց Կէկէլը՝ մատներին համարելով թուածը:

— Ի՞նչ գործ ունի, հարցրեց Կատինկան փոքր ինչ հետաքրքրուած:

— Բուղալտեր է, ամսական տասնուհինգ թուաման է վեր կալնում, լաւ ուտել, խմել, փայտօնով ման գալ, թխատրօն, ցիրկ, մուշտալիդ, օբա, էլ ի՞նչ ես ուզում, քն, ճրագով ման գալիր, չէիր գտնի նրան, համա ես գտայ, ասաց նա պարծենալով:

— Ե՛հ, ինչ ասեմ, շատ ես գովում, համա, չեմ գիտում:

— Վոյ, Կատինկա ջան, ես սուտ խօսմ չեմ ասում, բաս թէ սուտ ըլիմ ասում, իմ Իիգօլին թաղեմ, իմ հոգիս դժօխքի մէջ տեղում ըլի պպղած. քա՛, հանաք բան է աղջիկ տղայ պսակելը: Մի բան էլ ասեմ, որ ինձ էս վախտի մօցիկուլներեմէն չը գիտենաս, էն մօցիկուլներեմէն, չէ, չէ, ես սւրիշ եմ, յետոյ կը տեսնես էլի, ասաց նա ձայնը մեղմացնելով և շալի ծայրը բռնելով ու խաղացնելով:

— Հէր մեր ունի՞ տղէն, հարցրեց Կատինկան աւելի հետաքրքրուած:

— Մի հէր ունի, մի մէր ու մի պստիկ քիը, էլ ուրիշ ոչ որ, շա՛տ խալվաթ, շա՛տ:

— Անունն ու ազգն ի՞նչ է, որտե՞ղ են կենում:

— Անունն ու ազգը չեմ ասի, ինչկլի հաստատ խօսք չը տաս, ասաց Կէկէլը կատակօրէն ժպտալով:

Միքանի վարկեան մտատանջութեան մէջ
ընկաւ Կատինկան ու լռեց:

Էն լաւ բան է, գործս լաջող է գնում, պրծած
բան է, 5 թումանը ջիբումսա մտածեց մօցիկուրը:

— Ինքը ազիզ մեծացած, սուփթահի, խելօք,
հիմիկուայ շատ ուսումաւորներից խելօք ու գի-
տուն, հարփել չի դիտում, քշերները դուսը մնալ
չի գիտում, փիս փիս ընկերներ չունի, խաբել չի
գիտում, մի խօսքով Աստծու գառն տղայ: Ինքը
հաւնել ա աղջկադ ու ես էլ շատ գովեցի: Ջեր
դուն Աստծուն փառք տու, որ էնթաւուր տղէն
լայեղ ա անում անփող, անբաժինք աղջկանդ
տանելու:

— Ինչպէ՞ս թէ լայեղ ա անում, ասաց ինքնա-
սիրութիւնը վիրաւորուած կերպով Կատինկան,
— պակաս ուզողներ ունի՞ ու չեմ տալիս, այ, որ
նա լայեղ անի, բաս էրեւումա, ի՞նչ տղայ կը լինի:

Կէկէլը տեսաւ, որ իր անզգոյշ դարձուածքով
շինած բանը քանդուած է, ուստի փոխեց խօսքը:

— Ձէ, քա՛, խօս՛ չեմ ասում, որ իսկի լայեղ
չի անում, գիտեմ, որ շատ ուզողներ կ'ունենայ
աղջիկդ, համա սրա պէսը չի ըլի: Ձուր տեղը մի
անբախտացնի աղջկադ, խօսք տու, պրծի ու ջալ-
դով նշենք, բախտաւորացնենք նրանց, մենք էլ
քէփ անենք, էնքան լաւ-լաւ աղջիկներ են տալիս
փողով, բաժինքով, հարուստ, սիրուններ, համա
նա դիփունանց ճամփու ա քցում, մենակ քու
աղջկանդ ա հաւնել, ոչինչ էլ չի ուզում, ո՛չ

փող, ոչ բաժինք: Դէ, ասա՛, տալիս ես, թէ վեր
կենամ գնամ, ասաց նա խորամանկութեամբ շար-
ժում գործելով, իբր պատրաստուած է գնալու:

— Ախր մի ասա, ո՛վ է, տեսնեմ, բալքի ես
էլ եմ ճանաչում. հարց ու փորձ անեմ, իմանամ,
խօս առանց հարց ու փորձի բան չի լինի, ապրանք
խօս չեմ ծախում:

— Է՛հ, Կատինկա, չես գիտում, որ էս վախ-
տին մարդու դուշմները շատ են. լաւի մասին էլ
էնքան փիս փիս բաներ կ'օսեն, որ թէ էտունց
մտիկ անենք, պտի գնանք ջուրն ընկնենք: Հարց
ու փորձս ո՞րն է, ինձ չե՞ս հաւատում, թէ՛ մի
երկու գրօշի համար հոգիս կ'որցնեմ պտի. չէ, ես
ուրիշ մօցիկուրների նման սուտ չեմ օրթում ու-
տի, թէկուզ հազար թումաններ տան:

— Լաւ, անունն ու ազգն ասա՛, քա՛, բաս
անունը չիմանամ, ո՛վ է, որտեղ է կենում:

— Կասեմ, քա՛, ի՞նչ ես վաւորում, ասաց Կէ-
կէլը ծիծաղելով և կատակ անելով, չի փախչի մի
վախի, իմ ձեռքին չի՞ բանը, թէ ուզում ես ա-
ռանց ինձ գնաս բանը սարքիս ու ինձ ջափա-
հաղ չը տաս, էտ ասա:

— Է՛հ, ինչե՛ր ես մտածում, ամօթ չէ եղպէս
բան ասելը:

— Հա, քա՛, ամա մի բան կա՛լ, էս խօսքը
մեր մէջ մնայ, ասաց Կէկէլը ցածր ձայնով և նա-
յելով չորս կողմը, կարծես թէ չը գիտէր, որ մե-
նակ են դահլիճում:

— Ի՞նչ, հարցրեց շփոթուելով Կատինկան:

— Քա, ասում են, որ միթօմ քու աղջիկը էս վախտուալ աղջկերքի նման ինքն իրան սէր է քցում. քշեր ցերեկ ծածուկ ման է գալիս մի ինչ որ թաղալ աղվօկատի հետ, դրուստ է՞. ամա, գիտես, Կատինկա ջան, չը նեղանաս, որ հարցնում եմ:

— Ի՞հ, ես էլ գիտեմ բան ես ասում, քա, էն ատվակատը շատ լաւ տղալ է, նոր է ուսումը պրծել, մեր տուն բազի բազի գալիս գնում է ու դրուստն ասած աղջիկս նրան հաւնել է ու նա էլ աղջկաս, ես էլ եմ հաւնել տղին ու ո՞վ գիտէ, թէ Աստուած յաջողեց կը նշենք նրանց: Թո՛ղ, խալխն ի՞նչ ուզում է, ասի. իմ աղջկան էլ են ճանաչում, էն տղին էլ, ինձ էլ, Աստուած գիտէ ամեն բան. էրնէկ ուրիշների աղջիկներն էլ իմ աղջկաս նման իստակ, խելօք ու լիբբ բաներից հեռու լինին:

— Ասում ես, նշենք նրա հետ, զարմացաւ Կէկէլը, բաս իմ ասածը՞, էլ ընչի՞ եմ խօսում: Էն էլ էն տղի հետ, վա՛յ, վա՛յ, վա՛յ, ափսոս աղջիկ, ափսոս, ջուրը քցէք լաւ չէ՞. քանց էն տղին տաք:

— Ինչի՞ քա՛, հարցրեց Կատինկան արհամարհական ոճով:

— Ինչի՞, հը՛, խորհրդաւոր կերպով գլուխը շարժեց Կէկէլը, էն պիանիցին, էն անխելքին, էն

մշակների ընկերին ու քաղցած փորին, արմնում եմ շատ:

— Ձէ, էդ մի ասի, քոյրիկ, հոգու մեղք է բամբասելը, բաս էդ քու ասած տղէն ո՞վ է, որ նրանից էլ լաւ է,

— Սարգիս Աւելով կ'ասեն նրան, որ սաղ Թիփլիսը նրան լաւ է ճանանչում:

— Ի՞նչ, ի՞նչ, Սարգիս Աւելո՞վ, էն կինտօն, զայրացած վեր թուաւ տեղից Կատինկան, գնա՛, գնա՛, բաս դու էլ լաւ օմքին ես, որ էսքան օրթում կերար ու հոգիդ սևցրիր, գնա՛, էլ չը գաս իմ տուն:

— Ի՞նչ ես ասում, քա՛, է՛, գժուեցիր, ո՞վ է կինտօն, ոտքի ելաւ Կէկէլը:

— Էն, որ գիմնազիի աղջկան խարաք արեց ու հիմի փախել է, էն ըագբօյնիկը, գնա՛, գնա՛ իմ տանից, չե՞ս էլ ամանչում:

— Է՛յ, խելքի արի, անզգամ, ասաց Կէկէլը աչքերը չուելով, բաս քու լաւ պտուղ աղջկան տո՛ւ էն բէգասլին, որ հենց հիմիկուց իրար սիրում են. դուք ի՞նչ գիտէք մարդկութիւն:

— Գնա՛, գնա՛, ա՛յ կնիկ, լաւ եմ անում, քու հաշիւը չէ, Տէր Աստուած, ո՛րտեղից եկաւ, սատանայ է:

— Աբա մի տես, դու ե՞ս սատանի նման, թէ՞ ես, ասաց Կէկէլը՝ նայելով իր և ապա նրա վրայ:

— Հողեմ քու գլուխը, հա՛, բնէդիան:

— Բնէդիան էլ ես ու ծիպլիան, մասխարա: Ես քեզ ասում եմ, ինչմի դուրս անի շան նման, թող մարդավարի թքեմ էս տան վրայ ու դուս գնամ, թէ չէ՛, ասաց Կէկէլը մատը շարժելով:

— Նանից էլ բեթար ես, ուզում էիր մեզ տնով տեղով կրակը գցէիր, հա՛, անաստօծ:

— Կրակն ընկնէք, հա՛, բնէդիաններ, թո՛ւ քու աննամուս էրէսին, թաղեմ քու աղջկան էլ, քեզ էլ, թքեց Կէկէլը ուղիղ նրա երեսին ու շտապով դուրս ելաւ:

— Ումն ե՞ս թքում ու թաղում, դախպա, ասաց Կատինկան ու կռանալով՝ ոտի «չուստը» հանեց, վազեց Կէկէլի յետևից ու փողոցի դռանը յարձակուեց նրա վրայ: Սկսուեց կռիւ: Հայհոյում էին մէկ մէկու, մազերը քաշքշում, գոռում, աղաղակում, միմիանց շորերը պատառոտում, այնպէս որ նրանց տարօրինակ աղաղակների վրայ դրացի կանայք ու փողոցի անցուորականները ժողովուեցան և նրանց մեծ դժուարութեամբ բաժանեցին իրարից...



Գրեգոր Պարտիզեանը, գտնելով իր սրտի ընկեր, սկսեց աւելի եռանդով գործել: Համասփիւռի անբիծ սէրը մի նոր աւելի զօրեղ և հանրակարեկից ոգի ներշնչեց նրան: Ճիշտ է, որ սիրահարուած մարդիկ ամենամեծ էօզիստներն են, քայց Պարտիզեանն էօզիստ լինելով հանդերձ, պատկանում էր ժողովրդին: Նրա սկզբունքն էր գաղափարին ծառայել և նա աշխատում էր երբէք չը դաւաճանել նրան: Նա մտածում էր, որ մարդուս կեանքի խորդ ու բորդ ուղիղում, որտեղ յաճախ մարդոց քստմնելի արարքների ազդեցութեան ասկ, կեանքը ծանրանում է, էգօիստական հաճոյքներն են փոքր ինչ թեթեալնում կեանքի ճնշումը և կենդանութիւն ներշնչում: Եւ հաճոյքներից ամենամեծն ու ամենազօրեղը բնութեամբ սահմանուած «սէրն» է, որը եթէ երկուստեք է, այն ժամանակ միայն մարդուս թէ հոգեպէս և թէ ֆիզիքապէս երանելիութեան է հասցնում, իսկ եթէ սէրը մի կողմից է, իսկ միւս կողմից կեղծիք, այն ժամանակ նա կեանքի ամենադաժան ծծող պարագիտն է դառնում, որ ծծում, քամում է կեանքի ամենաքաղցր հիւթը: Ըստ Պարտիզեանի՝ սիրահարները չը պէտք է մօնօտօն կեանք վարեն, մօնօտօն գործուենութիւն ցոյց տան, այլ իրանց անկեղծ սիրոյ դրուամբ անդադար պէտք է ծառայեն և ուրիշներին:

Աէ՛ր, սէ՛ր, ախ, երանի՛ գայ այն ցանկա-
լի ժամը, երբ քո էութեան ամբողջ դադունիքը
պարզուի: Արդեօք դու ինչ մի աներևոյթ ոգի ես,
որ ոչ քո իսկական տեղն է յայտնի, ոչ այցելու-
թեանդ ժամը, և ոչ էլ նախերգանք ունիս: Բայց
երիտասարդութեան ամբողջ կեանքը քո մէջ է
գտնում բաւականութիւն. նրա սիրտը զարկում է
քեզ համար և վառ երեակայութիւնը թռչում,
սլանում է դէպի քեզ: Ի՛նչ ես դու, սէր, որ
չքնաղ հրեշտականման կուսի անբիծ կրծքի տակ
իջևանում ես և տիրապետում նրան:

Թող ոչ մի անզգայ մարդ անգամ չը հերքէ
սիրոյ գոյութիւնը: Աշխարհի սկզբից մինչև վերջը
կայ և կը լինի սէրը: Ո՞ր արարածն երիտասարդ
հասակում չէ ձգտել մի իդէալի՝ սէր երգելով, որ
երիտասարդ /արգապետը մտքով անգամ չի անց-
կացրել սիրոյ քաղցրութեան մասին, որ տաղանդը
կամ հանճարը, կամ մեծ գրողներն ու բանաս-
տեղծները չեն սիրահարուել և չեն երգել սէրը.
Նրանց ամեն մի տողը սիրով է ցօղուած և ամեն
մի միտք սիրոյ զգացմունքով շաղախուած: Բայց
եթէ նրանց սէրն անյաջող է եղել, և խորտա-
կուել, ո՛հ. փափկացէք քարեր և արտասուք թա-
փեցէք, նրանց սրտի տաճարներից վիշտ, թախիծ,
սիրոյ բեկորների յիխորտանք և ծուխ են դուրս
եկել, որպէս հանգած հրաբուխի բերանից ծուխը
դուրս է գալիս, իբրև հետք ժայթքման: Կարճ
ասած—այն մարդն, որ չէ զգացել և չի զգում սի-

րոյ էութիւնն ու քաղցրութիւնն և կամ չի ըն-
դունում, նա զուրկ է մարդուն շնորհուած ամե-
նաքնքոյշ և ամենալաւ զգացմունքներից:

Սիրոյ բացատրութիւնից մի շաբաթ լետոյ,
Գրիգոր Պարտիզեանը մի նամակ ստացաւ իր ըն-
կեր Ոսկան Բղղէեանից, որ ատամնաբոյժ էր: Նա
գրում էր, որ մօտերս մի ինչ որ «սուբէկտ», հա-
ւանականաբար Աւելանը, կեղծ սէր յայտնելով
գիմնազիայի վերջին դասարանի մի աշակերտուհու,
խաբել է նրան կեղտոտ հակումներով և, նողկալի
յանցանք գործելով, անյայտացել է...

Օրիորդը՝ լինելով մեծահոգի, չ'ուզենալով
յանցաւորին պատժել, թողել է ուսումն և տանը
նստած՝ ամօթի և խղճի խալթի ներքոյ տանջուած
է, հալւում ու մաշուած:

Հաղորդելով այս բանը Գրիգորին, նա խընդ-
րում էր գալ և յանձն առնել անմեղ անպատուա-
ծի պաշտպանութիւնը: Գրիգոր Պարտիզեանը կար-
դալով այս նամակը, լուզուեց, զայլացաւ և վճռեց
առանց յապաղելու շտապել քաղաք և հովանա-
ւորել այդ անբախտ օրիորդին:

Գալով Թիֆլիս, նա Ոսկանի միջոցով գտաւ
վերոյիշեալ օրիորդին:

— Գաղափարի մարդ ես, Գրիշա, եղի՛ր և չը
շեղուիս ուղիիցդ, սոսաց Ոսկանն ընկերական ան-
կեղծ բարեկամութեամբ:

— Ոչ, չի կարելի ինձ նման աննշանների հա-

մար շուայլել այդ բառն իր խոր իմաստով, բայց ես ձգտում եմ ծառայել դադափարին:

— Եւ տես, որ Համասփիււոյ բոլորովին չը կաշկանդէ քեզ և մոռացնել տայ քո պաշտպանութեանը դիմող ժողովրդին:

— Գրել էիր, որ այդ տմարդին Աւելեանն ինչ է եղել, ո՛հ, հրէշ, բացականչեց Պարտիզեանը:

— Սկզբում միայն ենթադրութիւններ հասան ականջիս, իսկ այժմ պարզուեց դրականապէս, որ նա է. հիմա այստեղ չէ և յայտնի չէ, ո՛ւր է փախել:

— Ոչինչ, ասաց Գրիշան, ատամները կրճտացնելով բարկութիւնից, — նա չի փախչի իմ ձեռքից, չի խուսափի օրէնքի և արդարութեան ճիրաններից: Ես ձրի յանձն եմ առնում վերաւորուած օրիորդի պատիւը վերականգնել և յանցաւորին պատժել տալ:

Երեկոյեան Գրիշան ու Ոսկանը մի կերպ գտան այն օրիորդի բնակարանը: Զանգահարեցին, դուռը բացուեց և շէմքին երևեցաւ մի միջահասակ կին սև շորերով, թուխ դէմքով: Նա, խոժոռելով դէմքը, հարցրեց.

— Ո՞ւմ էք ուզում, ո՞վ էք:

— Մայրիկ, օրիորդ Փնջիկեանն այստեղ է ապրում, հարցրեց Գրիշան քաղաքավարութեամբ:

— Էստեղ է ապրում. համա դուք ո՞վ էք,

հարցրեց կինը, կասկածանքով նայելով նրանց վրայ:

— Եթէ կարելի է, մայրիկ, ասաց Գրիշան, մի ըստէ դուրս կանչեցէք, ասացէք, որ երկու պարոններ շատ կարևոր գործի պատճառով տեսնել են ուզում իրան:

— Ախր, ո՞վ էք, որդի, դուք ի՞նչ բան ունիք նրա մօտ, Սերգօյի ընկերներէմէն խօսմ չէք:

— Ոչ, մայրիկ, ձեր ասածին չենք ճանաչում, դուք միայն դուրս կանչեցէք օրիորդին, խօսեց Բղդէեանը:

Կինը ներս մտաւ:

Գրիշան ու Ոսկանը լուռ իրար նայեցին, լսելով Սէրգօ անունը:

— Հասկացա՞ր, խօսեց Ոսկանը:

— Հասկացայ, հասկացայ, բայց ահա և գալիս է օրիորդը:

— Ո՞ւմ էք կամենում, պարոյնայք, լսուեց մի թոյլ կանացի ձայն:

— Ի՞նչ էք օրիորդ Փնջիկեանը, հարցրեց դարձեալ Գրիշան:

— Այո՛, ես եմ, համեցէք խնդրեմ ներս, հրաւիրեց օրիորդն և առաջնորդեց դէպի սենեակ:

Երիտասարդների հենց առաջին տպաւորութիւնը լաւ եղաւ նրա վրայ և նա, վստահ լինելով նրանց խոհեմութեանն ու ազնուութեանը, կանչեց ներս:

Նրանք մտան մի բաւականին ընդարձակ սենեակ, որ շատ պարզ կահ-կարասիք ունէր: Միւս սենեակից դուրս եկաւ օրիորդի մայրը և, յառած աչքերով նայելով անկոչ հիւրերի վրայ, նստեց մի կողմ:

—Նստեցէք, խնդրեմ, պարոնայք, ասաց օրիորդը քնքշուածամբ:

Երիտասարդներն ուշիուշով սկսեցին դիտել նրան: Նա մի գեղատեսիլ և նրբակազմ օրիորդ էր, մազերն երկար, որ զարդարում էին նրա թիկունքը: Աչքերը բաւական կրակոտ և զրաւիչ, դիմագծերը կանոնաւոր: Պարզ նկատելի էր, որ նա առաջ աւելի գեղեցիկ և առողջ պէտք է եղած լինէր. նրա գոյնը սփռած էր և աչքերը խոր ընկած: Զեւքերն իսկ դալկացած էին: Արտասանութիւնը վերին աստիճանի թախծալի և կուսական հասակին վաղաժամ: Նրա շարժումները տաղտուկ էին և ակամայից: Նա հագած ունէր ծաղկեայ չիթ կտորից շորեր, որ լաւ նստած լինելով նրա կազմուածքին, աւելի գեղեցկացնում էին նրա կազմուածքը: Հիւրերը նստեցին միմիանց մօտ մի կողմում, իսկ դիմաց բազկաթուռի վրայ նստեց ինքը՝ օրիորդն, սպասելով հիւրերի խօսելուն:

—Օրիորդ, ներեցէք մեր անսպասելի այցելութեանը, առաւել ևս, որ անձանօթ ենք: Իհարկէ, շատ խորթ է թւում ձեզ, բայց իսկոյն կիմանաք ամեն ինչ, խօսեց Պարտիզեանը:

—Ոչինչ, պարոնայք, ազնիւ մարդոց հետ միշտ կարելի է գործ ունենալ, պատասխանեց օրիորդը, շեշտելով ազնիւ բառը:

—Նախ պէտք է յայտնեմ, թէ Քնչն ստիպեց մեզ գալու ձեզ մօտ, օրիորդ, և երկրորդ, թէ ինչ է մեր նպատակը: Այն ժամանակ ձեզ համար ամեն ինչ պարզ կը լինի: Անկեղծ ասած, օրիորդ, մարդասիրութիւնն և մեր խիղճը մեզ յորդորեցին անհանգստացնել ձեզ: Եւ մենք խնդրում ենք, որ դուք լինիք մեզ մօտ բոլորովին անկեղծ, ընդունելով մեզ իբրև ձեր եղբայրներ, և առանց թաղանջելու կամ ամաչելու խօսէք ամեն ինչ. նամանաւորդ գիտցէք նախօրօք, որ ես փաստաբան եմ:

Օրիորդն, ուշադրութեամբ լսելով այս խօսքերը, մի րոպէ շփոթուեց և կասկածեց, որ մի գուցէ այս սլարոններն «անարդ»-ի ընկերներն են և դիմակաւորուելով եկել են իր մօտ երկդիմի նպատակներով: Բայց նայելով երիտասարդների հեղահամբոյր դէմքերին, կարդաց նրանց ներքին պարզութիւնն ու կարեկցութիւնը, ուստի վճռեց պարզ լինել նրանց մօտ:

—Մայրիկ, դու դնա, սամօվարը գցիր, դարձաւ նա մօրը: Սա դանդաղկոտութեամբ վեր կացաւ, դուրս գնաց և դուռը ծածկեց:

—Օրիորդ, մի վշտանաք, եթէ սկսում ենք խօսել ձեր սիրտըն կռճող նիւթի մասին: Բայց ստիպուած ենք խօսելու: Պարզն ասած ձեզ, լսեցինք ձեզ հետ պատահած սոսկալի եղեռնագոր-

ծուծիւնը և, ի խորոց սրտէ վշտանալով, շտապեցինք տեղեկանալու իսկուծեամբ և եղեռնագործին դատի ենթարկելու, ճառեց Գրիշան ցածր ձայնով:

Օրիորդն իսկոյն ալլալուեց, կարմրեց: Նրա մտքերը պղտորուեցին, սիրտն ալեկոծուեց և պատշաճ էր այդ բոլորին լալ բարձրաձայն, աղաղակել և նոյն իսկ խեղդուել, բայց աշխատեց իրան չը կորցնել: Նա լուռ էր և չէր շարժուում:

— Հաւատացէք, օրիորդ, որ նոյնչափ ցաւ պատճառել է ինձ և ընկերոջս, յարեց Ասկանը, որչափ որ դուք ունիք, և հենց նոյն պատճառով էլ ընկերս ամառանոցից երէկ վերադարձաւ իբրև «ազնիւ մարդ» օգնելու ձեզ ամեն կերպ, որքան որ հնարաւոր է:

— Մաղէմու ազէլ, մէջ ընկաւ Գրիշան, խընդրեմ պատմէք, թէ ինչ հանգամանքների մէջ երեւան եկաւ այն գարշելի հերոսի ցանկութիւնը, կամ թէ ինչպէ՞ս դուք խաբուեցիք նրանից:

— Ա՛խ, ծանր է, շատ ծանր, լիշել կրկին անգամ ամեն ինչ և պարզել. ես ամաչում եմ, չեմ կարող, ասաց օրիորդը կարեկցութիւն շարժող տօնով, — չեմ ուզում այն գազանի անունը տալ:

— Արիացէք, օրիորդ, պատմեցէք ամեն ինչ, վստահելով մեր անկեղծութեանն և մեր ազնուութեանը, այն ժամանակ վա՛յ սրիկային, շեշտեց Գրիշան:

— Նախ, ասացէք, խնդրեմ, ս՛վ է այդ անարգ

արարածը, անունն ազգը թնչ է, ընդմիջեց Ասկան Բղբէեանը, հանելով գրպանից ծխախոտը:

— Անունը, այդ չար մարդու անունը Սարգիս է, իսկ ազգը Աւելեան, թոյլ ձայնով շշնջաց օրիորդը և գետնին նայեց:

— Տես՛ր, Գրիշա, որ նա է, դարձաւ նրան Ասկանը, սրիկայ:

— Անարգ մարդ... դուրս թռան Գրիշայի շրթունքներից:

Մի բոլոր էրեքն էլ լուեցին: Նրանց ներքին աշխարհը փոթորկուել էր: Ազնիւ զգացմունքները բողբոք էին բարձրացրել իրանց կօնտրաստ զգացմունքների դէմ:

— Մարդի՛կ, մարդի՛կ, որ երբեմն շնից էլ ստորանում էք, բացականչեց Գրիշան: Բայց չեմ թողնի նրան մարտելու այս քայլը և շարունակելու նման գործունէութիւնը. այսպիսի դէպքերի համար հիմնուած են դադաստանատներ, որտեղ մարդու իրաւունքները, սրբութիւնը և կուսութիւնը պաշտպանուում են: Ես իմ բոլոր ուժերով պէտք է մաքառեմ այդպիսի սրբապղծութեանց դէմ: Եւ այժմս էլ Սերեօթա Աւելեանին, որին երբէք չեմ համակրել, տալ կը տամ իրան արժանի պատիժն ի տրիտուր իր այսպիսի զզուելի գործերի: Ոչինչ, օրիորդ, մի վշտանաք, մի թագնէք. մարդկանցից ամեն ինչ սպասելի է, դուք դարձեալ ազնիւ էք, վեհ էք, սուրբ էք, և ես իբր փաստաբան յանձնեմ առնում պաշտպանել ձեզ դատաւորի և հասա-

բակութեան կարծիքի տուաջ իմ բոլոր ուժերով:

Այդ ըրպէին ներս մտաւ օրիորդի մայրը, բերելով փոքրիկ մատուցարանի վրայ բիսկուիտ և երկու տեսակ քաղցրաւենի, դրեց սեղանի վրայ ու դուրս գնաց:

— Մայրիկ, ինչո՞ւ էք նեղութիւն քաշում, ինչ հարկաւոր է քաղցրաւենի:

— Ոչինչ, ոչինչ, միթէ նեղութիւն է, ասաց օրիորդը:

— Չեմ կարող թէյ խմել, ասաց Գրիշան, մինչև չը պատմէք ամեն ինչ, խնդրում եմ, վրստահ եղէք:

Օրիորդն ուղղուելով բազկաթուռի վրայ և կոկորդը մաքրելով, սկսեց պատմել:

— Տեսնում եմ, պարոնայք, որ դուք ազնիւ և բարոյական երիտասարդներ էք, որ շատ հազուադիւտ են մեր ներկայ երիտասարդութեան մէջ, ուստի ամեն ինչ կը պատմեմ ձեզ, յուսալով, որ ձեր ազնիւ սրտերում կը մնայ պատմածս և ժողովրդի ասէկոսէների նիւթ չի դառնայ: Ես զիմնազիտայում եմ սովորում. վերջին դասարանումն եմ: Ծնողներս, թէև տգէտ են, բայց խնամող են և բարեկամ: Հայրս համարեա ծերացած է և նա է պահում մեր ընտանիքը: Նա երկրորդ կարգի վաճառական է Ե... քաղաքում: Ունեմ մի եղբայր, որ այստեղի գործասերից մէկում զինուոր է: Ես բաւականին յաջող կերպով հասայ մինչև վերջին դասատուն: Իհարկէ, որպէս մարդ և որ-

պէս երիտասարդ ուսանող օրիորդ, ես ընկերուհիներիս հետ երբեմն երբեմն յաճախում էի թատրոն, երեկոյթներ և պարահանդէսներ: Ապրիլ ամսին մի օր գնացի երեկոյթ ընկերուհիներես հետ: Այնտեղ պատահեցան միւս ընկերուհիներիցս մի քանիսը, որոնք բաւականին լաւ հագնուած մի պարոնի հետ խօսում էին: Մենք զբօսնում էինք դահլիճում, խօսելով և վիճաբանելով այլ և այլ հարցերի մասին:

Այդ ըրպէին մայրը մատուցարանի վրայ ներս բերեց երեք բաժակ թէյ և դնելով սեղանին, դուրս ելաւ: Երիտասարդները, որ մեծ հետաքրքրութեամբ լսում էին, աթոռները մօտեցրին սեղանին և այդպիսով աւելի մօտեցան օրիորդին: Արդէն բաւական մութն էր: Օրիորդը վերցրեց սեղանի վրայ դրած լուցկին և վառեց ճրագը: Լոյսը, կարմրագոյն ապակու միջով անցնելով, աղօտ կերպով ընկաւ օրիորդի նիհար և դժգոյն դէմքին և աւելի խորհրդաւոր արտայայտութիւն տուեց:

— Շարունակեցէք, շարունակեցէք, օրիորդ, ասացին նրանք միաբերան:

— Մի քիչ յետոյ, մօտեցան ինձ ընկերուհիներս և ապա մօտ կանչելով այն պարոնին, ծանօթացրին ինձ և իմ հետ եղած ընկերուհիներես հետ: Սկզբում այդ պարոնը լաւ տպաւորութիւն արեց բոլորիս վրայ, մանաւանդ որ իրան պահում էր համեստ, լուրջ և խօսում էր բաւականին տրամաբանօրէն: Մի ուրիշ անգամ նա պատահելով

ինձ փողոցում, հասցէս խնդրեց՝ յաճախելու համար մեր տունն, առարկելով այն, որ իմ գաղափարներս և իմ ընաւորութիւնս չափազանց մեծ համակրութիւն են գտել նրա մօտ. ուստի շատ ցանկալի է նրան շինձ նման մի զարգացած և օրինակելի օրհորդի հետ մօտ ծանօթութիւն ունենալու:

— Խարեբայ, կոչեց Գրիշան շարժուելով տեղից և թէյի բաժակն աննպատակ կերպով լետ հրելով:

— Իա նրա տեմպերամենտն է, վաւերացրեց Ոսկանը:

Օրհորդը փոքր ինչ կանգ առաւ, մի հոգոց հանեց, որով կարծես սիրտը ճնշող լիշողութիւնները մի քիչ թեթեւացան և ապա շարունակեց:

— Յաճախելով մեր տունն, հետզհետէ նա զբաւեց մօրս համակրանքը: Եւ հաճոյախօսութիւններով կամաց-կամաց սկսեց ինձ իր սէրն յայտնել: Ես սկզբում սառն դատողութեան ենթարկելով նրա ասածները, նրա ծրագիրները, լաւ ընկերական շրջանը, որ ինքն էր մատնացոյց անում, ես համակրեցի նրան և իմ այդ համակրանքը հետզհետէ փոխուեց սիրոյ: Մեր սիրոյ վերջնական բացադրութիւնը եղաւ շատ առաջ: Ես սկսեցի սիրել նրան, մտածել նրա մասին: Ամեն ինչ ըստ երևոյթին վերջացած էր: Մի օր էլ զնացինք թատրոն, որ վերջացաւ ժամը 1-ին: Նա, այդ անազնիւրը, սկսեց դանազան անհաճելի ակնարկներ անել: Տեսայ, որ նա ոչ թէ տան կողմն

է ուղղում քայլերը, այլ մի ուրիշ կողմ: Ես սոսկացի. «Սերեօժա, ասացի կանգ առնելով, ո՛ւր ես գնում»: «Եթէ ինձ սիրում ես, եկ, ուր որ տանեմ, ապա թէ ոչ գնն և յաւիտեանս յաւիտենից կ'անբաղդանաս»: «Ա՛խր, թնչ է քո նպատակը, ո՛ւր ես գնում, Սերեօժա»: «Ես կամենում եմ այն, ինչ որ է մեր սիրոյ նպատակը, վերջ առաջ պէտք է յազեցում տանք մեր սիրուն, աւելի լաւ է, շուտով վայելենք կեանքի քաղցր պտուղը...»

— Սոսկում եմ, Սերեօժա, ես կ'ուշաթափուեմ, ասացի ես, և իրօք սիրտս սկսեց ուժգնութեամբ բաբախել, ծնկներս դողդողացին, աչքերս մթնեցին և քիչ մնաց վայր ընկնէի: Նա բռնեց ինձ: Գնանք, սիրելիս, կրկնեց նա, ահա կառք է անցնում, նստենք:

— Ո՛ւր, հարցրի ես:

— Ուր որ ես կը տանեմ, չէ՞ որ մենք միմեանց ենք պատկանում, մի՞թէ ինձ չես հնազանդիլ:

— Սիրում եմ, այո, բայց մի՞թէ այդ է միայն մեր սիրոյ նպատակը:

Յանկարծ նա ձեռքը տարաւ զրպանը և հանեց մի ատրճանակ:

— Եթէ չես ուզում, որ սրա զոհը լինիս, ասաց նա, եկ: Ուրեմն ինձ խաբս՛ւմ էիր այսքան ժամանակ:

Ես սոսկացի և վայր ընկայ: Կէս գիշերային խաւարում ոչ ոք չէր երևում, չը կար մէկը, որ ինձ ազատէր գիշատիչիս ձեռքերից: Կամեցայ ու-

ժերս հաւաքեմ և գոռամ, օգնութեան կանչեմ, բայց լեզուս կապուել էր ամօթից, բերանս չէր բացուում ու ձայնս փորս էր ընկել:

— Ա՛խր, սիրելիս, ասաց նա մեղմութեամբ, չէ՞ որ մենք սիրում ենք միմեանց և պէտք է անպայման ամուսնանանք, հետևապէս մեր այրուող սէրը հովացնենք, մի ամիս առաջ լինի այդ, թէ լետոյ, միևնոյն է, աւելի լաւ չէ՞, շատ օգտուել կեանքից, այնուհետև հող կը դառնանք և կ'անհետանանք: Ե՛կ, ե՛կ, հոգիս, ասաց նա կրակոտ հայեացքով, նայելով աչքերիս և ատրճանակը դրպանը դնելով:

— Բայց, Սերեօժա, չի կարելի մարդոց լիովին հաւատ ընծայել, ասացի ես:

— Ուրեմն դու ինձ չես ճանաչել մինչև այժմըս: Ցաւում եմ: Ե՛կ, աննմանս, այդ վախին և թերահաւատութեանդ լաղթիր: Միևնոյն է, մի ամիս լետոյ կ'ամուսնանանք:

Ես կորցրի կամքիս ոյժը, կանացի թողլ բնաւորութիւնս ընկճուեց այդ ցինիկ մարդու խօսքերի առաջ: Ես մի կօյրի նման հետևեցի նրան: Նա բռնել էր թևս և շարունակ խօսում էր, աշխատելով ինձ խրախուսել այդ քայլում: Ապա նա ինձ առաջնորդեց մի հիւրանոց. մտանք մի սենեակ և սօճ, սոսկում եմ, կատարուեց զազրելի չարագործութիւնը...»:

Վերջին խօսքերի վրայ գլորուեցին նրա փոսը նկած աչքերից արտասուքի խոշոր կաթիլներ և

նա թաշկինակով երեսը ծածկեց: Պարտիզեանը և Բողբէեանը արձանացած, լուռ լսում էին: Օրիորդի լուզիչ հեկեկանքը սաստիկ խղճահարեցրեց նրանց: Դրիշայի աչքերը նոյնպէս լցուեցան արտասուներով:

— Սրեկայ, կոչեց նա բռունցքը սեղմելով, — մահու պատիժն անգամ քիչ է նրան:

Բողբէեանը լուռ էր և դեռ մտածմունքով զբաղուած: Այդ միջոցին ներս մտաւ օրիորդի մայրը, մատուցարանը ձեռքին: Տեսաւ, որ թէյը դեռ չեն խմել և սաստիկ սառել է: Նայելով աղջկայ լացող դէմքին, նա տխուր ձայնով ասաց.

— Ելի լալիս ես, աղջիկս, մի՛ լար, խղճա ինձ, նա իր պատիժը կ'ստանայ, անի, Տէր Աստուած, թի՛չ ահեմ:

Նա վերցրեց սառած թէյը և չը նայելով երիտասարդների վրայ, դուրս ելաւ նոր թէյ բերելու:

Տիրեց ըոպէական խորհրդաւոր լռութիւն:

— Օրիորդ, մի լայք այլևս, հանգստացէք, դուք մեղաւոր չէք, այլ անազնիւ մարդն է մեղաւոր: Դուք դարձեալ կոյս էք և բարձր էք հարիւրաւոր «օրիորդ» կոչուած արարածներից, այն էլ ներկայիս «ազատամիտ» օրիորդներից: Ես յուզուեցի ձեր պատմութեամբ, սիրտս սկսում է ճմլուել: Բարոյականութիւնը, կուսութիւնը անպատուած է և խախտած, լանցագործը պէտք է իր արժանի պատիժը կրէ:

— Էլ ինչո՞ւ էք մտատանջու՞մ, օրիորդ, խօսեց Բղղէնանը, եղածը եղել է, ոչ ոք ձեզ չի կարող մեղադրել, խղճացէք ձեր ծնողներին, ձեր մատաղ հասակին:

— Գիտէք, պարոն, ի՞նչ է ասում Շէկսպիրը. «Ս.մեն մէկի համար կեանքն է թանգ, բայց ազնիւ մարդու համար կեանքից էլ թանգը պատիւն է»: Սլլևս մարդ չեմ, ես չ'ունիմ պատիւ, այլ հասարակութեան աչքից ընկած, արտաքսուած, մի դժբաղտ հալածական, որ ինձ փողոցում մատով պէտք է ցոյց տան, իբրև անառակի, պէտք է խուսափեն ինձանից: Ա՛հ, մահը գերագասելի է ինձ համար, ասաց նա և շարունակեց դառնազին հեկեկալ:

— Օրիորդ, չէ՞ որ դուք հասկացող էք, զարգացած, մի՞թէ մի անագնիւ և լլտի մարդու պատճառով պէտք է իզուր զոհուել, փյանալ: Ոչինչ, դուք վախենում էք հասարակական կարծիքից, բայց չէ՞ որ խելօք մարդը կը դատապարտէ մեղաւորին և ձեզ կը ներէ, մանաւանդ որ դուք խաբուել էք և այժմ ի սրտէ զղջում էք: Մարդիկ մասամբ հասել են այդ ցանկալի հասկացողութեան, որ զղջացած կնոջը պէտք է ներել և աւելի սիրել, ոչ թէ վերջին աքացին տալ և գլորել անդունդ: Իսկ հասարակ, ազէտ ժողովրդի կարծիքին չը պէտք է ուշադրութիւն դարձնել: Վերջապէս կայ արդարութիւն և արդարադատութիւն: Աւելեանին կը յանձնենք դատարանին և կը

տանք իր պատիժը, իսկ դուք բոլորի առաջ կը դուրս գաք արդար: Ես յանձն եմ առնում այդ դատը, խիղճս և սիրտս թելադրում են ինձ այդ: Կախազան պէտք է հանել այդ թշուառ հերոսին:

— Այո, դեռ նա շատերի գլխին կը խաղայ այդ խաղը, նախօրօք պէտք է վերջ դնել նրա հակաբարոյական արշաւանքներին:

Օրիորդը մաքրում էր աչքերը, ցանկանում էր հանգստանալ, բայց արցունքները չէին կանգնում, իրանք իրանց գլորւում էին ու թրջում դեղնած այտերը: Նրա վիրաւորուած կրծքի խորքերից կսկծալի հողոցներ էին դուրս գալիս, որ սարսեցնում էին ոչ միայն երկու պարոններին, այլ և ամբողջ սենեակը և անշունչ առարկաները:

— Իէ, ուրեմն դուք հանգիստ եղէք, օրիորդ, ամեն ինչ վերջացած է Աւելեանի համար. նրա «լինել թէ չը լինել»-ու հարցն է դրուած, ասաց Գրիշան և վերցրեց թէլը:

— Ո՛չ, ո՛չ, թողէք նրան, չեմ ցանկանում վրէժխնդիր լինել նրանից, քանի որ իմ «լինել թէ չը լինելը» վճռուած է, ասաց օրիորդը, աղերսելով Գրիշային:

— Ի՞նչպէս, օրիորդ, ներել նրան, ներել յանցանքներից ամենամեծը, անկարելի է, յարեց Պարտիզեանը շփոթուած՝ նայելով մերթ օրիորդին, մերթ ընկերջը:

— Այո՛, ես ներում եմ նրան, կը գայ մի օր, երբ արդէն նրա խիղճն իրան կը տանջէ և զղջալ

կը տայ. խնդրեմ հանգիստ թողէք նրան:

—Օրիորդ, քնչ էք ասում, բացականչեց Բրդդէեանը զարմացած, ինչպէս էք ներում նրան, նա մահուան պատժի է արժանի:

—Ինչ օգուտ, եթէ նա տարիներ շարունակ նստէ բանտում, չէ՞ որ ես արդէն յաւիտեան անպատուած եմ:

Նա մի րոպէ կանգ առաւ. Պարտիզեանն ու Բրդդէեանը լուռ էին: Նրանք, կարծես, չէին ուզում հաւատալ իրանց ականջներին:

—Կեանքի մէջ նա կը զղջայ իր արածները, և գուցէ դրական մարդ դառնայ, շարունակեց նա, թողէք, ի սէր Աստուծոյ, նա ինքն ընտ ինքեան կը կրէ իր պատիժը:

—Բայց եթէ ներել այս քայլը, նա կը շարունակէ նման լրքութիւնները, և շատ միամիտ օրիորդների ու տիկիներին իր կրքի զուհ կը դարձնէ, խօսեց Պարտիզեանը վրդովուած:

—Կը զղջայ, պարոն, կը զղջայ, չէ՞ որ նա մարդ է կոչուում, նա ունի սիրտ, խիղճ և զգացմունք, որոնք անբարեխաղ հանգամանքների շնորհիւ պղտորուել են և կեղտոտուել: Հետզհետէ կրելով իր լաւ ընկերների ազդեցութիւնը, կ'ուղղուի. մի խօսքով, պարոնայք, ես ձեզ խնդրում եմ այս գործի առիթով նրան դատարանի չը յանձնէք: Իսկ ե՛ս, ե՛ս... ոչինչ եմ արդէն... և գուցէ... միքանի օր... արտասանեց նա անհասկանալի բառեր:

Բրդդէեանն և Պարտիզեանը դարձեալ իրար երես նայեցին:

—Հոգով ուրախ եմ, որ կան ձեզ նման ազնիւ և բարոյական երիտասարդներ, որոնք կազմում են ազգի սիւները: Ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալուս, ասաց օրիորդը և լռեց:

Քէյն արդէն վերջացրել էին: Օրիորդի մայրն եկել—նստել էր նրանց մօտ և լուռ լսում էր նրանց: Բրդդէեանը հանեց ծոցի ժամացոյցը տեսաւ, որ ժամի 11-ն է արդէն:

—Գրիշա, ուշ է, գնանք, ասաց նա և կանգնեց:

—Օրիորդ, մեր վերջին խորհուրդն այս է,— մի մտածէք անցեալի մասին, մոռացէք ամեն ինչ, շարունակեցէք յաճախել գիմնագիտ, աւարտեցէք և հայ տիկնանց ու օրիորդների հետ ձեռք ձեռքի տուած գործեցէք, ես կ'այցելեմ շուտ-շուտ ձեզ, իբրև մի ազնիւ և բարեկիրթ օրիորդի և իհարկէ յուսով եմ, որ վստահ կը լինէք իմ անկեղծ բարեկամութեան: Յ'տեսութիւն, ազնիւ օրիորդ, բարի գիշեր, մայրիկ, ասաց նա ձեռք տալով նրանց և վերցնելով գլխարկն ու դառնալով դէպի դուռը:

—Յ'տեսութիւն, ասաց Բրդդէեանը, նոյնը և ես եմ կրկնում ձեզ, օրիորդ, մի անձնատուր լինէք մտածմունքների: Միշտ անցեալը մարդու սիրտը ճմլում է. ուրիշ է մտածել ներկայի և ապագայի մասին: Յ'տեսութիւն, մայրիկ, դուք էլ

Հանգիստ եղէք. ձեր աղջիկը շատ մաքուր և ազնիւ օրիորդ է, նրան սպասում է փայլուն ապագայ:

— Խորին համակրանքս և շնորհակալութիւնըս, ազնիւ պարոնայք, դուրս թաւն օրիորդի բերանից, որ վերստուրուած սրտի խորքիցն էին բղխում: Նա հետեւց նրանց մինչև փողոցի դուռը:

Երիտասարդները դուրս ելան և ծածկուեցան խաւարի մէջ: Օրիորդը դեռ երկար նստած մտածում էր, թէ արդեօք նրանք ազնիւ և անկեղծ մարդիկ էին, թէ Աւելեանի անզուգական ընկերները, որոնք եկել էին նրա դրութիւնն իմանալու: Նա պառկեց: Նրա մաշուած մարմինը հանգըստացաւ միքանի ժամ միայն:

Երկու օրից յետոյ, Պարտիզանն ու Բղդէեանը երեկոյեան ճրագլուռոցին եկան, ներս մտան և ինչ տեսան — Օրիորդն անշնչացած և դժգունած, պառկած էր սպիտակ ծաղկեզարդ դագաղի մէջ. մայրը սև հագած ողբում էր վաղաժամ թաւամած աղջկայ կորուստը: Սգւոր կանայք շրջապատել էին նրան, ոմանք լալիս էին բարձրաձայն, ոմանք կուրծք ծեծում, ոմանք էլ մխիթարում վշտացեալ մօրը: Գրիշայի և Ոսկանի աչքերից արտասուենքները դուրս ցայտեցին և նրանք երկար, առանց միմեանց հետ մի խօսք անգամ խօսելու, լուռ հեկեկում էին...

XII

Սրբօժա Աւելեանը դուրս գալով իջևանոցից, քիթը վեր ցցած, ակնոցներն աչքերին նրստեցրած, այս ու այն կողմ նայելով և ձեռնափայտը ափի մէջ պտտեցնելով մեծ փողոցի կողմից անցաւ — գնաց դէպի անտառ: Նա անհամարձակ քայլերով ...ենց տան կողքերից բարձրացաւ վեր և մի տեղ կանգնեց, կարծես, սպասելով մէկին: Նա թոյլ խաւարի միջով հազիւ հազ նկատեց ...ենց պարտիզում միքանի կանայք և երեխաներ, Տեսողութիւնը լարելով և ակնոցը աւելի պինդ սեղմելով քթին, նա աշխատեց որոշել չամասփիւռ Սիրունեանին, բայց վերջինս նրանց մէջ չը կար: Սպա նա գլխիկոր՝ քայլերը փոխեց: Նայելով իր շուրջը, խաւարից և ամեհի ծառերից զատ ոչ ոքի չը տեսաւ: Նա, իբրև քաղաքացի, քաղաքում ապրած — մեծացած, զիշերով չէր պատահել անտառում, ուստի այժմ երկիւղ անցու նրա մարմնով: Նա մտածեց, թէ վայրենի դազաններն իսկոյն կը շրջապատեն և կը պատառոտեն իրան այս մեկուսի անկիւնում և անյայտութեան մէջ կոչնչանայ նա: Ետ դէս ու դէն նայելուց և ոչ ոքի չը հանդիպելուց յետոյ, լուսախափ կամեցաւ յետ դռնալ: Յանկարծ ձախ կողմից լսեց փոքրիկ շան հաչոց, որից նա ցնցուեց և սառած մնաց իբր տեղում, աշխատելով շուրջ չը բարձրացնել: Փոքր

ինչ յետոյ լսելի եղան կանացի ձայներ, ս մոնք
 Հետզհետէ մօտենում էին: Եունչը բերանն առնե-
 լով, նա որոշեց համասփիւռի ձայնը: «Նա է, հա-
 մասփիւռն է, մտածեց նա, ոչ նա չէ, այո՛, այո՛,
 նա ինքն է, ճիշտ նրա արտասանութիւնը, իրաւ
 է արդեօք»: Ապա կամացուկ յենուեց ծառին և աչ-
 քերը չռելով սկսեց դիտել այն կողմը: «Բայց եթէ
 Գրիշան էլ հետը լինի, թնչ պիտի անեմ, երէկ նա
 'կարծեմ, վերադարձել է քաղաքից, անի, երանի
 կառքը ճանապարհին շուռ գար և նրան գլորէր
 խոր անդունդ, որ այժմս՝ այս ամենայարմար ըո-
 պէն չը խլէր. բայց ոչինչ»:

Խօսողները մօտեցան, նրանցից մէկը Համաս-
 փիւռն էր, իսկ միւսը աղախին Սալօմէն: Նրանք
 ուրախ-ուրախ մասլահաթ անելով իջնում էին դէ-
 պի տուն:

— Էլի էն օրուայ մանրդն ես ուզում, բարիշ-
 նա, հարցրեց Սալօմէն:

— Հնա՛, Սալօմէ, նա իմ բարեկամս է, շատ
 լաւ տղայ է, պատասխանեց Համասփիւռը:

— Բա խթ չի կալիս տուն, խի՛ ես թաքուն
 խօսում:

— Նա ամաչում է տանեցիներից, չի ուզում
 երևալ, համ էլ շուտով գնալու է, էլ թնչ երևալ:

Աւելեանը տեսնելով, որ ուրիշ ոչ ոք չը կայ,
 վճռեց ըոպէն ձեռքից չը թողնել:

— Օրիորդ, Համասփիւռ, ցածր կանչեց նա:
 Համասփիւռը այլայլուեց. ձայնը նրան ծա-

նօթ թուաց: Բայց դա Գրիշան չէր: Նա կանգ
 առաւ և նայեց այն կողմը, որտեղից լսուեց
 ձայնը:

— Օրիորդ, մի վախէք, ես եմ, Սերեօթան,
 ասաց նա և կամաց մօտ եկաւ:

— Ա՛հ, պարոն Աւելեան, դո՛ւք էք, այս թնչ
 էք շինում այստեղ, երբ էք եկել, հարցրեց Հա-
 մասփիւռը միամիտ ժպիտով:

— Լաւ եմ, օրիորդ, միքանի օր է, որ այս-
 տեղ եմ. գործ ունիմ այս կողմերում, բայց ձեզ
 չէի հանդիպում: Գրիշան այստեղ է, թէ ո՛չ,
 հարցրեց նա քաղաքավարութեամբ:

— Ոչ, նա գործով կանչուեց Թիֆլիս և դեռ
 չի եկել:

— Կանչուեց, ո՛վ կանչեց, ինչո՛ւ, հարցրեց
 նա իրար յետեից, շփոթուելով մի ինչ որ մըտ-
 քից:

— Չը գիտեմ, միայն ասաց, որ շուտով կը
 վերադառնայ:

Փոքրիկ շնիկը չէր հանգստանում հաչելուց,
 նա շուտ-շուտ յարձակում էր Աւելեանի վրայ և
 վախեցնում:

— Օրիորդ, կարելի՛ է միքանի ըոպէ աղախ-
 նին հեռացնէք, մի երկու խօսք ունիմ ասելու
 ձեզ, ասաց Աւելեանը հազիւ լսելի ձայնով:

Օրիորդը, կարծելով, թէ նա Գրիշայից լուր է
 բերել, հեռացրեց աղախնին, ասելով:

— Սալօմէ, մոփսիկին առ և այս ծառի տակ

նստիր, չը հեռանաս, ես էլ այս ծառի տակն եմ, իսկոյն կը գամ:

Նրանք միքանի քայլ հեռացան այդ տեղից:

Աւելեանը չարախնդութեամբ ժպտաց իր մըտքում և նրա դիւային աչքերը փայլեցին ուրախութիւնից. «Բանս յաջող է» մտածեց նա:

—Օրիորդ, ճիշտն ասեմ, ինձ մի զգացմունք է բերել այս կողմ և այս մութ գիշերին թափառել տալիս այս անտառում. նախ, խնդրեմ, թոյլ տուէք ինձ ձեզ հետ խօսելու, ոչ թէ յոգնակի, այլ եղակի, որ իհարկէ այժմ ժամանակն է այդպէս խօսելու:

—Ոչ, հարկաւոր չէ պատշաճութեան ու քաղաքավարութեան չափ ու սահմանից դուրս գալ. սառն կերպով ասաց օրիորդ Սիրունեանը, մի տեսակ սրտնեղութիւն զգալով:

—Շատ լաւ, օրիորդ, թող ձեր ցանկութեան համեմատ լինի: Ասացէք, խնդրեմ, դուք ինձ այսքան ժամանակ հասկացել էք, արդեօք իմ տածած զգացմունքս դէպի ձեզ պարզ է, խօսեց նա ակնոցները աչքից վերցնելով և ծոցը դնելով:

—Ի՞նչ էք ուզում ասել, պարոն Աւելեան, ես ոչինչ չեմ հասկանում, շփոթուեց Համասփիւռը և յետ-յետ քաշուեց: Եթէ իրօք բան ունիք ասելու, ասացէք, եթէ ոչ ուշ է, չեմ կարող մնալ երկար:

—Իսկոյն, օրիորդ, խնդրում եմ, միքանի ըոպէ համբերեցէք: Այո՛, դուք իմ կողմից դէպի ձեզ ոչինչ չէք նկատել:

—Ինչպէս չէ, մենք իբրև ծանօթ յարգում ենք մեկզմէկու. մանաւանդ, որ դուք Գրիշայի ընկերներից էք:

—Ձեր կողմից մի ուրիշ զգացմունք չը կա՞յ դէպի ի՞նձ:

—Ի՞նչ զգացմունք պէտքէ լինի, բացի յարգանքից, ասաց Համասփիւռը, արդէն հասկանալով Աւելեանի միտումները:

—Օրիորդ, ախ, եթէ գիտենայիք, թէ ո՞վ է ձեզ սիրում և ի՞նչ երջանիկ էք լինելու նրա հետ, ասաց Աւելեանը տրփանքով լցուած և կամենալով նրա ձեռքը բռնել:

—Խնդրեմ ձեզ չը կորցնէք, բարկացաւ օրիորդ Սիրունեանը, եթէ ակնարկում էք Գրիշային, այո՛, երջանիկ եմ լինելու նրա հետ, և շնորհակալ եմ ձեր բարի ցանկութեան համար, իսկ եթէ ուրիշ բան էք ուզում ասել, աւելորդ է:

—Օրիորդ, չէ որ բնականի դէմ չի կարելի մաքառել. եթէ մէկի սիրտը զարկում է միւսի համար, ոչինչ չի կարելի անել, բացի այն, որ մօտենան իրար:

—Պարոն Աւելեան, ես խնդրում եմ՝ ակնարկները թողէք և ձեր սրտին ասէք, իզուր տեղը չը զարկէ այնպիսի սրտի համար, որ անչափ տարածութեամբ հեռու է իրանից: Ց'տեսութիւն, ես շտապում եմ, ասաց նա և կամեցաւ հեռանալ:

—Օրիորդ, աղերսում եմ, մի երկու ըոպէ ևս:—Նրա կիրքը զարթնեց և շատ այլանդակ մըտ-

քեր ծագեցին նրա ուղեղում: «Զի յաջողում, քնչ անել, ախ, երանի մենակ լինէր, իսկոյն կը գրկէի և... ամեն ինչ վերջացած էր. թէկուզ աքսորէին ինձ, կախաղան հանէին: Սպանել աղախնին, զէնք չ'ունիմ մօտս, աշխատեմ էլի քաղցրութեամբ»: Նա դողում էր ամբողջ մարմնով, որպէս աշնանը՝ սառը ջրիցը դուրս եկած: «Ա՛խ, գոնէ միքանի համբոյր էլ է առնեմ». մտածեց նա:

— Աւելի էք գեղեցկացել ամառանոցում, երանի ձեր. ըրը... չը վերջացրեց նա խօսքը և աշխատեց ուրիշ խօսք ձգել, որ չը վիրաւորէ նրան:

— Սյդ քնչ գիրք է ձեր ձեռքին, երեւի անտառում կարդում էիք, այո՛, անտառում կարդալը շատ հրաշալի բան է, կարելի է մտքով սլանալ դէպի երեւակայական աշխարհները:

— Պարոն, շատ անհաճելի են ինձ ձեր այդպիսի կօմպիլմենտները:

— Բարիչնա, ուշացանք, քինանք, չայլ հագիր կըլի, ձայնեց Սալօմէն դիմացի ծառի տակից:

— Լսեցէք վերջին խօսքս, դուք ուրեմն սիրահարուած էք Գրիգոր Պարտիզեանի հետ:

— Ինչո՞ւ էք այդպիսի հարցեր տալիս:

— Ես ձեզ լուրջ եմ հարցնում:

— Այո՛:

— Ափսո՛ս կոյս, շատ ափսոս այսպիսի մի երկնային գեղեցկուհի, որին նրա նմանները պիտի տիրանան:

— Պարոն Աւելեան, ես արդէն հասկացայ ձեր

ստոր միտքը, հեռացէք խնդրեմ, դուք անագնիւ էք, ասաց օրիորդ Համասփիւռը և քայլեց դէպի Սալօմէի կողմը:

— Օրիորդ, միք թոյլ տայ վատ վերջաբան լինելու, ինձ հասկացէք, յետոյ գնացէք:

Համասփիւռը վճռեց լսել նրան մինչև վերջը, հասկանալ այդ մարդու մտքերը, ապա թքել և հեռանալ: Նա կանգնեց՝ արհամարհանօք նայելով նրան:

— Օրիորդ, ես կամենում եմ քաղցրութեամբ վերջացնել ամեն ինչ: Գոնէ թոյլ տուէք, միքանի անգամ համբուրեմ ձեր այտերից...

Սյդ պահուն մի երիտասարդ ձեռնափայտը ձեռքին՝ մօտեցաւ այդ տեղին և տեսնելով նրանց շշնջալիս, թագնուեց մօտի ծառի տակ ու սկսեց լսել նրանց խօսակցութիւնը: Դա Գրիգոր Պարտիզեանն էր, որ երէկ էր վերադարձել քաղաքից և ըստ սովորականի երեկոյեան դուրս էր եկել անտառը զբօսնելու: Նրա մտքով անգամ չէր անցնում, որ այս պահուն կը հանդիպի Համասփիւռին, որին չափազանց կարօտել էր և այն էլ Սերեօթալի՝ իր թշնամու, հետ, առանձին խօսակցելիս մթնում: Այս բանը աւելի քան մեծ զարմանք և բարկութիւն պատճառեց նրան. «խաբուած եմ չարաչար» մտածեց նա ձեռքը ճակատին դնելով: Սյդ ըոպէին Սերեօթալի վերջին խօսքերը հասան նրա ականջին և նա չըսպասելով Համասփիւռի պատասխանին, «Սրիկաներ» գոչեց և ձեռ-

նափայտը բարձրացրած յարձակուեց նրանց վրայ: Աւելեանն իսկոյն ճանաչեց նրա ձայնը, առանց մի վայրկեան ուշանալու, սպրդնեց նրա ձեռքից և փախչելով՝ անյայտացաւ անտառի խորքում: Հարուածը չը հասաւ նպատակին, որովհետեւ երբ նա բարձրացրեց ձեռնափայտը և կամենում էր վրայ բերել, դէմ ընկաւ ցածր ծառի ճիւղերին և ձեռքից վայր ընկաւ: Համասփիւռն՝ երկիւղից քարացած, մնաց իր տեղում: Պարտիզեանը կատաղած աչքերով, մի ձեռքը փոքր ինչ բարձրացրած, գլխարկը գետնին ընկած, արագ շնչառութեամբ միջանի վայրկեան կանգնած, լուռ նայում էր Համասփիւռին: Սալօմէն այդ անսպասելի աղաղակից վախեցած, սկսեց օգնութեան կանչել, շնիկն էլ միւս կողմից այս ու այն կողմ օրօրուելով սկսեց հաջել:

— Սուս կաց, Սալօմէ, լռիւր, թնչ ես գողում, նստիր հանգիստ, թող ոչ ոք չը գայ, ոչինչ չը կայ, սա աւազակ չէ, մենք հանաք արինք, ասաց թող ձայնով համասփիւռը, որի սիրտը սաստիկ գցում էր վախից:

Սալօմէն լռեց և շնիկին գիրկն առնելով, սկսեց խաղալ նրա հետ առանց ուշադրութիւն դարձնելու նրանց խօսակցութեան վրայ:

— Ի՞նչ էր անում այստեղ այդ պիղծը, հարցրեց վերջապէս Պարտիզեանը, ուղիղ նայելով Համասփիւռի երեսին, ուզենալով գուշակել նրա հոգեկան դրութիւնը:

— Ոչինչ, նա թնչ որ գործերի պատճառով եկել է ամառանոց և այստեղ զբօսնելու ժամանակ պատահեց ինձ, խնդրեց կանգնել միջանի ըսպէ, ասելով, որ կարևոր խօսք ունի ասելու. ես չէի ուզում կանգնել, բայց նա միջանի անգամ խնդրեց, և ես էլ կարծեցի, թէ նա քո մասին լուր է բերել, պատասխանեց Համասփիւռը դողդողալով:

— Պատահե՛ց, խաբօ՞ւմ ես, դու անգութ աղջիկ, դո՞ւ էլ այդպէս: Ասո՛ւ շուտով պարզը, թնչ յարաբերութեան մէջ էք եղել դու և այդ մարդասպանը, սոս՛, ս՛հ, արիւնը գլուխս զարկեց:

— Ոչինչ, սիրելիս, իմ և քո սէրը վկայ, քո ազնուութիւնը վկայ, որ ես ատում եմ նրան, դեռ հանդարտուիր, հոգիս, լսիր ինձ, սառն կերպով դատիր, լետոյ եզրակացութիւն արա, թէ չէ ինչո՞ւ ես տեսականապէս եզրակացութիւններ անում:

— Լռիր, և դեռ երգւո՞ւմ ես մեր սիրով, որ արդէն պղծեցիր:

— Մեղաւոր չեմ, Գրիշա, ես դարձեալ քեզ սիրում եմ, հանգստացիր, խնդրում եմ, վաղը կը խօսենք այս մասին:

— Ոչ, ս՛չ, այլևս գործ չ'ունիմ քեզ հետ, և լաւ է, որ մօտս չը կայ ատրճանակ, եթէ ոչ երկուսիդ հենց համբուրուելիս լաւիտենական քնով կը հանգստացնէի իրար մօտ:

— Ի՛նչ, համբուրուել, մի ուրիշի հետ, ս՛հ, Տէր Աստուած, ինչե՛ր ես ատում, Գրիշա, խղճա ինձ, մի տանջիր:

— Ուրանո՞ւմ ես, հա՛, չէ՞ որ ես ականջովս լսեցի նրա «համբոյր» բառերը, եթէ այդպիսի բան չը կայ ձեր մէջ նախ՝ նա քեզ որտեղից գտաւ անտառում և վերջապէս այս մթնում փոփոսալ, համբոյրների մասին խօսե՛լ: Մի՞թէ սա դաւաճանութիւն չէ: Վերջացաւ ամեն ինչ, ընդմիշտ կտրեցիր քո և իմ կապը, ազատ ես այժմուանից և ամրացրու քո գաղտնի սիրային կապերը այն գազանի հետ, ասաց Պարտիզեանը փոքր ինչ հեռանալով:

— Գրիշա, սխալուում ես, սկսեց հեկեկալ Համասփիւռը: Ա՛խ, Տէր Աստուած, որտեղից լոյս ընկաւ այդ անիրաւ մարդը, ես ինչո՞ւ խօսեցի նրա հետ, արտասուեց նա, թաշկինակով երեսը ծածկած:

— Կեղծ են արտասոււնքներդ, Համասփիւռ, շուտով կը չորանան նրանք, կանայք սովոր են խայթել և կոկորդիլեան արտասոււնքներ թափել:

Այդ միջոցին անտառի միջից լսուեցին տղամարդկանց խօսակցութեան ձայներ:

— Փորձանք պատահած չը լինի՞, ա՛խր լուսնեակ դիշեր էլ չէ, մութն է, ասում էր մէկը:

— Սալօմէ, ձայնեց միւսը բաւականին ուժեղ ձայնով և արձագանքը տարածուեց ամբողջ անտառում:

Համասփիւռն ու Գրիգորը չը լսեցին այս ձայնը: Համասփիւռը դեռ լալիս էր՝ աչքերը ծածկած, իսկ Գրիգորը, վրէժխնդրութեան ոգով լցուած, նայում էր նրան և բռուցքները սեղմում:

— Բարիշնա, մեզ են մոտ գալիս, հօրէս կանչեցին իմ անունը, ասաց Սալօմէն մօտենալով օրիորդին. վա՛, խէ՛ ես լալիս, հարցրեց նա թե՛ր բռնելով և միևնոյն ժամանակ զննողաբար նայելով երիտասարդին, ուզենալով ըմբռնել ամբողջ եղելութեան գաղտնիքը:

— Գալիս են, հարցրեց Համասփիւռը, Սալօմէ ջան, չ՛ասես, թէ լալիս էի: Ա՛խ, այս ի՛նչ սև օր է:

— Գէհ, Համասփիւռ, մնաս բարով ընդմիշտ, դու ի՞նչ դաւաճանեցիր, թող քո խիղճը քեզ դատաւոր լինի, ասաց Գրիգորը և առանց լետ նայելու սնյախտացաւ մթութեան մէջ:

— Գրիշա, Գրիշա, սպանիր ինձ, սկսեց աղեկատուր լալ Համասփիւռը միքանի ըրպէ՛ շարունակ: Աղախիւնը ոչինչ չը հասկանալով, թե՛ից բըռնից և առաջնորդեց դէպի տուն:

— Ա՛խր, խի՞ ես լալիս, ո՞վ էր էդ մարդը ր, հարցրեց նա:

— Նա իմ բարեկամս է, կմկմալով ասաց Համասփիւռը, մի վատ լուր է բերել, որ մեր բարեկամներից մէկը շատ հիւանդ է:

— Վո՛ւր, վո՛ւր, դո՞րթ, ցաւակցական եղանակով ասաց աղախիւնը:

— Սալօմէ, դու ոչինչ չ՛ասես տանը, թող նրանք չ՛իմանան ու լաց լինին, երբոր ինձ կը հարցնեն, թէ ինչո՞ւ եմ լաց եղել, կասեմ քիչ վատ զգացի ինձ, գլուխս սկսեց ցաւել:

—Լաւ, լաւ, բարիշնա ջան: Հօրէս հմիկ մեզ
են փնտրում աղէն ու ախպէրը:

—Ոչինչ, մենք ուղիղ տուն գնանք. թող
նրանք գան մեզ տանը տեսնեն:

Նրանք իջան դէպի տուն: Համասփիււր սաս-
տիկ յուզուած էր. նրա մտքից վայրկեան անգամ
չէր հեռանում այդ սոսկալի իրականութիւնը—
Գրիշայի բաժանուելը բոլորովին իզուր:

Տանը նա հաւատացրեց, որ գլուխը ցաւում
էր և նստել էր մի տեղ հանգստանալու, մինչև
որ գլխացաւն անցաւ: Եւ ամբողջ գիշեր քունը
մօտ չ'եկաւ նրա գեղեցիկ աչքերին: Նա անկողնում
լուռ լալիս էր շարունակ: Երբեմն երբեմն վել էր
կենում, պատուհանը բաց անում և դիտում շր-
ջակայքը. այդ միջոցին զանազան չար մտքեր էին
անցնում նրա գլխով:

Բայց նա դեռ սիրում էր ընրանս, դեռ յօյ-
ունէր, որ իր հաւատարմութիւնն ու սէրը կը
ցրեն Գրիգորի կասկածանքը:

Աշուն է: Բնութիւնը ծանրաբեռնուած է
պտուղներով: Երկինքն հետզհետէ իր ժպտալի
պայծառ երեսը փոխում է. թանձր ամպերը, որ-
պէս կնձիւռներ, պատում են նրան և արտայայ-
տութիւնը փոխում: Օրերով արևը ծածկուած է
մնում ամպերի յետևը. երբեմն երբեմն փչում է
հիւսիսային քամին և որպէս դուժկան, լիշեցնում
է մօտալուտ ձմռան դալուստը: Ծառերն արդէն
զրկում են անրևներից, որոնք գունատուելով և
գունաթափուելով, միմեանց յետևից պոկում են
ամենաթույլ քամու ազդեցութեան տակ անգամ:

Սմառանոց գնացողները, աշակերտներն ու
աշակերտուհիք, ճանապարհորդները վաղուց ար-
դէն վերադարձել են քաղաք, ամեն մարդ նոր
ոյժ, նոր եռանդ ստացած սկսել է իր գործը:

Գրիգոր Պարտիզեանն իր ծնողների հետ վե-
րադառնալով քաղաք, սկզբում, կարծես, յոգնած
և ճնշուած էր մի ինչ որ ազդեցութեան ներքոյ.
կեանքի ուղիում պատահած առաջին մեծ սիրաս-
թափութիւնը նրան սթափեցրեց. նա իր գործու-
նէութեան կարճ՝ բայց բազմարդիւն, ժամանակա-
միջոցում շատ էր պատահել սիրասթափուածների
և շատ մարդկային նենդութեան զոհ գարձածնե-
րի, ըմբռնել նրանց դրութիւնը, թափանցել նրանց
մորմոքող սրտի զգացմունքների մէջ և օգնել, ինչ

կերպ որ կարողացել է: Բայց ահա այժմ ինքն է խաբուած, այն էլ իր իդէալացրած քնքոյշ էակից: Յաճախ նա մտածում էր այդ մասին, պատկերացնում կեանքն իր բոլոր գոյներով մտքի աչքերի առաջ, աշխատելով լաւ ըմբռնել նրան, որպէսզի յետագայում էլ չ'ընկճուի կեանքի խորթ երևոյթնեբրից: Երկու ամիս նա բոլորովին ուշքն ու միտքը ցրած, շատ քիչ էր գործում. բայց կամաց-կամաց հիասթափուեց և սկսեց գործել նախկին եռանդով ու գաղափարով: Երբեմն երբեմն միայն նրա միտքն էր ընկնում Համասփիւռ Սիրունեանը, նրա գեղեցիկ դէմքը, ժպիտը, հայեացքը, քաղցր զրոյցները և բացատրման գիշերը: Այդ ժամանակ միայն խոր հոգոց էր դուրս թռչում նրա կրծքից: Աւելեանի՝ Սիրունեանի հետ հանդիպումը անտառում նա չը կամեցաւ պարզել, թէ իրօք դա համասփիւռի կողմից դաւաճանութեան արգասիք էր, թէ պատահմամբ էր այդ տեսակցութիւնը: «Ականջներովս լսեցի «համբոյրներ» բառերն ու աչքերովս տեսայ խօսակցութեան ձևը, կրկնում էր նա ինքն իրան, եթէ Համասփիւռը նրա հետ այդքան մտերիմ չը լինէր, նա երբէք չէր համարձակուի այդ պահուն խօսել նրա հետ և այն էլ համբոյրների մասին: Ո՛չ, ո՛չ, Համասփիւռը խաբում էր ինձ և դաւաճանեց»: Հենց այս սխալ կարծիքը և կասկածը պատճառ դարձան նրա և Համասփիւռի միառժամանակ տանջուելուն բարոյապէս:

Օրիորդ Համասփիւռ Սիրունեանը բաժանուելով իր սրտի ընկեր Պարտիզեանից, կորցրեց հոգեկան հանգիստը: Նա գալով Թիֆլիս շատ աշխատեց, որ Գրիգորին պատահէ մի որևէ տեղում, խօսէ նրա հետ, պարզէ ամեն ինչ, բայց չէր յաջողում: Միքանի անգամ էլ վճռեց ուղղակի տուն ելթալ և տեսնել, բայց մտադրութիւնից բոլոր անգամն էլ լեռ կանգնեց, լիշեւով Գրիշայի մօր տրամադրութիւնը դէպի ինքը, այսինքն, որ ինքը, նիւթականի կողմից դժբաղդ այդ աղջիկը, չէ կարող լինել նրա հարսը, քանի որ փող ու բաժինք չ'ունի: Ի՛նչ անել: Օրէցօր վատանում էր: Ընթերցանութիւնն ու տնային գործերը չէին կարողանում մոռանալ տալ ամեն ինչ, հանգստացնել նրան: «Զրկուել մի այդպիսի գաղափարական երիտասարդից, որ հազուադէպ է իր ձգտումներով և գործերով դժուարին է» կրկնում էր նա շարունակ: Հետզհետէ ներքին տառապանքը ազդեց ֆիզիքականի վրայ. պատահում էր, որ ամբողջ օրով պառկած էր լինում մահճակալի վրայ, ոչ ուտում էր, ոչ խմում և ոչ խօսում: Քնքոյշ կրծքից դուրս եկած հոգոցները պատերին անգամ սարսեցնում էին ու խղճահարում: Մայրը՝ տիկին Կատարինէն, սկսեց հետեւել աղջկան, խրատել, յորդորել, խընդրել, որ սրտի այդ մաշող գաղտնիքը յայտնէ իրան՝ որպէս մօր, վստահ լինելով, որ քցաւին դարման կանի»: Համասփիւռը մտածելով, որ մայրն արդէն գիտէ իր սէրը դէպի Պարտիզեանը և որ նա հա-

մակրում է նրան, վճռեց յայտնել ամեն ինչ և նոյնիսկ օգնութիւն խնդրել: «Ահրջ ի վերջոյ, սիրելի մայրիկ, ես կը մեռնեմ, եթէ Գրիշան ինձ թողնէ, իբրև մի վատ աղջկայ: Ես նրան այժմ ել սիրում եմ և մինչև սառը գերեզման իջնելս կը սիրեմ նրան» վերջացրեց իր խոստովանութիւնն այս խօսքերով:

— Ես մեռնեմ, որդի, քու տեղը, քու անամ ես ու քու վատ օրը չը տեսնեմ, ասաց մայրը, ինչ ես դրս համար հալումաշ լինում, ես կը գնամ, կը խօսեմ Գրիշայի ու մօր հետ ու ամեն բան կը սարքեմ: Ձէ որ Գրիշան քեզ շատ էր սիրում: Աստօժ ձեզ մէկգմէկու համար է ստեղծել, սիրտդ լաւ պահիր, հենց էգուց կը գնամ ես»:

Համասփիւռը հոգով ուրախացաւ և ժպտաց մօր երեսին: Մայրը նրան զբաղեցնելու համար, պատմեց մօցիկուլի գալը Աւելեանի համար, որ մինչև այժմ չէր պատմել, և բաւականին ծիծաղեցրեց աղջկան: Հայրը չէր խառնուում աղջկայ մարդու տալուն, այդ հոգսն ամբողջովին ձգել էր կնոջ վրայ, և համաձայն էր նրա ընտրութեանը, թէկուզ փեսացուն հասարակ մշակ լինի:



Սերեօժա Աւելեանն հենց այն չարաբաստիկ գիշերը, երբ չը յաջողուեց իր մտադրութիւնը, որի համար երկար աշխատեց զանազան ստոր միջոցների դիմելով և բռնուեց իր ոսոխից, անտառից փախչելով, ընկաւ պոստի կայարանը, լծել տուեց սուրհանդակը և մթնով ճանապարհ ընկաւ, թէ ո՞ւր, ինքն էլ չը գիտէր: Նա աշխատում էր վայրկեան չը կորցնել և փախչել այդտեղից, որ մի գուցէ Պարտիզեանը ատրճանակը ձեռքին հասնի ու մի ակնթարթում ոչնչացնէ նրան: «Բայց դարձեալ կ'աշխատեմ հասնել նպատակիս, չեմ յուսահատուի» մտածում էր նա ճանապարհին և միևնոյն ժամանակ կառապանին հրամայում սրարշաւ ընթանալ:

Միքանի ամիս շարունակ նա գտնուում էր Կ... քաղաքում, որտեղ ունէր հեռու ազգական և որին հաւատացրել էր, որ իբր թէ ձանձրանալով Թիֆլիս քաղաքի աղմկալից կեանքից և մի փոքր էլ առողջութիւնը քայքայուած լինելով, եկել է այստեղ հանգստանալու: Նա այսպէս էր դատում, որ Թիֆլիսում ամեն ինչ կը մոռանան, որ Պարտիզեանն էլ կամ կը հաշտուի օրիորդ Սիրունեանի հետ և իրան կը ներէ և կամ թէ անձնասպանութիւն կը գործէ ինքնասիրութիւնից դրդուած, վրայ հասնելով սիրուհու դաւաճանութեանը, ու

այդպիսով Սերեօժան կ'ազատուի իր հակառակորդից:

Նրա ընկերները, որպէս հաւատարիմ և գաղափարակիր նրան, շարունակ նամակ էին գրում նրան, տեղեկութիւններ հաղորդելով քաղաքի կեանքից, Սիրունեանի ու Պարտիզեանի դրութիւնից և իրանց քաջագործութիւններից:

Չը նայած, որ նա անգործ շրջում էր անտառներում, ուտում, խմում, բայց նրա ներքինը հետզհետէ փոթորկւում էր: Նա կարօտում էր իր ծննդավայրը, բարեկամներին, ազգականներին, թատրոնը, ցիւրկը, և վերադառնալու ցանկութիւնն աւելի զօրեղանում էր նրա մէջ: Ընկերների նկարագրութիւններն իրանց լկտի ու անբարոյական կենցաղի մասին, նրանց հայհոյանքները Պարտիզեանի հասցէին՝ նամակի միջոցաւ, ձանձրացրին Սերեօժային, և կարծես, ատելութեամբ լցրին նրան դէպի այդ անբարոյականութեան ու շռայլութեան խրախճանները:

Նա երբեմն երբեմն զբօսնելու ժամանակ խորասուզւում էր մտքերի մէջ, ինքն իրան հաշիւ տալիս իր անցեալի և ներկայի մասին, ու հետզհետէ նա հիասթափւում էր: Նա իր ընկերներին, ինչպէս օրինակ Գէորգուն, Սաշային, Սիսակին ու միւսներին համեմատում էր Պարտիզեանի և նմանների հետ, և ի՛նչ, որպիսի մեծ տարբերութիւն: Նա տեսնում էր մի կողմում դատարկապօրա, վայրահաչ և անբարոյական երիտասարդներ

— նոր սերունդ, իսկ միւս կողմում կրթուած, բարոյական ու ազնիւ սերունդ, որի ներկայացուցիչն էր համարում Պարտիզեանին: Ինքը օրին է պատկանում.— դժբալտաբար առաջին խմբին: Նա լիջում էր իր կարգացածներից, որ միշտ հակաբարոյական ուղիով ընթացող մարդիկ կամ զղջում են ապագայում, և կամ անձնասպանութիւն գործում: Չէ որ ինքն էլ անբարոյական է, նախանձ է, կրքոտ է, զուրկ առաքինի յատկութիւններից, չ'ունի համակրողներ, և եթէ ունի, դրանք էլ բոլորից արհամարհուած մարդիկ: Ինչո՞ւ չը լինել լաւ մարդ, խելօք մարդ, որպէսզի ընդունեն շրջանի մէջ, և ոչ թէ խուսափեն նրանից, որպէս մի թունալից արարածից, որպէս ժանտախտից: Վերջապէս ինչո՞ւ չը լինել Գրիշային ընկեր: Ի՛նչպէս սիրում է նրան ժողովուրդը, յարգում, օրհնում ու զօլում նրա անունը, և շատերն էլ լաւ լաւ կրթուած՝ ակշիկներ են առաջարկում նրան ամուսնանալու: Ինչո՞ւ չը նմանուիլ նրան:

Եւ երբ Գէորգուց ստացաւ մի նամակ, որի մէջ նկարագրում էր օրիորդ Փնջիկեանի եղբրական մահը, ապա Սիրունեանի մտաւանջութիւնից տկարանալն ու մաշուելը, Գրիշայի անտարբերութիւնը դէպի վերջինս՝ իբրև դաւաճանի, նա համարեա վայրկենապէս փոփոխուեց: Նրա ներքինում մի սուրբ կայծ ընկաւ և սկսեց բորբոքել,

տիրուպետել ամբողջ սիրտը և զտել զգացմունքները:

— Ինչո՞ւ մարդիկ իմ պատճառով պէտքէ մեռնեն կամ տանջուեն, մտածում էր նա այս նամակը ձեռին Կ... քաղաքից դուրս դաշտում նստած— ու միթէ՛ ես բռնաբարեցի օրիորդ Փնջիկեանին, մեռել է... ո՞հ, ես եմ այդ անխիղճը, այդ պիղծը. ո՞չ, ո՞չ, դա մարդկային գործ չէ, այլ ստոր քայլ:

Նրա ճակատը մռայլ կնճիւններով ծածկուեց, աչքերը կրակոտ դարձան, արտայայտութիւնը շարունակ փոփոխուում, շրթունքները ակամայից շարժուում էին: Իժուար չէր նրա երեսին կարգալը նրա ամբողջ ներքին աշխարհի փոթորիկը: Նա ձեռքը տարաւ ճակատին, սկսեց շփել, կարծես, ուղեւալով կնճիւնները հարթել և զգաց քրտնինք ճակատի վրայ. հանեց թաշկինակը և սրբեց:

— Ե՞ս դարձայ մահուան պատճառ այն օրինակելի օրիորդին, ա՛խ, սրիկայ եմ եղել ես:

Նա բռունցքով զարկեց իր կրծքին և լուռ մնաց մի երկու րոպէ՛ մտածմունքներով շրջապատուած: Բայց ուրիշ մի ներքին ձայն, որ նրան դրդել էր այդ քայլերն անելու, աշխատում էր կրկին մեռցնել արթնացած խիղճը և զղջման շեմքից լետ դարձնել նրան:— Ի՞նչ հարկաւոր է մտածել դրա մասին, չէ՞ որ ապրում ենք վայելելու ամեն ինչ, օրիորդ Փնջիկեանը մեռաւ, ուրիշներ շատ կան նրանից աւելի քաղցրները, լաւերը,

պէտք է աշխատել բոլորից ճաշակել. մեռնել կայ, մի օր էլ դու կը մեռնիս, հող կը դառնաս, այնուհետև ուրիշները քո հողի վրայ ման կը գան. կը վայելեն կեանքի քաղցրութիւնները:

Նա կրկին համեմատեց իրան Գրիշայի հետ, իր շրջանը— նրա շրջանի հետ և տեսաւ, որ նա ամեն բանով բարձր է կանգնած:

— Ի՞նչ եմ շինում ես այստեղ. ես հալածա՞կան եմ, ինձ կարող են բռնել, բանտարկել ցմահ՝ օրիորդ Փնջիկեանին սպանելուս համար: Արժանի եմ մահուան իսկ, երանի այժմս հենց գնդակահար անեն ինձ: Ես անազնիւ եմ, աւելորդ եմ մարդկանց համար և նոյնիսկ նրանց պարազիւր: Լաւ է յաւիտեանս մեռնել, քան թէ անմահանալ իբրև ստոր մարդ: Ո՛չ, ո՞չ, բաւական է, պէտք է այս դրութեանը վերջ տալ: Կը գնամ քաղաք և նոր ընթացք կը բռնեմ: Բայց ի՞նչ երեսով գնամ, յանկարծ նա ձեռքը շարժելով հարցրեց ինքն իրան: Չէ՞ որ ինձ կը բռնել տան Գրիշան, օրիորդ Փնջիկեանի ծնողները, ո՞չ, հարկաւոր է միջոց գտնել: Ձղջա՛լ, ներողութիւն խընդրե՛լ նրա ծնողներից, Գրիշայից, Համասփիւռից և բոլորից, որոնց ես խաբելով՝ վնաս եմ հասցրել: Բայց մի՛թէ ամօթ չէ ինձ, որ ես ներողութիւն խնդրեմ: Ո՛չ, ո՞չ, ինչ ուզում է լինի, չեմ կարող ներողութիւն խնդրել:

Գարձեայ լուեց նա միքանի ըոպէ և ձեռքը
դրեց ճակատին:

— Հապա օրհորդ Համասփիւռը ինչո՞վ է մե-
ղաւոր, որ այժմ տանջուամ է, որ անբարոյական
և կեղծ է ճանաչուած Գրիշայի կողմից: Ո՛հ,
Տէր իմ Աստուած, և դարձեալ ես եմ պատճառը:
Մթթէ նա մեղաւոր է, որ լինելով ազնիւ և սուրբ
աղջիկ, չ'ուզեց կրքերիս զոհ դառնալ, չ'ուզեց
իր սիրածին դաւաճանել, չէ՞ որ ես նրան անտա-
ռում մօտեցայ և կանգնեցրի, երբ Գրիշան վրայ
հասաւ, տեսաւ մեզ միմեանց հետ և կարծեց, թէ
ես ու Համասփիւռը նախօրօք ժամադիր ենք ե-
ղած: Խեղճ աղջիկ, իմ փոխարէն դու ես պատրժ-
ւում: Ոչ, այդպէս չը պէտք է լինի, բաւական է,
պէտք է վերջ դնել ստոր քայլերին: Ես կը գրեմ
Գրիշային, կը պարզեմ ամեն ինչ, կ'ասեմ, որ ես
եմ մեղաւոր, որ իսկապէս ես մի սրիկայ եմ եղել
և թող ինձ կամ պատիժ տայ և կամ մի ուրիշ
ճանապարհ ցոյց տայ, որ խղճիս խայթը հանգըս-
տանայ...

Ես ինչո՞վ եմ տարբերում նետխիւղովից,
յանկարծ նա հարցրեց ինքն իրան: Նա էլ գործեց
սրբապղծութիւն, ես էլ գործեցի: Դեռ նրանը ա-
ւելի ևս դատապարտելի է, քանի որ նա բարձրա-
գոյն կրթութեան տէր մարդ էր և իրան թող
տուեց մի կոյս աղջկայ անպատուել: Բայց վերջը
զղջաց ու քաւեց իր լանցանքը:

Նա մտածեց երկար, կնճռոտուեց, ուզենալով
իրօք թեթեացնել իր դրութիւնը՝ համեմատելով
իրան նետխիւղովի հետ:

— Բայց ոչ, նա ուրիշ տիպ է, նա շատ հա-
զուազիւտ և բացառիկ տիպ է: Ո՛ւր են իմ մէջ
նրա զգացմունքները, նրա ոգին, նրա կամքի ոյժը՝
չընկճուելու խոչնդոտներից ու վիրաւորանքներից:
Նա զղջալով դարձաւ հասարակական մարդ, օգ-
տակար՝ կարօտեալներին, աւելի քան սպասելի էր:
Ո՛չ, ո՛չ, նա շատ բարձր է ինձանից, նա միայն
հանճար մտքի ստեղծագործութեան արդիւնք է,
որին ես նմանուել միայն կարող եմ: Պէտք է
յայտարարեմ ծանօթներիս ու ընկերներիս, որ ես
այլևս նախկին Սերեօթա Աւելեանը չեմ, այլ փո-
փոխուած, գտուած մի ուրիշ մարդ. թէկուզ ծի-
ծաղեն վրաս, խելագար կոչեն: Միայն թէ ազատ-
ուեմ անազնութեան օխտի ճնշող կապանք-
ներից:

Նա այսպիսի մտքերով, ինքն իրան խօսելով,
արագութեամբ վեր ցատկեց տեղից, շտապով եկաւ
տուն, մտաւ առանձնասենեակ, վերցրեց թուղթ
ու գրիչ և Գրիշային գրեց մի նամակ: Նա գրում
էր գլուխը կորացրած, առանց վայրկեան իսկ կանգ
առնելու, և գրիչը արագ-արագ շարժուում էր
թղթի վրայ, երբեմն երբեմն ճրճրթալով, ձայն
հանելով, որ կարծես, նա էլ էր ուրախանում Սերեօ-
թայի դարձին, ու արագ էր սլանում թղթի վրայ:

և կարծես, գրչի այդ ձայնն էլ էր ոգևորում նրան
և նա աւելի զգացուած գրում էր առանց կանգ առ-
նելու:

Ահա վերջացրեց նամակը, ծրարեց և գլխար-
կը վերցնելով, արագութեամբ դուրս ելաւ տանից
և դիմեց դէպի պոստը. .



XV

Գրիգոր Պարտիզեանը, անջատուելով իր փայ-
փայած Համասփիւռ Սիրունեանից, աշխատեց բո-
լորովին մոռանալ նրան իբրև դաւաճանի, առանց
վրէժ պահանջելու: «Նա իմ ամենասուրբ զգաց-
մունքիս հետ խաղաց, ծաղրեց, բայց ես չեմ ու-
զում գրա փոխարէն վրէժ առնել, նա ունի խիղճ
և բանականութիւն, որոնք կը հատուցանեն նրան»
մտածում էր նա: Բայց Համասփիւռի վատ գրութեան
մասին լուրերը, որ բերում էին ծանօթ օրիորդ-
ները և աշխատում համոզել նրան, որ Համաս-
փիւռը դեռ սիրում է իրան, որ նա չէ դաւաճա-
նել, երբեմն լուրջ մտածել էին տալիս նրան:
Նա շատ անգամ է կամեցել ներել Համասփիւռին,
բայց լիջելով այն չարաբաստիկ գիշերը, երբ նա
անձամբ ականատես եղաւ դաւաճանութեան, ա-
տելութեամբ էր լցւում դէպի նա:

Երեկ էլ Համասփիւռի մայրն էր եկել, պար-
գելու ամեն ինչ Գրիշային և խնդրել, աղաչել, որ
թողնէ իր կասկածանքները և շուտով նշանուի ու
ամուսնանայ: «Աշխարհք իմացել է, որ Գրիշան
ու Համասփիւռը սիրահարուած են և շուտով նը-
շանուելու են, հիմա թնչ կ'ասեն, չէ՞ որ բամբա-
սանքների տոպրակները բաց կ'անեն» ասում էր
խեղճ կինը: Գրիշայի մայրը դարձեալ հակառա-
կեց, նոյնիսկ վիրաւորեց նրան: Բայց Գրիշան

սկզբում խնդրեց մօրը, յետոյ նոյնիսկ գոռաց չը խառնուել իր ամուսնութեան խնդրի մէջ: Մայրը տեսնելով, որ իզուր է իր դիմադրութիւնը, ձեռնները լուաց ասելով— «այժմ դու գիտես, ուզում ես քաղցած աղջիկ առ, ուզում ես կուշտ, ես իմ ծնողական պարտականութիւնս կատարեցի, աշխատեցի փողով, բաժինքով, անունով, աղջիկ առնել քեզ համար, բայց դու չ'ուզեցիր»:

Գրիշան միայն հեգնաբար ժպտաց այդ վերջաբանի վրայ: «Սյո՛, պէտք է լուրջ մտածել, մտածեց Պարտիզեանը դահլիճում մենակ նստած. —բայց մի՛թէ կարելի է ներել այն դաւաճանին, որ տեսայ աչքերովս և ականջներովս լսեցի, ատամները կրճտացրեց նա: Ո՛հ, աշխարհ, աշխարհ, ինչպիսի՛ բազմազան անըմբռնելի մարդիկ կան քո մէջ, և որպէ՛ս ընդունակ են նրանք կեղծելու, խարդախելու, որոգալթներ լարելու և յետոյ զղջալու: Համասփիւռը, որին իգէալ էի ճանաչում, դիմակաւորուած էր. Սերեօթան, որ մեծաձայնս բտրբռում էր, որպէս գրական մարդ, ամենայետին և փոանգաւոր արարածն է եղել. նոյնպէս և նրա ընկերները: Զը պէտք է մարդկանց հաւատալ, և չի գայ ժամանակ, որ մարդ կատարեալ—դրական լինի, ո՛չ, երբէք քանի որ մարդուս երակների մէջ հոսում է արիւնը, չար միկրօպները չեն ոչնչանայ նրա մէջ: Համասփիւռին ճանաչել էի, որպէս մարմնացած բարոյականութիւն և պարկեշտութիւն: Ո՛հ, դու չե՛ր, որ

ինձ սիրում էիր և ամեն անգամ ինձ տեսնելիս բերկրանքով էիր լցւում: Ուրեմն քո բոլոր քաղցր խօսքերդ, խոստումներդ և համբոյրներդ կեղծ են եղել: Եթէ ինձ դաւաճանելու էիր, էլ ինչո՞ւ սեղմեցիր քո կրծքին, ինչո՞ւ իմ սրտիս ամենաքընքոյշ և ամենաթանգ լարերը շարժեցիր»:

Նա վեր ելաւ տեղից և պատուհանը բացեց: Սշնանային սառն քամին մեծ ուժով ներս հոսաց և զարկեց Պարտիզեանի տաք ճակատին ու զովացրեց նրան: Նա կանգնեց, սկսեց նայել դուրս: Գիմաց կանգնած ծառի տերեւները խշշում էին: Գրանք արդէն դժգնում էին, որոնցից աւելի զեղնած ու թառամածները վայր էին ընկնում:

— Համասփիւռն էլ այսպէս թառամում է, հը՛... գլուխը տարուբերեց նա. բայց ինչո՞ւ, ո՞վ է մեղաւոր— խիղճը՝ ներքին գտաւորը՝ որ պատժում է նրան: Գուցէ նա տանջւում է Սերեօթի համար, որ նա իր մօտ չէ, անյայտացել է:

Նա կրկին նստեց աթոռի վրայ, ձեռը դրեց գրպանը, ոտքը ոտքի վրայ ու մնաց անշարժ: Բայց չէ՛ որ Համասփիւռին վաղուց է ճանաչում, գիտէ, որ նա ազնիւ և օրինակելի աղջիկ է: Նրա խօսքերը, համբոյրները, նրա վերաբերմունքը առ ինքն զուտ սիրոյ կնիք էին կրում: «Ո՛չ, այստեղ մի թիւրիմացութիւն կը լինի, ինչո՞ւ պէտք է խեղճ աղջիկը ինձ սիրելով մեռնի, իսկ ես արհամարեմ նրան, ոչ, ոչ դուցէ Համասփիւռը մեղաւոր չէ»:

Յանկարծ լսուեց զանգի ձայնը: Մի ըոպէից յետոյ մայրը խոժոռած դէմքով ներս մտաւ և մի ծրար տուեց ասելով:

— Նամակաբերը բերեց:

Գրիշան դանդաղ շարժումներով բացեց նամակը և սկսեց կարդալ: Սկզբում, ըստ իր սովորութեան, նայեց ստորագրութեանը, իմանալու թէ ումնքն է: Յանկարծ նա ալլալուեց և ուղղուեց աթոռի վրայ: «Սերեօժա Աւելեան. դեռ կենդանի է այդ սրիկան և վստահանում է նամակով խօսել ինչ հետ, կարգամ, թէ պատուեմ, բայց կարգամ, տեսնեմ, քնչ բան է, հետաքրքիր է, ասաց նա ինքն իրան և նայելով շուրջը ու տեսնելով, որ մայրը դուրս է գնացել, սկսեց կարդալ:

«Ազնուասիրտ Գրիշա!»

Գիտեմ, զգուանքով ու ատելութեամբ լի պիտի կարդաս այս նամակը, բայց խնդրում եմ, չը շարտես և մինչև վերջ կարդաս քեզ վայել մեծահոգութեամբ: Այն գիշերը, որ ինչ տեսարօրիորդ Համասփիւռի հետ անտառում և կառկածեցիր նրա հաւատարմութեանը դէպի քեզ ու հեռացրիր նրան, որ և այժմ տանջուում է, պարզն ասում եմ այժմ, ալլևս չեմ կարող թագցնել և կեղծել, խիղճս խայթում է... Ե՛ս եմ մեղաւոր, ես զանազան յետին Դպատակներով հետամուտ եղայ նրան և մօտեցայ, խօսեցի ու դեռ ես բերանս

չը բացած, նա ինչ զգուշացրեց... Յանկարծ գուեկար... Այո՛, մեղաւորը ես եմ, նա լիովին արդար է, նա քեզ սիրում է, իմ պատճառով միք դրժբախտանայ, բաւական է, որքան վնաս պատճառեցի մարդոց, նոյն իսկ սպանեցի... դու արդէն գիտես ամեն ինչ, բայց այսուհետև ո՛չ, էլ չի լինելու... ներիր, ազնիւ Գրիշա, քո մեծահոգութեան համաձայն և գրածներս ընդունիր մաքրուած սրտից բղխած: Դեռ շատ ունիմ գրելու, բայց արցունքները խեղդեցին ինչ... :

Սերեօժա Աւելեանց:

Վերջացնելով նամակը, նա երկար անշարժ մնաց նոյն պողպում, անթարթ աչքերով նայելով նամակին:

— Պարզուեց ամեն ինչ, մտածեց նա, ես իգուր եմ տանջում Համասփիւռին, նա արդար է եղել: Ո՛հ, անազնիւ մարդիկ, որպիսի որոգայթներ էք լարում և անմեղ արարածներին զոհեր դարձնում: Զղջացել եմ, հա՛, արդէն կրքերդ բաւականութիւն ստացել են, յոգնել են շղերդ: Այդ էլ ուրախալի է, որ գոնէ զղջացել ես, յետ ես դարձել կործանիչ շաւղից: Բայց անմեղ աղջիկը, որ արդէն մաշուել է, այն իմ սիրելի Համասփիւռը, այն օրիորդների թագն ու պսակը, անխ, սիրելիս, միթէ թիւրիմացութեան զոհ ես դառնում: Գնամ, գնամ, ըոպէ չը պէտք է կորցնել, նա իմն է. ասաց Գրիշան նամակը ծալելով— և անմիջապէս

վեր թռաւ տեղից, վազեց միւս սենեակ, վերցրեց գլխարկն ու դուրս ելաւ առանց պատասխան տալու մօրը, որ հետաքրքրութեամբ հարցնում էր շարունակ:

Տասնուհինգ րոպէից լետոյ նա բաղխեց Սիրունեանցների տան դուռը:

Տիկին Սիրունեանը դուռը բացեց և տեսնելով Գրիգորին, շատ ուրախացաւ:

— Համեցէք, համեցէք, որդի, ներս արի, տես, քո Համասփիւռն թնչ օրն է ընկել, ասաց նա ձեռքից բռնելով և ներս առաջնորդելով:

Գրիգորի սիրտը սկսեց բաբախել ուժգնութեամբ, արիւնը եռաց երակներում և ջերմը պատեց նրա մարմինը: Սրգեօք թնչպէս տեսնէ Համասփիւռին, այդ անմեղ դատապարտուածին, թնչպէս նայէ նրան և ներողութիւն խնդրէ, որ մուտրուել է: Այսպիսի մտքերով նա ներս մտաւ:

Մահճակալի վրայ շորերը հագած նստած էր Համասփիւռը: Տէր-Աստուած, միքանի ամսուայ մէջ թնչպէս փոփոխուել, ի՞նչպէս թառամել է խեղճ աղջիկը: Ո՛ւր են նրա վարդագոյն այտերը, լիքը երեսը, ուրախ ու կրակոտ արտայայտութիւնը: Նա տեսնելով Գրիշային, ձեռքին բռնած ընթերցանութեան գիրքը մի կողմ դրեց և լուռ նայելով սրան, որ շփոթուած կանգնած մնաց իր տեղում, միայն խորհրդաւոր կերպով ժպտաց:

— Ի՞նչ է, ամաչում էք միմիանցից, թէ նոր

էք տեսնում իրար, թնչ էք սառած մնացել, ասաց մայրը նայելով երկուսին էլ:

— Համասփիւռ, բարեւ, թնչպէս ես, ինչո՞ւ ես այդպէս նիհարել, հարցրեց Գրիշան մօտենալով և բռնելով նրա քնքոյշ նիհար թաթիկը:

Մայրը զգալով, որ իր ներկայութիւնը միայն խանգարում է նրանց պարզ խօսելուն, մի մահանայով դուրս ելաւ:

— Բայց դու նոյնն ես, Գրիշա, չես փոխուել, արտասանեց թոյլ և լուզիչ ձայնով Համասփիւռը, նայելով նրա աչքերին:

— Ո՛չ, Համասփիւռ, ես էլ եմ փոխուել, բայց ոչ թէ ֆիզիքապէս, այլ հոգեպէս: Եթէ նոյնը լինէի, չէի գալ, բայց... չը վերջացրեց խօսքը և մի խոր հոգեօց հանեց:

— Նստիր, հոգիս, նստիր մօտս, մի կանգնիր ոտի վրայ: Ատա, թէ ի՞նչպէս դու եկար այցելութեան քո դաւաճան ընկերին, ասաց նա նազելի, բայց ակամայ ժպիտով:

— Մոռացիր, սիրելիս, ամեն ինչ, ես մուտրուած եմ եղել: Մենք երկուսս էլ մեր ընկերների անաղնուութեան և նողկալի կրքերին զոհ պիտի դառնայինք: Այո՛, մարդիկ են միմիանց համար գերեզմաններ փսրում կեանքի ասպարիզում և որոգայթներով մէջը գլորում: Գու՛ մեղաւոր չես, մեղաւորը Աւելեանն է և ապա ես, որ մուտր

ուեցի, ասաց նա, մօտ նստելով և բռնելով նրա ձեռքը:

— Մի՛թէ ես կը դաւաճանեմ իմ սիրած Գրիշայիս, մի՛թէ մի ուրիշի հետ ծածուկ յարակցութիւն կ'ունենամ, լաւ կը լինի, եթէ այնպիսի բոսայէին կայծակը զարկէ ինձ, կամ գետինը պատրուռի և ինձ կլանէ: Գժբախտաբար դու ինձ չես ճանաչել, չես ըմբռնել, ասաց նա և գլուխը խոնարհեց:

— Սխալուել եմ, հոգիս, մեղաւոր եմ, այժմ լաւ եմ ճանաչեցի քեզ և մարդոց, այսուհետև մենք միմիանց ենք պատկանում ընդմիջտ, ասաց Գրիշան:

— Հը՛, ես արդէն ձանձրացայ ամեն ինչից, մի՛թէ կեանքս երկար կը լինի, գլուխը շարժեց Համասփիւռը և գիրքը վերցնելով, սկսեց թերթել: Տես, սիրելիս, ի՞նչ է ասում Շպիլհագէնը այս գրքում. — «Մենք անմիտ մարդիկ ենք, մենք երբէք գոհ չենք լինում բաղտին տիրելով, ինչ ձևով էլ որ նա մեզ տրուած լինի, այլ անպատճառ պահանջում ենք, որ այդ բախտը ընդունէ մեզ համար աւելի յարմար, որոշ ձև, բայց տարբեր ժամանակ-տարբեր բարքեր, տարբեր թռչուններ, տարբեր երգեր»: Այո՛, մենք էլ նոյնն ենք: Դու չը գնահատեցիր քեզ սիրողին, քեզ իդէալացնողին. դու ինձ պատահամբ տեսար մի ուրիշի հետ, իսկոյն անբարոյական կոչեցիր ինձ, աքացի տուիր, չ'իմանալով, թէ ի՞նչպէս մենք հանդիպե-

ցանք իրար և կամ ի՞նչ էինք խօսում: Դու ուզում ես, որ քո ապագայ կենակիցը հարեմական դրութեան մէջ լինի, չը խօսէ ոչ ոքի հետ, չը ժպտայ: Բայց չէ՞ որ այդ անկարելի է, և այն էլ դժւ, Գրիշա, դո՛ւ ես պահանջում այդպիսի յետադէմ կարգեր, որ քեզ չեն սազում:

— Այո՛, ճիշտ է ասում Շպիլհագէնը, բայց այդ մեր այս արկածին չի վերաբերում, ես սխալուել եմ, մի՛թէ մարդ չի սխալուում և ապա իր սխալները, յանցանքները զղջում: Ահա, կարգա այս նամակը, ասաց նա և ծոցից հանելով Աւելեանի նամակը, տուեց նրան:

Համասփիւռը սկսեց կարդալ. նրա դէմքի արտայայտութիւնն էլ սկսեց փոփոխուել: Նա այժմ համոզուեց, որ Գրիշան հասկացել է ամեն ինչ, համոզուել է իր արդարութեան մէջ և զըզջալով՝ եկել է ներողութիւն խնդրելու ի սրտէ:

— Տեսար, Գրիշա, ո՞վ է մեղաւոր: Բայց որպիսի՛ հրէշներ են եղել Աւելեանը և իր ընկերները, Յաւալի է, որ ունենք այդպիսի մատաղ սերունդ, ի՞նչ պիտի լինի ապագայում դրանցից:

— Ես ուզում էի դատարանի ենթարկել նրան և պատժել, բայց այն օրիորդը, որի հետ ծանօթացայ, մահուանից մի օր առաջ, խնդրեց ներել նրան, առելով, որ իր պատիւն արդէն արատաւորուած է, չի սրբուրի, իսկ Աւելեանի խիղճը երբևիցէ կ'արթնանայ և կը խայթէ նրա սիրամ:

— Ո՛հ, չար մտքե՛ր, արտասանեց համասփիւռը ու լռեց:

— Թող անցնի ամեն ինչ, հոգիս, ասաց Գրիշան, մենք շուտով կ'ամուսնանանք և մեր ամուսնական սիրալիր երջանիկ կեանքով օրինակ կը լինենք շատերի: Դէ՛հ, սիրելիս, հանգստացիր և ինձ ընդունիր իբրև քո նախկին Գրիշային:

— Ես մազաչափ անգամ չը խախտեցի իմ սիրոյս կայր քեզ հետ. ես նոյնն եմ դէպի քեզ: Գիտէի և համոզուած, որ դու ազնիւ ես, որ քո սրտի սէրն դէպի ինձ չի անյայտացել, այլ միայն կասկածանքի քօղով էր ծածկուել, որ ահա պատըռուել է այդ քօղը: Դու շատ տղամարդկանցից քարձր ես քո սրտով և մտքով: Ես յօժարակամ կապուում եմ քեզ հետ մինչև գերեզման:

— Ա՛խ, սիրելիս, որպիսի մեծահոգութիւն քո կողմից, ուրեմն մենք երջանիկ ենք, ասաց Գրիշան և ինստինկտաբար փաթաթուեց համասփիւռին, սա էլ փաթաթուեց նրա պարանոցին և նրանք բերկրանքով լի սկսեցին համբուրուել...

— Բայց մայրդ համաձայն է, հոգիս, հարցրեց համասփիւռը յետ քաշուելով, որ մի գուցէ մայրը ներս մտնի:

— Ոչ ոք չի կարող բռնանալ ամուսնական խնդրում մեր համոզմունքներին: Դու անհոգ եղիր, նա կ'ընդունէ քեզ սիրով, քաղցր կը վարուի քեզ հետ, կամ թէ արհամարանօք կը վերաբերուի դէպի քեզ, դու մի մտածիր այդ մասին, այլ որ-

պէս հասկացող աղջիկ, դու աշխատիր յարմարուել նրա ընաւորութեանը, եղիր տնտեսուհի. իսկ երբ կը բռնանայ քեզ վրայ, այն ժամանակ ես նրա համար առանձին բնակարան կը վարձեմ, կը տամ ապրուստը: Մի խօսքով, դու հանգիստ եղիր. նա էլ կը զղջայ իր յամառութեան համար:

Յանկարծ դուռը բացուեց և մայրը ներս մտաւ ուրախ դէմքով:

— Դէ՛հ, մայրիկ, օրհնիր մեզ իբրև ծնող և մաղթիր առողջութիւն ու երջանկութիւն համասփիւռի հետ:

— Աստուած օրհնէ, որդիք, բաղդաւոր լինէք, ուրախ, երջանիկ, յաջողակ, առողջ, սիրով մինչև մահ, թշնամու սրտով չը լինիք, երկար օրհնեց նա և երկուսին էլ համբուրեց:

Համասփիւռը, կարծես, ըոպէսպէս կազդուրուեց, նոր ոյժ ստացաւ, և սկսեց ուրախ-զուարթ խօսել ծիծաղել Գրիշայի հետ: Փոքր ինչ լետոյ ներս մտաւ նրա հայրը, որ նոյնպէս ուրախացաւ և օրհնեց երկուսին էլ...



XVI

Աշնանային ցուրտ և խաւար գիշերներէից մէկն է. օդը հանդարտ է և սառն. հրբեմն էլ քամին փչում է ու ծառերի դեղնած տերևները վայր թափում: Երկինքը մերթ ծածկւում է սև-սև ամպերով և աստղերի լոյսը քօղարկելով երկրից, խաւարը աւելացնում է, մերթ ամպերից ազատոււմ ու անհուն երկնակամարը բիւրաւոր ցոլացող աստղիկներով երևան գալիս ու գիշերը գեղարուեստական դարձնում:

Պարտիզեանների բնակարանը սաստիկ լուսաւորուած է ճրագներով: Սենեակները զարդարուն, մաքուր և չորս կողմում շատ աթոռներ շարած: Դռները բաց են և գաւիթը գոյնզգոյն լապտերներով լուսաւորուած: Սյդ գիշեր, Գրիշայի հարսանիքն է, նա ամուսնանում է օրիորդ Համասփիւռ Սիրունեանի հետ: Գրիշան հագած իր պաշտօնական զգեստը, դահլիճում ոտքի վրայ կանգնած, ուրախագէմ ընդունում էր հիւրերին:

Միայն մայրը ուրախ չէր որդու հարսանիքին: Նա կնճռոտուած և մռայլ դէմքով էր դիմաւորում հիւրերին, բայց սրանք չէին վիրաւորում, գիտենալով, որ որդու ամուսնութիւնն իր ցանկութեան համաձայն չէ, որ նա փող ու բաժինք էր ուզում...

Տասնեակ կռքեր շարունակ կանգ էին առնում դռանը և հիւրերը ներս մտնում: Հետզհետե

տէ հաւաքուեցան բոլոր հրաւիրուածները, մեծ մասամբ ուսանողութեան ընկերներէից և միջին դասակարգից: Կային երիտասարդ փաստաբաններ, ինժինեըներ, բժիշկներ, զինուորականներ, կըրթուած արկիւններ, օրիորդներ և ուրիշ շատերը: Բոլորն էլ ուրախ էին, զուարթ և անկեղծ բարեկամութեամբ սեղմում էին Գրիշայի ձեռքը, բարեմաղթութիւններ անելով: Մի ուրիշ դասակարգ էլ, թէև հրաւիրուած չէր, բայց եկել էր հեռուից նայելու և հրճուելու այդ հարսանիքի հանդէսին: Փողոցում, տան շուրջը, խոնուել էր ահագին բազմութիւն: Դա Գրիշայի մարդասիրութիւնը վայելած հասարակ դասակարգն էր, խեղճ մարդիկ, որոնց՝ երիտասարդ փաստաբանը ձրիապէս կամ շատ չնչին վճարով ազատել էր անտեղի դատապարտութիւնից, այլ և այլ նեղ դրութիւնից, խորհուրդներ տուել, միքանի կոպէկ դրամական օգնութիւն հասցրել:

«Ննորհաւոր ինի՛» «Աստուած բախտաւորեցնէ» «Փեսան էլ, հարսն էլ ջոկած են, ժամանակիս մաքրկանց նման չեն» լսում էին նրանց բերաններից: Երաժշտութիւնը հնչում էր, դղրդացնելով դահլիճը և արձագանքը տարածում լուռ շրջակայքը:

Հիւրերն երգում են, պարում, վիճաբանում և զուարճանում: Գրիգորը հոգով չափ ուրախ է և իր տրամադրութեամբ աւելի ևս ուրախ տրամադրում բոլորին: Կէս գիշերից անց էր: Դնացին

Հարսին բերելու: Միքանի ժամից լետոյ դրսում վառեցին բենգալեան գոյնզգոյն ճրագներ և երաժշտութիւնը նախերգեց նորահարսի գալուստը: Ահա և բերեցին Համասփիւռին, հագցրած նորահարսի սպիտակ շքեղ հագուստ: Նա թէև դեռ գունատ էր և նիհար, բայց իր արտայայտութեամբ և սպիտակ հագուստով նմանուում էր երկնային անմեղ հրեշտակի:


Ներս մտան: Գրիշան ու Համասփիւռը կանգնեցին միմիանց մօտ և վերջին անգամ քահանան խաչն ու աւետարանը համբուրել տալով, կասեց նրանց ամուսնական անքակտելի կապով:

Եւ ամուսնական սիրոյ ու ընտանեկան երջանկութեան հրեշտակն իր թևերը լայնածաւալ տարածեց Պարտիզեանների բնակարանի վրայ, առնելով նրանց իր հովանիի տակ:

Երբ Հարս ու փեսան ներս մտան և ուրախութեան աղաղակներն ու երաժշտութեան ձայներն աւելի զօրեղացան, այդ պահուն մի սևագրեստ երիտասարդ, առանց վերարկուի, ճեղքեց դրսից նայող բազմութիւնը, եկաւ, կանգնեց մի քանի րոպէ և սկսեց խելագարի հայեացքով նայել հարսանեաց տանը: Ապա նա մի խուլ հոգևոց հանելով, ասաց բաւականին լսելի ձայնով. «Այժմ հանգիստ եմ, որ նրանք հասան իրանց նպատակին: Իսկ ես մարդ չեմ, այլ մարդկութեան բեռ. մարդիկ ինձ ջնջել են իրանց ցուցակից և տեղի էս: Վերջացնելով խօսքերը, նա միքանի վայրկեան

էլ նայեց սառն աչքերով և լանկարծ, առանց այս ու այն կողմը նայելու, շտապեց դէպի գետը, անմիջապէս նետուեց ջուրը և մի ակնթարթում անյայտացաւ ջրի սառն ալիքների մէջ...

Դա Սերեօժա Աւելեանն էր...



Վ Ե Ր Զ



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



Faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through.

8978

2013

